



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10

1878

891.99
LP-79



891-99

12 MAR 2011

Ա-79

ՀԱՅ ՄԻԻԹԱՐԻ

ՈՂՈՄՊԻԱՆՈՒ

Ե Ի

ԵԶՈՎՊՈՍԻ

ԸՆՏԻՐ

ԱՌԱԿՆԵՐԸ.

Ռարգմանա-լիւն

ԽՈՐԷՆ ԲԱՀԱՆԱՑԻ ՄԻՐԶԱԲԵՎՍԱՆՑԻ

Բ Ա Գ Ո Ւ .

ՀԱՅՈՑ ԽԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ:

1878.

Գրաշար Լեւոն Տէր-Յովհաննէսեանց:

Доз. Цензурою. Тифлисъ. 25 марта. 1878 г.

# ՆՈՒԻՐՈՒՄԷ

ՀԱՅՍՏԳԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Ե Ի

ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ

ԱՇԽԱՏԱՆՈՒՄԻՆ

12 JUL 2013

44286

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն:

Մարդը մի յամառ, մի պատուասէր, մի աւելի կրքի տէր արարած լինելով, հեշտ չէր նորան համոզել, համարձակապէս ասելով նորա ամեն մի պակասութիւնը իւր ճակատին. այդ միայն կարողանումէր մասնաւորապէս մեծը, տէրը, իշխանը ասել իւր ստորադրեալին կամ իրանից նուաստին, որ այդ միջոցն ևս այնքան օգուտ չէր բերում: Իսկ բարեխիղճ նուաստը, իմաստուն ծառայն, հասարակ և աննշան՝ սակայն առողջամիտ և բազմափորձ մարդը ի՞նչպէս կարող էր վստահանալ իւր բռնասէր մեծին, տիրոջ, կամ իշխանին զգուշացնել, յայտնելով նորա ամեն մի պակասութիւնը: Ուրեմն ինչո՞վ արդեօք և ի՞նչպէս կարելի էր համոզել այդ խրոխտ և սնապարծ մարդուն ճանաչելու իւր պակասութիւնները, եթէ այդպէս դժուարութիւններ կային երկու կողմից ևս: Այո՛ իմաստուն մարդիկը գտան այդ հնարը միմիայն առակներով: Այն, ինչ որ առաջներով կարելի էր յայտնել և զգուշացնել թագաւորից սկսած մինչև յետին ռամկին, (առանց



58687-67

որոշելու հոգևորականը աշխարհականից, որ  
ամենեքեան ևս կիրք ունեցող մարդիկ են») անհնարին էր յայտնել և խրատել այլապէս:

Եղովպոսը իւր ստրկական նեղ վիճակում հալվում մաշվում էր տեսանելով տէրերի, մեծերի, իշխանների և բռնաւորների, նոյնպէս ծառաների, հպատակների և հասարակ մարդկանց դէպի միմեանց դէմ գործված խղճահակառակ և անբարոյական արարմունքը և զանազան նենդու պատիւը դաւադրութիւնները: Հալվում մաշվում էր ինքն, իսկ իւր կուրծքի տակ միմիայն բաբախում էր սարսափով ճշմարտութիւնը, որ չէր կարողանում համարձակապէս դուրս բերել չարագործներին և անխրատներին ապտակելու: Այս, որին և արդեւք էր լինում իւր ստրկական անազատ կեանքը, միայն այդ ճշմարտութիւնը առակներով կարողացաւ ՚ի լոյս հանել, որ ո՛չ պակաս օգուտ բերաւ մարդկութեան իւր ժամանակում:

Մեր Հայերի մէջ արդէն համարեա թէ հազուադիւտ են առակների պարունակութեամբ գրքեր, և եղածներն անգամ սակաւամասն և գրաբառ լինելով՝ մնումն շատ շատերին անհասկանալի:

Եւ որովհետեւ այժմ բաղձալի է ամեն մի բանիմաց և բարեմիտ Հայի սրտին տեսնել ազգային զրականութեան հարստութիւնը և մեր հին և միանգամայն ուշադրութեան արժանի ընտիր մատեանների գրաբառից աշխարհաբառութարգմանութեամբ. մատեանների, որոնք ժամանակի հետ անցնելով, հնանալով և մաշուելով օր ըստ օրէ հազուադիւտ են դառնում, և կարծիք չկայ, որ մի օր ևս կարող են սպառուիլ և անհետանալ. ուստի բաղձանքից ստիպուած ձեռնարկեցի և այս անգամ թարգմանել աշխարհիկ բարբառով 12-րդ դարու մեր ընտիր հեղինակներից մէկն այսինքն Գ՝ Մ Ս ի թ ա ը ը ն տիր և պատուական առակները, աւելացնելով նոցա հետ և Ո ղ ո մ պ ի ա ն ու պատուական առակների թարգմանութիւնս:

Գիրքը աւելի հարստացնելու նպատակով վերջում կազմեցի և մի յաւելուած Եղովպոսի ընտիր առակներից, և՛ նորա համառօտ կենսազրութիւնը և՛ այլ առածներ: Արոնց ամենի վերջում և մի բառարան կենդանիների և բոյսերի անունները աւելի բացայայտ կաշուցանելու համար:

Եւ եթէ դորանով կարողացայ փոքր 'ի շա-  
տէ ընթերցասիրութեան շարժառիթ և բա-  
րոյապէս օգուտ տալ ընթերցողներին, գոնէ  
մասամբ իւրք հասած կլինիմ նպատակիս:

Աղէիս խոնարհ ծառայ

Խորէն Կահանայ Մերկաբէգեանց:

1878 թ. Բագու.

ԳՈՇ ՄԻՒԹԱՐԻ ԱՌԱԿՆԵՐԸ:

1.



Ատուած արարածներին ստեղծելու ժամանակ վա-  
խեցաւ, որ մի գուցէ հակառակութիւն լինի,  
խառնեց ծանրը թեթեւի և ախարը զօրեղի հետ, որ  
եթէ հակառակ լինին միմեանց հետ լինին և ոչ Արարչի հետ:  
Առակովս թագաւորներին խրատումէ կարգել մեծամեծ-  
ներին և նուաստներին միմեանց դէմ, որ ոչ թէ թաղաւոր-  
ների՝ այլ միմեանց հետ պատերազմեն:

2.

Փափագեց երկինքը խոնարհիլ, որպէս թէ այդ ամեն-  
ներին ցանկալի է. բոյց վախեցաւ փառքից ընկնիլ, սակայն  
լուսաւորները այսինքն արեգակը և աստեղները լուսաւորեցին  
նորան:

Դորանով օրինակ է ցոյց տալիս փառաւորներին համար-  
ձակապէս խոնարհիլ, որովհետեւ նոցա հետ բնաւորված պա-  
տիւր չի թողուլ նոցա անարգվելու:

3.

Արեգակը կարծեց իւր բարձրանալու ժամանակ՝ թէ Աս-  
տուած է ինքն, բայց երբ խոնարհելով մտաւ երկրի տակ, այ-  
նու հետե ճանաչեց իւր բնութիւնը:

Օրինակ է ցոյց տալիս, որ անմիտ թաղաւորներէց ոմանք յաղթութեան փառքով բարձրանալու ժամանակ՝ կարծուակն իրանց Աստուած. զերեզման մտնելու ժամանակ՝ ճանաչուակն իրանց բնութիւնը:

4.

Լուսինը իւր լոման ժամանակ իրան արեգակ կարծեց, որ բնն և կարող էր ցերեկով լոյս տալ, բայց երբ լոյսը պակասեց, զիշերն ևս չկարողացաւ լոյս տալ:

Գորանով յանդիմանում է նորանց, որոնք մէկ պատուի հանդիպած ժամանակ՝ կարծում են իրանց մեծամեծ փառքի հասած, բայց յիմարանալու ժամանակ՝ իրանց ինչ որ ունին, այն ևս չեն կարողանում վայելել:

5.

1 Մի ժամանակ աստեղները հաւաքվեցան միասին խորհրդի, որոնցից աւելի ծերերը ասացին. «Մենք շատ շատ ենք. ինչո՞ւ ցերեկ ու գիշեր չենք կարողանում լուսաւորել արեգակի և լուսնի նման:» — Որովհետեւ միաբանութեամբ չենք վարվում, պատասխանեց մինը: Խոնարհեցան միաբանութեամբ, որ ամենից առաջ հերքեն փախցնեն արեգակին, բայց երբ ծագեց լուսինը, յաղթվելով նոքա ասացին «Եթէ մենք դորանով մթնացանք, սպա ի՞նչ կլինիք արեգական ծագելու ժամանակ:» Զղջալով խոստովանեցին նոքա իրանց զբարատութիւնը:

Երատում է աւակովս, որ ակարները թէ և շատ լինին, հզօրին յաղթել չեն կարող: Խոհեմութիւն է ակարովք փորձել և զղջալ, որ թողութեան ևս արժանի է:

6.

Երկիրը սարերի բարձրութեան նայելով՝ համարձակեցաւ երկինք լինիլ, բայց չկարողացաւ լուսաւորները իւր տակն առնել երկինքի նման և լուսաւորել:

Գորանով յանդիմանում է աշխարհականներից ոմանց, որ փքուելով իրանց հարստութեամբ՝ կամենում են բարձր հոգևորականների պատիւը խլել. բայց լուսաւորվում են քան լուսաւորում, ինչպէս երկիրը լուսաւորվում է, քան լուսաւորում:

7.

Տունկերի մէջ խորհուրդ եղև, թէ իրանցից որին արժան է թաղաւորացնել. ոմանք ասացին, արմաւենին բարձր է հասակով և քաղցր պտուղներով. նորան թաղաւորացնենք մեր վերայ. բայց որթը հակառակելով ասաց. «Ես եմ որակաւ թիւն պատճառողը, ես պէտք է լինիմ թաղաւոր. թզնին էլ թէ ես, որովհետեւ քաղցրաճաշակ եմ. դժնիկն էլ մի կողմից թէ ինձ աւելի յարմար է, պատճառ ես խիող ծակող եմ, մանաւանդ ոչ մի բանի ևս կարօտ չեմ:» Արմաւենին իմացաւ, որ չեն ցանկանում իրան թաղաւորել, ասաց, «Աւելի ինձ վայել է թաղաւորելը:» Ամենեքիան վիայելով ասացին. թէ «Գու բարձր ես հասակով և քաղցր պտղով. բայց երկու բանով պակաս ես դու, մեր ժամանակում պտուղ չես տալիս, շինութեան ևս չես յարմարվում, մանաւանդ թէ բարձրութեանդ պատճառով շատերը չեն կարողանում պտուղներդ վայելել:» Արմաւենին պատասխանեց, ձեզ իշխաններ կկարգեմ և ապա կթաղաւորեմ, երբ կհասնէ իմ ժամանակը ձեր որդիների վերայ կթագաւորեմ: Եւ չինեց թաղաւորութեան կարգ կանոնը այսպէս, որ որթը լինի վինուպեա, թզնին հիւպատոս:

(փաշայ, կոնսոլ) դժնիկը դահճապետ, նոնենին բժշկապետ. պտուղներից ևս ոմանց պահպանելու համար. մայրերը (շամ ծառ) շինու թիւններ շինելու, անտառները այրելու, և մորենին մոշի քոլ) բանտ շինելու համար. այսպէս կարգադրեց ամեն մէկին մի դործի մէջ:

Առաջին իմացվում է, որ ոչ ոք չէ կարող փառաւորվիլ առանց անփառաւորների և ոչ բարձրանալ առանց անարդների:

8.

Գարնան ժամանակ երբ կոտորեցին որթու որդիները, սխաւ նա սուգ անել և լաց լինել. ավենայն տունիկերը ժողով-վեցան նորան մխիթարելու. եկաւ նոցա հետ և մորենին: Այս էր նոցա մխիթարութեան խօսքը, «Մի՛ լաց լինիր, ասումէին, դարձեալ կճնանիս որդիներ» — ճշմարիտ է կճնանիմ, բայց դարձեալ կկոտորեն. այդ ի՞նչ մխիթարութիւն է. միայն այս է իմ մխիթարութիւնը, որ իմ մնացեալ որդիները պողպար են լինում և մարդկանց ուրախութիւն պատճառում: Իսկ մորենին ասումէր. «Յիկ եմ քեզ մխիթարելա, որ ինձանով աչքերիդ արտասուքը սրբես» — Շնորհակալ եմ այն անկազոր-ծից, պատասխանեց որթն, որ խլում է քեզ իմ արմատից:

Դորանով յայանումէ, որ մարդ մի առ ժամանակ է մխի-թարվում մնացեալներով, որովհետեւ մահկանացու է մարդկան աղղը. բայց ճշմարիտ մխիթարութիւն այն է, որ Տէրի կամ-քովը լինին մնացեալ ժառանգները Յիմարների խօսքը աւելի նեղացնումէ քան թէ մխիթարում սգաւորներին մորենու նման. նա — սղաւորը շնորհակալ կլինի չտեսնել ամենին յի-մար մխիթարիչներին:



9.

Մորենին ոխ պահելով որթու հետ՝ հակառակաբար ա-տայ թէ «Քեզ նման բարձրանումեմ և զոյգ զոյգ պտուղ եմ տալիս, դեռ քեզանից աւելացնումեմ, ձմեռն ևս անթառամ եմ մնում»: Որթն շուտ նորա բերանը կապեց ասելով թէ «Քո պարծանքը այն ժամանակ կլինի կատարեալ, երբ աշնան քեզ ստի տակ կօխ կտան»:

Դորանից պէտք է սովորած, որ յիմարութիւնը յանդի-մանելու ժամանակ պէտք է լռել, ոչ թէ ձեւանալ երկրորդ անգամ կատարելու:

10.

3 Նոնենին և թղենին միմեանց հետ կամեցան սէր անել և քաղցրութեամբ հաւասարվեցան. բայց նոնի թթուութեան վերայ զղուելով թղենին՝ քանդուեցաւ. դաշինքը:

Զգուշացնումէ առաջին, որ սիրական բարեկամները ա-ռաջ պէտք է միմեանց բարբը փորձով իմանան, ապա թէ ոչ, շուտով կքանդուի սիրոյ կապը:

11.

Միմեանց նախանձուեցան տանձն ու խնձորը, որոնք միմեանց հետ եղբայր էին. այդ էր ասում տանձը թէ. «Մենք հարազատ լինելով, ինչո՞ւ թագաւորները քո ձեռովն են ստի խնձոր շինելով նկարում ձեռքում» — Որովհետեւ բոլորատե-սակ եմ և անուշահոտ, և եթէ չնախանձուիս այնպէս կա-նեմ, որ և զու լինիս ինձ հետ հարուստների սեղաններում, թէ և դու ստի ոչ ննախութիւն չես ունենալ: Նա տակաւին

նախանձումէր, մինչև որ ընկաւ խոզերի առաջ:

Գորանով օրինակ է ցոյց տալիս, որ անարդ կղբայրը չը պէտքէ նախանձուի կղբօր փառքի վերայ, որ մեծարվումէ մեծամեծներից. նա նորա շնորհքից ևս մասն կվայելէ. բայց եթէ յանդգնի, աւելի կանարգուի:

12.

Թղենուց հարցրին, թէ ինչո՞ւ համար քո ճիւղերը պէպի ցած՝ երկիրն ևս տարածում:—Որովհետև շատ թշնամիներ ունիմ ասաց նա, և ևս խոնարհվումեմ, որ մի՛ գուցէ ուսակոտոր լինիմ (ճիւղերս կոտորատուին). և մինչև իմ վերայ վեր բարձրանալը կշտացնումեմ նորանց, որ մոռանան չարութիւնը:

Այսպէս ևս խոնարհութեամբ և քաղցրութեամբ պէտքէ վարուիլ թշնամիների հետ, որ զիջանին իւրեանց բարքի դառնութիւնից և մոռանան չարութիւնը:

13.

Թթենին և ձիթենին միմեանց հետ կամեցան խնամութիւն անել. նորանցից ամեն մէկը պարծենում էր իւր զօրութեամբը. ձիթենին իւր ուռձացած ու պողաւէտ լինելուն վերայ, մանաւանդ որ իւր պտուղը ձէթի նիւթ է, ձէթն էլ լոյսի, լոյսն էլ խաւար փարատող: Իսկ թթենին ևս պարծենումէր իւր պտղի քաղցրութեամբը, որ և իւր տերեւները մետաքսի (աբրեշումի) նիւթ են, որ զոյացնումեն շերամները (աբրեշումի որդն). որոնցից լինումեն թանկագին կերպաններ (աբրեշումի գործվածներ), որոնցով զարդարվում են թագաւորներ, իշխաններ և հարուստներ:— Ընդհակառակն, ասաց ձի-


թենին, թէ «Քո պտուղներն շուտով անցանումեն. քո այդ ասած հազուտար աւելի աստուոր է քան հարկաւոր, որ և զիշիր մարդ հանումէ իրանից, բայց լոյսը զիշիր ժամանակ վառվումէ:» Թթենին պատասխանեց, իսկ ցերեկը կարծիք չիայ, որ շիջանումէ:— Ձիթենին ասաց, թէ չէ շիջանում, այլ խառնվում է իւր ազդակցի այսինքն լոյսի հետ, բայց քո փառքը ծաղկի պէս շուտ թառամող և անցաւոր է:

Առակիս միտքը այս է, որ թագաւորական ազդը, թէպէտ փառաւոր է, բայց աշխարհային փառքերով է ճոխանում, որոնք անցաւոր են. դորա օրինակ է թթենին: Իսկ քահանայական ցեղը, որ թէպէտ աղքատ է, մեծապատիւ է հոգեկան փառքերով. ուրեմն արժան է և սորան դասել թագաւորական տոհմի հետ:

14.

Անփորձ տունկերից մէկը հարցնումէ նունենուց, ինչի՞ցն է որ շատ ծաղիկ ևս բերում, բայց չես պահում ամենը—Տընկողի աչքը ազահ է, պատասխանեց նունենին, իսկ ևս ծանրապտուղ եմ, իմ սոտերն էլ նուրբ, բայց եթէ նոքա կակուղ չլինէին, ամենեւին չէի կարող պտուղ վեր առնել, և եթէ շատ ծաղիկ չիմ պահում, նորա համար է, որ չկտարվիմ:

Առակովս յանդիմանումէ նորանց, որ կարողութիւնից և Ստեղծողի սահմանից դուրս պահանջումեն ծառաներից սպասաւորութիւն. նորանց ևս խնամք տանել հարկաւոր է, որ մի՛ գուցէ ուժից ընկնեն. նոյնպէս կլինին և հոգևորների մէջ, որոնց Աստուած խնամումէ:



15.

Միասին գանդատ արին սալորը, դամներ և ծիրանը թէ մենք ինչո՞ւ ատամներ ենք ստոցնում:—Ս,յդ բանը մենք չենք կարող իմանալ, ասացին ոմանք, այլ հմուտ բժիշկները կիմանան, որ մենք փնասակար ենք ստամոքսին, եթէ մենք այդպէս ենք անում և դարձեալ շատ են ուտում, ի՞նչ կանէին, եթէ մենք չատոցնէինք նոցա ատամները. ուրեմն մենք դորանով շնորհ պէտք է ունենանք և ոչ գանդատ:

Առակովս կամենումէ յայտնել, թէ չարութիւնը դառն է և ապականող հոգւոյն և առաջ գործելու ժամանակ խիստ վատ է. ակառորներն էլ կամենումեն, որ հեշտութեամբ դործուն մեղքեր և չարութիւններ, որոնք եթէ դժուարութեամբ են գործվում և այնքան ակտրտ են, ի՞նչ կանէին, եթէ հեշտութեամբ դործվէին. այդ բանը իմաստուններին է յայտնի, որ դահանայ հարկաւոր է խնամողից քան գանդատուիլ:

16.

Մի ժամանակ սխաւ դեղձը յանդիմանել սերկեկին, թէ դու դեղին ես անքով, և մարդկանց համար դժուարութեւի, իսկ ես բարետեսիլ եմ և քաղցրաճաշակ: Սերկելը պատասխանեց նորան, թէ դու կեղծաւոր ես ամենեւին և մարդկանց խաբող. ուտելու ժամանակ քաղցր ես երևում, բայց մարդի որովայն մանկով շատ փնաս ես տալիս. իսկ եթէ ես դեղին եմ, որովհետեւ ցաւակից եմ լինում հիւանդներին, նորանց տեսութիւն զնալով, ցաւերը փարատելով, ոչ թէ քեզ պէս հիւանդներէից հեռացած հալածված:

Առակիս միտքը այն է, որ կեղծաւորները միշտ ճշմարիտ-

ներին յանդիմանում են և ցոյց են տալիս նորանց իբրև խիստ և կոշտ վարքով, իսկ իրանց բարեպտուղ և վշտակից. բայց ճշմարիտների խօսքերը հողիների համար դեղ են, թէ և առաջին անգամ ընդդէմ են երևում, բայց նոցա հետ ցաւակից լինելով՝ փարատումեն նոցա հիւանդութիւնները:

17.

Տունկերը միասին սխեցին բամբասել ընկուզնուն և ասացին, դու ազահ ես և ամարդի, կծու և չար, և բերումես անուտելի պտուղ. —Չէ՞ որ և ես ձեզպէս եմ անում, ասաց ընկուզնին, ձեզանից ո՞վ է արդեօք ժամանակից առաջ պրտուղ տալիս:—Սեզանից ուտումեն դեռ խակ չհասած ժամանակ, իսկ դու ճիշտ պահումես մինչև վերջ:—Ես ամենքիմարդկանց և թռչունների համար արձակ եմ, ձեզպէս անխարդ կերպով չեմ տալիս. Այս ասելով արդարայաւ և ասաց, մանաւանդ ձեզանից շատերը անուտելի են լինում. իսկ ես ժամանակին բայց եմ թողնում իմ ազահութիւնը:

Տարակոյտ չիայ, որ բարեկարգ մարդիկ միշտ բամբասվում են արբշխ (ուտող խմող) մարդկանցից իբրև ժլատներ, բարի մտակարարութիւնը՝ պնդութիւն ժլատութիւն կոչելով և անխարդ ուտողներին յանդիմանութիւնը՝ դառնութիւն. բայց նա յարմար ժամանակին առատապէս տալով բարեմիտ է երևում և սորա համար շատ ապուցոցիւր ունի. իսկ վայրագոր մարդիկ անժամանակ վասնելով իւրեանց ինչքը, երբ ժամանակին չունին ոչինչ տալու, այն ժամանակ իմացվումեն, որ արբշխ իրանք են:



18.

Յիմարներէց մէկը յունապի ծառին դժնիկ կարծելով մի հա-  
բուած տուեց. բայց նա գայրանալով ասաց «ով անդո թ, անա-  
գորոյն, չէ որ տուելը պէտքէ ճանաչել պողից և ոչ տեսակից».

Առակովս զգու շացնու մէ առանց ընտրութեան և քննու-  
թեան գատողներին և եկեղեցւոյ առաջնորդներին յանդիմա-  
նելով նորանց, որ առանց վորձելու դատապարտուան, որ ձիշտ  
կարելի է լմանալ նոցա գործերից. որովհետեւ տէրն ինքն ա-  
սաց թէ «նոցա պտուղներից ճանաչեցէք նորանց, ոչ թէ կեր-  
պարանքից և կամ համբաւից. այդպիսով շատ վնաս է դոյա-  
նում. բարիին չարի տեղ չարչարելով նեղացնելով:

19.

Սօսի ծառի մտ երկրագործերը ջրումէին բամբակինի  
բոյսերին, և մեմեանց զգու շացնում շիխասակ բամբակինի ծա-  
ռերին: Սօսին այս որ լսեց, բարկացաւ չարացաւ. թէ ինչօ՞ւ  
են նորան ծառ անուանում. ի՞նչպէս կարող է դա ծառ կոչ-  
վիլ ինձպէս, որ ես այսքան հաստ եմ և բարձր և շատ տեղ  
եմ բռնում: Բամբակինին աներկիղ և յայտնի ամենեցուն  
պատասխանեց. «Գու հաստ ես և բարձր, բայց անօգուտ, ոչ  
չինութեան մէջ ես զովիլի. ոչ պտուղ տալում, և ոչ այրե-  
լում, միայն թանձր ստուեր ունիս և նորանով բամբասվումես  
քան զովիլում. իսկ ես թէ և խեղճ և տկար, բայց շահատէտ  
ոչ թէ միայն մեծատուններին այլ և աղքատներին, և՛ պահ-  
պանելու, և՛ քողելու և՛ գործելու ժամանակ, և վերջում  
լինում եմ հագուստ, ինչպէս ոչխարներից բուրդն է լինում,  
կտաւ հատից վ՛ւշո, շերամից մետաքսը. բայց դու դոցա-  
նից և ոչ մինը ունիս բաց ի վայրի խողակից (վայրի ծա-

ռի անպէտք պտուղ): Այս յանդիմանութիւնից յետոյ սօսին  
լռեց:

Առակովս յանդիմանումէ մարդկային սնտախ պարծանքը,  
որ ոմանք ունին տեսակով և կամ հասակով, սակայն պտտա-  
հուսմեն շատ անգամ, որ նոքա անօգուտ են լինում աշխար-  
հին. նոյնպէս և հոգեւորականներից, ոմանց արտաքին տեսքին  
նայելով, որ լինումեն տկար և կամ կարճ հասակով, որ հար-  
կաւոր են լինում մարդկանց, և խրեանց գործերից զովիլումեն  
այդպիսիները, իսկ սնապարծները խրեանց սնտախ գործերից  
յանդիմանվումեն:

20.

Մի անգամ ամեն տունկերը տրանջացին իրանց թա-  
գաւորի վերայ, որպէս թէ նա աչառու թեամբ (երես տեսնե-  
լով) բաշխեց ամեն մի պատիւը, որ ոմանց տանը բնակեցրեց,  
ինչպէս նարինջը. ոմանց բուրաստաններում (բախճաներում).  
ոմանց այգիներում, որոնք պատվումեն մարդկանցից, և ոմանց  
վայրի տեղերում, որպէս անարգ պտղաբերներ, որ և լինումեն  
խողերի կերակուր և կոխատվում գազանների ոտերի տակ. ո-  
մանց էլ անտառներում, ինչպէս մայր, սարդի և նոճի ծա-  
ռերին, և սոցա նմաններին, որոնց կտորումեն անխնայ և քարշ-  
քարշելով տանում կամ շինութեան և կամ այրելու համար  
Թագաւորը լսելով այս տրտուենքը կանչեց նորանց և սաստե-  
լով ասաց «Բուք չդիտէք, որ թագաւորի խորհուրդը և կամ-  
քը ամենքը չեն կարող իմանալ, ինչպէս և Աստուծոյն. և ի՞թէ  
այլ ևս յանդղնելու լինիք այդպէս զանգատել, սաստիկ կը-  
պատժուիք» նոքա վախենալով լռեցին:

Այս առակով մեզ ուսուցանումէ, որ խոհեմ և իմաս-

տուն լինինք, և՛ հուպանդ Աստուծոյն և՛ թաղաւորներին, և չորտնջիլ Աստուծոյ անպատմելի խնամքի և ոչ թաղաւորների ծածուկ խորհորդների վերայ. այլ ամեն գործին ու շք գնել, որովհետեւ տունկերի թաղաւորը ՚ի գուր չէ այնպէս կարգել նորանց. նոյնպէս և Աստուած և թաղաւորները ՚ի գուր չեն այդպէս տնօրինել, որ պողաբերներից սմանց այգիներում կարգեց, ոմանց բուրաստաններում, և ոմանց միատեսակներին անտառներում, այն պատճառով, որ զագաններին և անասուններին կիրախուր լինին, և ոչ թէ մարդկանց նեղութիւն պատճառեն իւրեանց տուած պտուղներովը: Եւ թէ ոմանք մարդկանց տնիւրի մօտ տնկուեցան, այդ նոցա գուարձութեան և անուշ հոտ բուրելու համար է. ունեցնելի (քթի ծակեր) կիրախուրը բուրումն է. իսկ տեսին՝ զուարճութիւնը ինչպէս և բուրաստանները և առողջութեան օգուտ: Բայց թէ անտառները շինութեան և այրելու համար են պատշաճ, այն ևս մեծ խնամքով. այդ այն պատճառով է, որ պողաբերներին մի՛ գուցէ կտորեն և գործ դնեն շինութեան և այրելու համար: Այսպէս և տնօրինումէ ծածուկ և անքննելի դատաստանով Աստուծոյ և թաղաւորի կողմից, բայց եթէ մէկը համարձակի ասել թէ, անկարգ է այդ տնօրէնութիւնը, կդատապարտուի:

21.

Մի կարօտ մարդ՝ ձմեռն ժամանակ գնաց դրախտ, որ պըտուղ քաղէ և ուտէ. բայց տեսնելով որ պողաբեր ծառերը գօտացած չորացածի պէս են, սխաւ թշնամանել տրտնջալ, մէկին և միւսին հարուածներ տալ ասելով ինչո՞ւ պտուղ չունիք, որ ուտեմ և կշտանամ, գո՞նէ մի հատ պտուղ ևս չունիք, այս ասելով աւելի չարանումէր: Ծառերից մինը քաղ-

ցրութեամբ և հաւանական խօսքերով ասաց. «Մի՛ տրտմիր ո՛վ մարդ և մի՛ ՚ի գուր բամբասեր, որովհետեւ դու մեղանչումես, թէպէտ դու կարօտել ես. բայց ինչո՞ւ չգիտես, որ ձմեռ ժամանակ մենք հանդատանումենք և արմատներով զօրանում, որ կարողանանք զարնան ժամանակ ծաղիկել, ամառն պըտուղներ սնուցանել և աշնան հասուցանել և կիրախիւլ. ինչո՞ւ դու այն ժամանակ չեկար, երբ մարդ, անասուն և զազան վայելումէին մեր պտուղները: Դու ամեն ժամանակ ամեն բանում պատրաստ ես ուտելու, բայց մենք ժամանակին կարող ենք պտուղ տալ. գնա՛ իւր ժամանակին կգաս, և որքան կամենաս կարող ես ուտել:» Այս լեւուց յետոյ գնաց հեռացաւ մարդը ապագային յուսով:

Առակովս խրատումէ հիւրերին և աղքատներին, որ անժամանակ գնալով մէկի տուն՝ պատիւ մեծարանք են խնդրում: Հիւրերը պատրաստ են ուտելու և հանդատանալու, նոյնպէս և աղքատները իւրեանց կարօտութեան պակասութիւնները լցնելու. բայց ամեն ժամանակ հիւրընկալները նոյնպէս և բարեգործ մարդիկը պատրաստ չեն կարող լինիլ, մինին հիւրասիրելու և միւսին ողորմութիւն տալու: Նոցա վերայ չարախօսելու և տրտնջալու համար չպէտքէ վառվիլ չարանալ. այլ քաղցրութեամբ պատասխանել և անպատրաստ լինելու պատճառը պատմել, ուրիշ անգամ ևս առատաձեռնութիւնը, որով շատերը հանգիստ և ողորմութիւն են գտել:

22.

Խոհեմներից մինը հարցրեց ծառերից, թէ ի՞նչէ պատճառը, որ որքան բարձրանումէք, այնքան խոր արմատներ էք գցում: Նոքա պատասխանեցին, եթէ դու խոհեմ ես, ինչ-


չ՞ու չգիտես, որ մենք եթէ խոր արմատներ չզցինք, չենք կարող այսքան ոստեր (ձիւղեր) վեր առնելով դիմանալ մի և նոյն ժամանակ հողմերի (քամիների) բռնութեանը: Տեսն՞ումես մեր եղբայր հաճարի և փիճի ծառերը, որ թէպէտ շատ ձիւղանի չեն, բայց և ընդիմանալ քամիներին չեն կարող, որովհետև խոր արմատներ չունին:

Առակովս խրատում է նորանց, որոնք կամենում են ուժորել հոգևոր և մարմնաւոր գործեր, որոնց հիւքը հաստատապէս պէտք է սկսած. հարկաւոր է հաստատութիւն ունենալ, որ յաղթելով ամեն մի փորձանքին՝ կարողանան պտղաբեր լինիլ, ապա թէ ոչ ծանծաղ և վայր 'ի վերոյ սկսելով գործը՝ շուտով կկործանվին, ինչպէս ուսուցանում է Տէրի առակը:

23.

Քաղցր և դառն նշանները թէ և մէկ մօրից ծնուած եղբայրներ էին, բայց չէին յարմարվում միմեանց իրիւանց հակառակ բնութեամբն. մին նեղանալով միւսի դառնութիւնից իւր համար եղբայր և բարեկամ արաւ կասկեւուն, տեսնելով որ նա երկու կողմից իրան բարոյակից է: Երբ որ նորան մեղադրեցին ուրիշները, նա ասաց, ով որ իմ կամքովն է, նա է իմ եղբայրը:

Յայտնի է առակիս միտքը. լինում են հարազատ եղբայրներ, բայց պատահում են, որ միմեանց ընդդէմ են լինում բարքով, որից ստիպուած բաժանվում են միմեանցից, ուրիշ բարոյակիցներին լաւ համարելով, և թէպէտ մեղադրվում են նախ, սակայն ոչ ոք չէ կարող արդարանալ նոցա վերայ:



24.

Մեծաբանելով սնափառումէր կաղնին և կոչում իրան թաղաւորայն իւր հզօր զօրութեան և հասակի պատճառով: Եւ կարծում որպէս թէ Վիբանանումն\*) է բնակվում հսկայազօր. և մտածումէր ամենքին ոտնակոխ անել. բայց արքայապաշտին համբերութիւնից դուրս գալով՝ յանդիմանական խօսքերով վարվեցաւ դէպի նա, ասելով «Քեզպէս շատերը կան, բայց չեն պարծենում, այլ և թաղուն չեն մնում նոցա փառքերը. նոքա զովվում են իրանց պտուղներով աւելի քան հասակով. դու ինչ՞ու այդքան համարձակում պարծենումես. ես ևս մի բան չեմ. բայց մարդիկ իմ պտուղն ուտելով ինձ ևս յարգում են, իսկ քո պտուղները միայն խոզերին են պէտք»: Այս ասելով կասեց նորա բերանը:

Առակովս խրատում է սնապարծններին, որոնք պարծենում են իրանց ազգի, տեսակի և զօրութեան վերայ, նորանց, որոնք չեն ուսանում իմաստունից, որ ասում է, «Թ՞ող քեզ քո ընկերը

\*) Վիբանան սարի անուն է, (այդ անունով կոչվում էր եւ զուառը). կոչվում էր եւ Վիբաններ, կամ աներ լիբանանու, որ տարածվելով ձգվում էր Ասորոց ծովից Սիդոնի, արեւմուտքից դէպի արեւելեան կողմն մինչեւ Արաբիայի աննպատը, եւ հօրաւից դէպի հիւսիս դամասկոսի կողմում, եւ սահմանում էր հիւսիսային կողմից Աւետեաց երկիրը Ասերայ եւ Նեփթաղիմայ ցեղի սահմանների մօտ: Այդ տեղ բնակվում էին հին ժամանակում Խեւացիք (Քամի որդի քանանու ազգից). տես Գատ. 5. 5: Այդ տեղ լինում էին եղեւնափայտեր եւ մեծամեծ մայրեր (շամաղսնի): Դաւիթ Մարգարէն արդարների համար հետեւեալն է ասում. «Արդարներն արմաւենու (խուրմի ծառի) պէս կծաղկին եւ Վիբանանու մայրերի պէս շատ կլինին»: Իսկ ամբարիշտների համար թէ. «Տեսի ամբարիշտն վերացած եւ բարձրացած Վիբանանու մայրերի պէս: Կրկին անցայ, եւ չտեսի, խնդրեցի մտն եկոյ գտնելու, բայց չգտնուեցաւ նորա տեղն անգամ: Եսնօթ. Քարգմ.

գովէ և ոչ զուս Այգալիսները իրանց պակասութիւնները թէ և թագցնումեն, բայց իմացողներից կյանդիմանու ինչ Նորա, որոնք յանդիմանվումեն այգալիսի սնապարծներից, աւելի լաւ են իրանցից և կլինին ընդունելի մարդկանց. իսկ իրանք աւարդ և ծիծաղելի և կարհամարհվին մարդկանցից:

25.


Միմեանց մօտ գանգատուեցան ցարասին և հաւամբողին. թէ և դոքա տունկեր էին, սակայն պակասամիտ էին, որոնք տրտնջելով ասումէին. ինչո՞ւ մրտին տեսքով և վարքը խեղճու թեամբ մեզ նման լինելով այնքան յարգվումեն, մինչ զի հարուստների տուներումն են լինում և եկեղեցիներումն անգամ. իսկ մենք անարգ գործիներ ենք լինում՝ տուների աւելորդները և հրապարակները մաքրելու համար: Այսպէս խօսելով նոցա անուշահոտութիւնը և բժշկութեան պէտք լինիլը թագցնելով միայն իրանց նոցա հետ համեմատութիւնն էին առաջ բերում և շարախօսութիւնն աւելացնում:

Այս է առակիս միտքը, որ կրօնաւորներից շատ նորամուտները երբ որ իրանց պատշաճին համեմատ խոնարհ հասարակ գործ են որոշում, սկսումեն քրթմնջել նեղանալ թէ մեզ նման ուրիշ կրօնաւորներ ևս կան, ինչո՞ւ նոքա պատիւ են ստանում և պարկեշտ գործի մէջ քնում. իսկ մենք այսքան անարգութեան մէջ, և ոչ մի պատիւ չենք ստանում: Այսպէս ասելով նոցա պատուի արժանի վարքը թագցնումեն: Կգտանուին քահանաներ, որոնք կունենան իրանց Տէրի վարքի նմանութիւնը վարդի նման, ոմանք ևս մանկութենից աւաքիտութեամբ և կուսութեամբ անուշահոտ լինելով մրտի նման. իսկ ինքեանք մոռանալով իրանց վարքը և բարքը՝ իզուր շարախօսումեն:

26.

Բոյսերը տեսան, որ լաւ կարգաւորութեամբ են կառավարվում տունկերը իրանց թագաւորութիւն հաստատելով, նախանձեցան նոցա վերայ, և այնուհետեւ կամեցան իրանցից հաստատել թագաւորութիւն. ուստի ոչ պակաս հակառակութիւն եղև նոցա մէջ, որովհետև ոմանք ասումէին շուշանին կարգենք թագաւոր, ոմանք ակրիզանին, և շատերը համասպրանին ցանկացան. վերջապէս ամենքը հաւանեցին, որ համասպրանը լինի այսպիսի եղանակով. երկիրը տասներկու մասըն է, համասպրանն էլ տասներկու ոստ (ճիւղ) ունի, պէտքէ նա լինի թագաւոր, որ ամեն աշխարհին տիրէ: մանաւանդ թէ նա բժշկութեան մեծ զօրութիւն սնի, հիւանդներին կրբժշկէ և ուրիշներին քաջատես կառնէ. ծովի վերայով գնալ կաայ և յիմարներին իմաստութեամբ կլցնէ: Այսպէս ամենքի հաւանութեամբը թագաւորեց համասպրանը, և կարգեց այնուհետև նոցա կարգեր այսպէս.— Ար լինին բնաբոյս ծաղիկները զբօսանքի և բժշկութեան համար. կանաչ բանջարները ուտելու և պահպանելու համար, նոյնպէս և ամեն սերմերը, և զարդարեց ամեն բանով իւր թագաւորութեան տունը ամենքին ուրախութիւն պատճառելով:

Առակիս միտքը այսպէս է իմացվում:—Մարդկան ազգը տեսնելով երկրաւոր թագաւորութիւնը ըստ կարգին, խնդրումէին և երկնաւոր թագաւորութիւն. բայց ոմանք կարծեցին արեղակն, ոմանք լուսին և ոմանք ուրիշ շատ բաներ: Սակայն երբ երեւեցաւ Աստուծոյ Բանը, որ և կարգեց տասներկու Առաքեալներ, և արաւ շատ հրաշքներ և բժշկութիւններ, այն ժամանակ ճանաչեցին ճշմարիտն, որ նա կլինի թագաւոր աշխարհի: Ար և իւր թագաւորութեան ժամանակ ու



մանց կարգեց աւետարանիչներ որպէս ախրիզանն, որ երեք տեսակ կենդանութիւն ունի իւր արմատներում, որ և նա բնաւորական և զբաւորական զօրութիւն ունի իրանում. ոմանց հովիւներ և վարդապետներ հոգւոյ զբօսանքի և բժշկութեան համար. նոցա խօսքերը իբրև կերակուր, սերմեր, խորհուրդ և միտք: Իսկ շուշանի կերպարանքով կարգեց համայն եկեղեցիները Աւետարանի իմաստութեան տակ ծաղկած որպէս Նփրատէս և այլ գետերի մօտ: Մեծ ուրախութիւն եղև ամենքին, երբ նա թագաւորեց:

27.

Բոյսերից ոմանք կամեցան իմանալ սովորել թէ ինչո՞ւ մեր թագաւորը այնքան թաղցնումէ իւր անձն, բայց ուրիշներինը այնպէս է արել, որ հեշտութեամբ պատահին մարդկանց և բժիշկներին: Նորա համարեա թէ երեսուն օրերը յայտնի չեն, թէպէտ ուրիշ ժամանակն ևս անգիտելի է. և բժիշկներից գտնուելով, այնուհետև վարվումէ ինչպէս պէտքն է. իրա ձեռի տակ ծածուկ պահումէ և ախրիզանին, որ նշանի լուսով գիշերն է գտնվում: Նա իմանալով նոցա խորհուրդը ասումէ. գիտէ՞ք, միանգամայն անյայտ չեմ լինում, այլ երևումեմ աղօթքով և պահով խնդրողներին, նմանապէս և ախրիզանին, որ չարհամարհվիք հեշտ գտնուելով: Սորանից յետոյ նոքա սովորելով ուրախ էին լինում գոհութեամբ:

Առակիս միտք այն է. տարակուսելի է ոմանց Քրիստոսի խորհուրդը որ երեսուն տարի անյայտ մնաց և յետոյ յայտնուեցաւ բժշկութիւններ անելով Առաքեալների հետ. այս գիտելին է, թէ և անժամանակ. իսկ ուրիշ սուրբերի բժշկութիւնները ընդարձակեց տարածեց իւրեանը ծածկելով իրա

հետ անյայտ արաւ և Աւետարանը զիշեր ժամանակ յայտնուով. իսկ ուրիշ խորհուրդը առաջուց իմանալով սովորեցրեց թէ ամենեին չեմ ծածկվում ինչպէս զիտէք, այլ աղօթքով և պահով խնդրողներին երևումեմ, և այս յայտնի է, այնպէս և Աւետարանի միտքը աղօթքով և պահեցողութեամբ և սրբութեամբ ենք գտնում, որ հեշտութեամբ գտնելով Հրէաների պէս չարհամարհեք. ամենեին անտես ևս չմնաց, որ անյայտ լինելով չարամեք, այլ սորանով ուրախացած գոհանանք:

28.

Գարնան ժամանակ ոմանք երանի էին տալիս մանիշակի գեղեցկութեան. նա ևս ճշմարիտ կարծելով այդ, որ լուսմէր յիմարներից, հրեշտակ ուղարկեց շուշանի մօտ, որ իւր հետ բարեկամութիւն անէ իւր նման լինելու պատճառով, որովհետև նորան զովողները ասել էին թէ դու շուշանի նման ես. Շուշանը նորան պատասխանեց. «Եթէ դու այժմ ծաղկած զարդարվուես, ես դեռ չորացած անյայտ եմ մնում. ների՛ր ինձ, մինչև որ ես ևս ծաղկեմ»: Մանիշակը մինչդեռ սպասումէր, մի քանի օրից յետ թաւամեցաւ և չորացաւ: Շուշանի ծաղկելու ժամանակ մանիշակն ամհետացաւ:

Այդ առակով յայտնումէ, որ մարդկային փառքը սնտոի է, թէպէտ անմիտները երանի են տալիս և կարծումեն թէ յաւիտեանական է, և՛ առաքելի և սուրբ մարդկանց ունեցած փառքի պէս է և իւրեանցը, և թէ իւրեանց փառքովը կարողեն նոցա փառքի հետ մասնակից լինիլ. բայց մինչև նոցա այսինքն սուրբ և առաքելի մարդկանց փառքի ծագելը՝ իւրեանցը անյայտ կլինին մանիշակի պէս:

29

Փեննա իւր անձնը սրբասէր էր համարում, ուստի և զոռոզանուակեր, որպէս թէ և յաղթումէր դեերին, չիմանալով որ իւր թագաւորովն է զօրանում. իւր շնորհը թագաւորի մէջ ամփոփելով՝ ինքն անպէտք գտնուեցաւ շատերից, որովհետեւ ամեն ծաղիկներ բժիշկներին պէտք էին գալիս, իսկ նա ամենեւին ոչ:

Առակիս միտքը այն է, որ ոմանք քահանաներից և կրօնաւորներից գոռոզանում հպարտանումեն, երբ տէրը նոցա ձեռքով բժշկութիւն է անում, մոռանալով, որ ոչ թէ իրանք, այլ Տէրի շնորհն է կատարողը, որ իրանցումն է. բայց երբ Տէրը նորանցից կառնէ իրանը, այն ժամանակ մէկ բանի ևս պէտք չեն գալ:

30.

Մի ժամանակ անմխարանութիւն և չարախօսութիւն ընկաւ լեռնային և դաշտային ծաղիկների մէջ, որովհետեւ հաւորուտն և մաւրուտն և ասպուզանն և սոցա նմաններն չէին տանում դաշտային արքայածաղիկի կակաչի և սոցա նմանների նախատինքին. որոնք մեղադրում էին նորանց ասելով թէ նոքա անբաղաւորներ և անիմաստներ են. իսկ իրանց համարում էին իմաստուններ, բժշկութեան համար էլ պատրաստ, տեւքով ևս լաւ. Այս գանդատը երբ լսեց թագաւորը, կանչեց նոքանց և սաստելով ասաց. «Չէ՞ որ ես կարգադրեցի ձեզ այդպէս մնալ. դուք չէք կարող փոխել ձեր կարգը, թէպէտ և կամենաք. ես այնպէս կարգադրեցի, որ պէտք դաք լեռնականները դաշտականների տեղը չեն բռնիլ, դաշտականները լեռնաւորներին, ոչ բժշկութեան պէտք գալու ժամանակ և ոչ ուրիշ բանում»: թագաւորը այսպէս համոզեց նորանց:

Այս առակով յիշումէ Աստուծոյ նախախնամութիւնը ամենայն տեղ, որ մատակարարումէ ամենքին իւրեանց կարգով թէ լեռնայիններին և թէ դաշտայիններին, և որովհետեւ միմեանց տեղը չեն բռնում, այլ ամեն մինը ունի իւր տեղը և պէտք է դալիս, ուստի չպէտքէ պարսաւել ոչ ոքի, այլ Ստեղծողի կարգին համեմատ պէտք է մեծարել ընկերներին և եղբայրներին:

31.

Աղաղակումէր երբեմն խնկածաղիկն թէ ես պատճառ եմ քահանաների սրբութեան, և մեղադրումէր մի ծաղիկի, որ նորա արմատը (տակուին) Ափրոդիտականին\*) (ցանկութեան չաստուածուհի, որ և կոչվումէր Աստղիկ) շարժող է. Այս լսելով մի քահանայ, որ չարչարվումէր իւր կրքից, դրեց նորան իւր հանդերձի մէջ, բայց օգուտ չստանալով արհամարհումէր խրնկածաղիկին, որպէս մի սուտ ասողի: Իսկ նա թասաց. «Ինչո՞ւ քո հանդերձում դրիք ինձ և ոչ սրտիդ մէջ. ահա՛ այդ պատճառով ոչինչ օգուտ չստացար»: Այս խօսքով նա մնաց լուռ:

Գեղեցիկ օրինակ է սա, որ ողջախոհութիւն ոչ թէ միայն մարմնով, այլ և հոգւով պէտքէ ունենալ, ապա թէ ոչ կրքի ցանկութեան ախտը անբուժելի է. անվայել է Աստուածանից եղած բարին չար կարծել:

32.

Արեգական հարսանիքն էր, ուղարկեց և հրաւիրեց առհասարակ

\*) Տես Ողորմական առակների 4 զուտը.

սարակ ամեն ծաղկուեքներին, որ զուգված զարդարված զան միասին հարսանիք: Լսելով ձիւնածաղիկը և նորա նման մի քանիսը աշխատեցին ամենքից առաջ գնալ: Բայց երբ ժողովեցան և ուրիշները, որ միասին վայելեն. այն ժամանակ նորա չէին երևում, որովհետև խորշակը (հարաւային տաք քամին, սամելին) չորացրել էր նորանց. բայց միւսերը իւրեանց ժամանակին դալով՝ առ հասարակ պատուով պատկեցան:

Առակիս միաքը այս է.— Արեդակն Տէրն է, հարսանիքը չարչարանաց ժամանակը, հրաւիրվածներն՝ Առաքեալներն են, որ Աւետարանից յետոյ այսինքն երկրորդ զալստեան ժամանակ միտսին կտսակուին, բայց ծանծաղները (յիմարները) յօժարամիա լինելով աւետեաց Բանին, սակայն փորձու թեան տանել չկարողանալով մնացին անպսակ:

33.

Գնտածաղիկները, կորնդանը և խլորձը կասողոս առուոյտը և սէզը և սոցա նման մի քանիսները ծաղրելով ցինկին՝ ասումէին, թէ «ինչիցն է, որ մենք ուրախ ենք և զուարթ, իսկ դու հալուած մաշուած դեղնութեամբ»: — Որովհետև անմիա էք և աներկիր զ, ասաց ցինկը. դուք չէք մտածում, թէ մեզ համար դերանդի սուրերը սրումեն, իսկ ես մտածելով դորա մասին վախենումեմ և դեղնում:

Այս առակովս անմիտ է համարում նորանց, որոնք մառանումեն թէ բնութեամբ մարդկան ազգը մահկանացու է. և երևելի մեծութեամբ խարուելով՝ երկիւղած և կրօնաւոր մարդկանց վարքը արհամարհումեն. ուստի յանդիմանվումեն նորանցից իւրեանց անմտութիւնները և իրանք իմանալով

երկրաւորների ապականութիւնը չեն խաբւում, այլ ճնշուելով և երկիւղով միշտ նուազվումեն:

34.

Մտածելով բոյսերը թէ ո՞վ արդեօք կարող է մեզ բոյսերիս առաջապահ լինել: Կառին և նորա նման մի քանիսները գոռոզութեամբ ասումէին, մենք հարկանող և ծակող լինելով մեզ արժան է առաջապահ լինիլ: Երբ կարգուեցան. եկան էշերը և ուղտերը և կերան նորանց և մնացեալը ոտի տակ կոխ տալով թողին գնացին. որքան որ մնացել էին, նորա ևս չորանալով քամու բաժին եղան:

Առակիս միտքը դէպի այն գոռոզամիա մարգիկն են, որոնք յոյս են կապում իրանց լեզուանիութեան վերայ. բայց պէտք է իմացած, որ զօրութիւնը զօրեղէ քան լեզուն:

35.

Նախատուեցաւ արևածաղիկը և նորա նման մի քանիսը արեդական պաշտօնեայ լինելու համար, բայց նա ձեռնը ձգելով դէպի արևը՝ երդուեց արեդակին թէ ես չեմ:

Առակովս յանդիմանումէ նորանց, որոնք չարութեան մէջ յայտնապէս յանդիմանվելու ժամանակ՝ աշխատումեն թագցնել իւրեանց չարութիւնները, որով աւելի յանդիմանվումեն քան ծածկվում:

36.

Սիրմերը պատրաստու մէին իւրեանց անձները փառ ասիրութեան ախտերով միմեանց վերայ իշխելու. դարին փառաւորվումէր որպէս վաթսնաւ որ, կորեակը որպէս հարիւրաւ որ. իսկ ցորեանմիայն լուռ

էր ֆնացել: Նոցա թագաւորը տեսնելով նորա խոնարհութիւնը և միւսերի փառասիրութիւնը, որոնք մանաւանդ անասունների և զազանների կերակուրներ են, և այդպէս միմեանցով են ընկնում, իսկ նա հանդարտ իւր տեղումն է, իւրեան մերձաւոր շինեց նորան:

Առակովս յայտնումէ, որ ոչ մի զօրութեամբ անդամ լինիլ Քրիստոսին չէ կարելի, եթէ ոչ, խոնարհութեամբ. ըստ որում Տէրն ինքն մտաւ բնութեան մէջ ուսման համար:

## 37.

Երբ որ իմացաւ դարին թէ ցորեանը խոնարհութեամբ հաճոյ եղաւ (չուր եկաւ) թագաւորին, ինքն ևս սկսեց գլուխ խոնարհել և հաստ ու հասարակ հագնել, որ ինքն ևս յարգելի լինի: Թագաւորը տեսնելով յանդիմանեց և ասաց թէ արտաքին ձևով ես միայն խոնարհում, իսկ որովայն մտնելով փքվումես ամբարտաւանի պէս:

Առակովս յայտնումէ, որ ոմանք իմանալով, որ խոնարհութիւնը գովելի է և բարեկամ է շինում Տէրին, սխտումեն արտաքին ձևով և ո՛չ հոգւով խոնարհիլ. ուստի պախարակվումեն հոգւոյ մէջ չունենալով խոնարհութիւն. այդպիսիները խոնարհութեամբ առաւել ամբարտաւանում են:

## 38.

Նոյնը արաւ կորեակը, ինչ որ արաւ դարին, ասելով թէ խոնարհութիւնը գովելի է, ինձ մօտենալ Տէրին աւելի հարկաւոր է, և ես այնքան խոնարհ եմ, մինչև անգամ ինձ պատուողների ձեռքից սահելով ընկնումեմ երկրի վերայ: Ծաղր է լինում և սա իբրև անմիտ և անմիաներին կերակուր լի-

նում, չիմանալով անձնի պատիւը:

Առակիս մտքը այս է, որ իմաստութեամբ խոնարհիլն արդարև խոնարհութիւն է, իսկ յիմարարն անպիտան և փնասակար, չիմանալով խոնարհութեան օրինակը իւր յարմար տեղում և ժամանակում:

## 39.

Հաճարը և ֆնէը միասին ուրախանումէին, որպէս թէ թըռչունները իրանց չեն կարող փնասել: Բայց զազանները և անասունները ոտի տակ կոխ տալով կերան իրանց, Այնուհետև զղջանալով ասացին, խնայելու պատճառով մենք անձներս պատեցինք, և այժմ 'ի զուր ապականուեցանք:

Առակովս յանդիմանումէ անագորոյններին (անողորմ, անգութ) որոնք աղքատներին չմատակարարելով ինչպէս հարկն է, լինումեն զազանբարոններին և յիմարներին որպէս ամբարներ, թէ և վերջում փոշմանումեն, այնուհետև այլ ևս օգուտ չէ լինում:

## 40.

Մարմնի մեծութեամբ բակլան և սիսեռն պարծենումէին կտաւատի և կնձթի մօտ. իսկ նոքա ասումէին մենք թէ և փոքրիկ ենք հասակով, սակայն առատ ենք. մարդիկ մեզ ժողովելով շնումեն կերակրի և լոյսի նիւթ, իսկ զուր թէ և կերակուր էք լինում, բայց անօգուտ և ոչ լոյսի նիւթ կարողէք լինիլ:

Մարմնի ոյժը գովութեան արժանի նշանակութիւն չուներ, երբ որ լուսաւոր չէ ինքն, երբ իրանում պատուիրանի լոյս չկայ: Իսկ խեղճերը և նուաստները աւելի գովելի են, թէ և

ժամանակի թշուառութեամբ չարչարվումեն. նորա աղքատներին կերակրելով կպայծառանան պատուիրանի լոյսով:

## 41.

Ուտողի պատառից ընկաւ սիսեռնի հատը, որ և ծաղրեղաւ բակլայից որպէս երկչոտ. սիսեռն ասաց, ես երկչոտ չեմ, այլ արի:

Առակովս զգուշացնումէ միշտ վախենալ մեր կեանքը ապականողից և արիութեամբ փախչել այնպիսններից:

## 42.

Նոյնպէս արհամարհվեցաւ նորանից բակլան, որ և պատասխանեց թէ վախենալու պատճառով չեմ այսպէս տափաւ կաձեւ, այլ խոնարհութեան պատճառով. ես այսպէս եմ ձեւանում, մարդիկ ինձ աղօրիքներով (Չաղացկեռիք) ջախջախումեն, եթէ այդպէս չլինէի, հապա ի՞նչ կլինէր իմ գրութիւնը:

Սորանով պիտի ուսանինք միշտ լինել խոնարհ, անպարսաւ (անմեղադրելի) և անպատճառ:

## 43.

Ուրեռն չափողը ձեռքից իւր գոլոլութեամբ գոլորվելով ազատուեցաւ: Չափողն ասաց. զնա՛ զնա՛, թոչուններին կերակուր լինիլը լաւ է, քան տանջուիլը ամանի ջրով և կրակով:

Առակիս միտքը այս է, կլինին տանջանքներ և զրկանքներ, որոնցից աւելի հանդարտը և աւելի փոքրը ընտրելի է:



## 44.

Միատեսակ լինելով ոսպը՝ կեղծաւորի նման դատումէ լովիասին, ասելով թէ, դու սպիտակ ես մարմնով և սև բերանով: Լովիասը արդարանալ կամենալով ասումէ, սպիտակ եմ ուրախացածների և սև սգաւորների համար, բայց փորձով իմացուեցաւ, որ միայն աղքատների և՛ փարթամների և՛ այլոց փորը ուռցնող բնութիւն ունի:

Առակիս միտքը յայտնի է, որ ոմանք ձևանումեն, բայց չեն կարող փոխել իւրեանց բնութիւնը, ինչպէս յայտնվումեն իւրեանց գործողութեամբ:

## 45.

Չհամբերելով լովիասը ոսպի յանդիմանութեանը՝ կամեցաւ ծաղրել և նորա բնութիւնը, և ասաց, « դու ամենեւին չար ես և անարգ, որովայնին և ջլերին վնասակար, երազների մէջ դցող և աչքի լոյսը խանդարող:»

Առակովս յայտնումէ, որ յիմար կեղծաւորները կեղծաւորներին յանդիմանումեն, և հրապարակ դուրս գալով մարդկանց մէջ ծաղր են լինում միմիանցից:

## 46.

Հիւանդների համար շինված մաշ կար իբրև դեղ, որ և քնափառումէր և պարծենում. ուրիշ սերմերը և ունդերը չէտանելով դորան՝ սկսեցին այսպանել (ծաղրել) նորան և ասել, «թէ մեր իշխանը, որով ապրումեն հիւանդներ և առողջներ, այլքան չէ պարծենում. իսկ դու յիմար լինելով, ինչպէս

մաշ ես կոչվում, փքվում ես չիմանալով, որ ժամանակաւոր է քո պէտք դալը:»

Առակս նման է նորանց, որոնք մի բանի պէտք են և այն կարծ ժամանակով, որոնք հպարտանում են անմտութեամբ, և չեն նման վում ճշմարտապէս խոնարհներին, որ ամեն բանի պէտքական լինելով աւելի զիջանում խոնարհում են, որ անսխալ և ճշմարիտ լինին:

47.

Սերմերի ազդիցն է և արջնդեղ անուանված բոյսը. արջը լսեց այդ անունը և իւր փորը ցաւած ժամանակին, կարծելով թէ նա դեղ է իւր որովայնին, նորա անունից խաբուելով՝ առաւ և կերաւ, բայց ոչինչ օգուտ չտանալով ասաց, ո՛վ խուբու (ընդեղէն) և ճանդի, որքան բարի էք որովայնին (փորին):

Առակովս յայտնում է անխմասաներին և որովայնամոններին, որ քիչ լաւը հարկաւորականը թողնելով՝ ընտրում են անպէտք շատը և խոշորը:

48.

Սամիթը, զինձը, չամանը և փեգենան և սոցա նմանները խոռուտեսակ խոտերի սերմերից արհամարվեցան, որպէս թէ հազուադիւտ են, այնպէս, որ ոչ կալն և ոչ շեղջի (դեղ) մէջ են գտնվում. միայն փոքր ծրարով և պէտք են գալիս մի քանի կերակուրների մէջ, և վերջապէս եփվելով դուրս են ձրգվում ամանից: Նոքա լսելով այդ յանդիմանա թիւնը՝ պատասխանում են, «թէ մենք արհամարհանքի համար չինք այսպէս, այլ պատուի, որովհետեւ մենք եփվելով դուրս թիւն ենք տալիս կերակուրներին. զօրութիւնն է գտնվում և ո՛չ ցողունն (բոյ-


սի բունը ծիլը): Մեզ պատուական ակնի պէս վարչամակի մէջ (կտաւի) փաթաթում պահում են. իսկ դուք այնքան անպիտան էք, որ ոչ քիչերի և ոչ շատերի հետ էք գտնվում կալն մէջ:

Առակիս միտքը այսպէս է, որ իմաստունները խելացնորներից արհամարվում են որպէս չափաւորներ և անպիտան՝ աշխարհի վարվողութեան մէջ. իրանց որպէս հարկաւոր մարդիկ են կարծել տալիս, որ անօգուտ են, բայց սովորելով նորանցից, թէ և արհամարվում են մարմնով, սակայն մեր խրատը համեմուձ բարեգործութիւնները աղի պէս չափաւոր լինելով, և ինչպէս պատուական ակներ յարգվում են մեր խօսքերը: Այսպէս ուրեմն ամաչելով դադարում են, որ ոչ իմաստուններին են պիտանի և ո՛չ աշխարհականներին:

49.

Մէկը Գալիանոսից լսելով՝ որ մեկոնը (խաշխաշը) օդտակար է արթնութեան, վեր առաւ և սերմանեց իւր պարտէզում. երբ բուսաւ և եղաւ բանջարի պէս, քաղեց կերաւ նորանից, բայց օգուտ չտեսաւ արթնութեան և հսկման համար. նոյնպէս ծաղկած և զլխաւորված ժամանակը կերաւ և օգուտ չտեսաւ. այնուհետեւ սկսաւ թշնամանել Գալիանոսին և ամեն բժշկապետին, խաբեբայ կոչելով նորանց: Իսկ նոքա լսելով՝ սաստեցին նորան, ասելով, «Գու, անմիտ մարդ, ճաշակելու ժամանակը չիմանալով անօգուտ արիւր, ինչո՞ւ ես մեզ մեղադրում:»

Առակիս միտքը այս է, որ յիմարները լսելով վարդապետներից պատուիրանների պէտքը, անժամանակ ձեռնամուխ են լինում, և անկատար լինելով արհամարհում են քարոզը:



50.

Բանջարների վերայ հրամանատար կարգուեցաւ ճակնդեղը բոյսերի թաղաւորից, այն պատճառով, որ ամառն ժամանակ տեղ է և լինում է մարդկանց կերակուր: Գորա վերայ նախանձեւով սեխը, ձմերուկը և ուրիշ բանջարների և պարտէզների պտուղները՝ օրինակի համար թաղթը, շաղգամը և ստեպղինը սկսան չարախօսել, թէ նա սաստիկ որովայն զրգռող է: Լսելով այդ նոցա թաղաւորը հրամայից տանջել նորանց, ասելով թէ ինչո՞ւ էք յանդգնում ձեր իշխանի դէմ, որին պարտական էք հնազանդիլ, ոչ թէ քննիչ լինիլ, որ անկարգութիւն չլինի:

Յանդիմանումէ առաջովս մարդկանց յանդգնութիւնը, որ դատումեն իրանց իշխանների վարքը և շատ չարեաց պատճառներ դնում նոցա վերայ, չիմանալով թէ նորանով լուծանումեն իշխանութեան կարգը:

51.

Թաղթ բոյսից օգուտ տեսաւ մէկը դարնան ժամանակի և կարծելով թէ ամենը ևս պէտք կգայ դեղի համար, եփեց նորան սերմախառն և կերաւ, և սկսաւ ործալ. և բարկանալով արհամարհել: Նա ևս յանդիմանումէր նորան, թէ ամեն բանով պէտք եմ, բայց իմացողներին՝ ճանաչողներին թէ կերակրի և թէ բժշկութեան համար:

Այս առակը նման է նոցա, որոնք մօտենումեն ոմանց՝ նոցա քաղցր բարբի համար, և թէ պատահումէ իրանց օգտի համար նորանցից խրատ և կամ սաստ, թշնամանումեն խիստ համարելով. յետոյ սովորումեն, որ նոցա խօսքը ոչ միայն խրատ են այլ և սաստ և՛ բժշկութիւն հոգւոյ:

52.

Մի բժիշկ բնախօսութիւն էր անում սպանախ կոչված բանջարի վերայ ստուգաբանելով նորան, — նախ պէտք է սպանել և ապա տալ հիւանդին իբրև կերակուր օւտելու, որովհետև ֆլասակար է: Մի ցաւագարված մարդ լսելով մերժեց նորան, չիմանալով, թէ ամեն հիւանդների համար չէ ասում:

Առակովս այս է կամենում ասել, որ իմաստունները բնախօսումեն պատուիրանների վերայ, և ասում, թէ փափկացածների համար մեռանիլը բարւոք է, քան թէ նորանց պահեցողութեան պատուիրան աւանդել. կարծումեն թէ անմտին պահք բնաւ հարկաւոր չեն. ոմանք ևս անյարմար են կարծում, բայց և ո՛չ հոգւով հիւանդներին. ինչպէս սպանախը ոմանց համար վատ է, իսկ շատերի համար պիտանի և իբրև դեղ:

53.

Գալիանոսը շինականների համար խստորը թիւրակէ էր կոչում (թիրեաք). այս լսելով մի մշակ առաւ կերաւ մի քըթոց. որից խելագարվեց և կուրացաւ:

Առակիս միտքն այս է, որ իմաստունները մարդկանց խիստ բարկութիւնը երկիւղ փարատող են ասում, իսկ եթէ անխոհեմաբար չափից դուրս են գալիս, հոգւով կուրանումեն:

54.

Մէկ հողագործ իւր պարտէզից քաղելով շատ սոխ, եփեց նորանց, և բանջար կարծելով նորան կերաւ և ընկաւ որո-

վայնածուխեան (փորհարութեան) ակտի մէջ:

Առակովս կամենումէ ասել, որ բնութեան ամեն ցանկութիւն բարի է, եթէ կարգին և չափաւոր է. իսկ չափից աւելին միասակար է և սպականող:

## 55.

Հարուստների մի ժողովքում միասին սոխը և խստորը կամեցան զնալ և իւրեանց թաղցնել ամեն բանջարների մէջ, բայց չկարողացան. որովհետև սաստիկ հոտից լցուեցան բազմականների ունդները (քթի ծակեր), լցուեցան և նոցա աչքերը արտասուքով. ուստի և նոքա ամենքը արտաքսեցան (դուրս ընկան):

Առակովս խրատումէ չթողնել վատ անուան տէր մարդկանց և հոգւով անդիջ ցաւակարվածներին մեզ հետ սուրբերի ժողովքում, որ նոցա պատճառով և մենք աչքից չընկնենք:

## 56.

Շաղգամբ հարցրեց ստեղծելից (զազարից) թէ ինչո՞ւ այդքան խոր մտնումես երկրի տակն: Նա պատասխանեց, ամաչումեմ քո յանդգնութիւնից, որ կարմիր և սպիտակ լինելով ցոյց ես տալիս քեզ մարդկանց: Շաղգամն էլ ասաց, եթէ այդ վատ է, վատ է բնաւ և քո երկչոտութիւնը:

Առակովս սովորեցնումէ լինիլ միջին կարգով երկիւղած և յանդուգն, որովհետև երկուքն ևս վատ են:

## 57.

Սելը հասնելով և քաղցրանալով ինքն իրան արքայապտուղ էր համարում, թէ և բանջարից էր զոյացած, բայց իբրև փոքր շառաւիղից մեծացած՝ այսպէս արհամարհում էր ընկուզի մեծ ծառին և նորա փոքր պտուղներին: Նորան պատասխանեց, «եթէ երկար ժամանակ ապրող լինէիր, յարմար էր անուն նշանակութիւն ունենալդ. բայց որովհետև շատ շուտով որովայնաանց ես լինում, ուստի այնքան սիրելի չես կարող լինիլ մեծամեծներին և փոքրներին. իսկ ես թէև փոքրիկ, բայց շատ ապրող և լոյսի նիւթ եմ թէ՛ հարուստների և թէ՛ աղքատների համար»:

Առակովս յանդիմանում է փափկութիւնը, որ թէ և թաղաւորներին է յարմար, բայց յարատուութիւն չունենալով ոչնչանում է. իսկ առաքինութիւնն թէ և անարգ է երևում աչքի, բայց շատ ժամանակ մնացող է և լուսաւոր:

## 58.

Մի մարդ մտաւ մի պարտէզ, կամեցաւ ձմերուկ կտրել և ուտել: Ձմերուկը վախենալով ասաց. «ի՞նչ ես գործում դու. չգիտե՞ս, որ ես փղի ձու եմ. եթէ տանես ինձ քո տունը և պահպանես զգուշութեամբ, այնպէս որ չկտրվիմ, քեզ համար կճնեմ մի փղորդի, որ հազար դահեկան կարժենայ»: Մարդը ուրախանալով տարաւ իւր տուն և յետոյ վիրաւորված դուրս քցեց նորան դուրս. սորանով ազատուեց նա սուրից:

Առակովս ուսուցանում է, որ երբ սպանողի ձեռք ընկնինք, պէտք է մեզ արդիւնաւէտ և հարկաւոր ցոյց տանք նորան, որ գոնէ շահի օգտի յուսով տանէ մեզ տուն, ուր հիւանդութեամբ և կամ մահով կազատուինք սրից:

59.

Վարունդը իւր անձնը մեծապատիւ էր կարծում ուրիշներին իւր կանուխ դուրս գալու պատճառով: Սելը մեղադրելով ասում էր նորան, «Թէ դու պատիւ ես ստանում այն պատճառով, որ ես մտոյ չեմ. դիցուք թէ այդպէս է, եակայն անպատիւ կլինիս դեղնութեամբդ գարշելի լինելով:»

Առակիս միտքը այս է. որ անարգները պատիւ են ստանում կանուխ գտնուելով ամեն անկողում. բայց երբ պատուած կանները մօտ կգան, այնուհետեւ կարհամարհվին իրանք:

60.

Մի անվերձ մարդ տեսաւ որ շամամ են վաճառում: Հարցրեց մօտ զանուածներին թէ ի՞նչ է այն. նոքա իմանալով, որ հարցնողը յիմար է, ասացին, «սիրամարդի ձու է» Յիմարը ճշմարիտ կարծելով տարաւ դրեց հաւի տակ, որ սիրամարդի ձագ դուրս կայ. բայց հաւը տեսնելով թէ ինչ է, կերաւ նորան: Մի քանի օրից յետոյ գնաց տեսնելու թէ արդեօք ձագը դուրս է եկել թէ ոչ. այն անդ տեսաւ մի ոսկի եզնակ, որ խոյն թռաւ: Յիմարը սկսեց լաց լինիլ, ասելով թէ «ես անժամանակ եկի. սիրամարդի ձագը անկատար գնաց:»

Առակովս այսպէս ենք իմանում, որ գեղեցկութիւնը յիմարներին խաբող է. նոքա կարծում են թէ նա հաւատարիմ և հաստատ գոյութիւն ունի. բայց իմաստունները զիտեն, որ գեղեցկութիւնն գոյութիւն չունի, այլ գորութիւնն է ճշմարիտ:



61.

Կաղամբը քարոզում էր և զովում իւր զուեր, ասելով թէ «ես որովայն բժշկող եմ. ինձ հում ուտողների որովայն լուծող եմ, իսկ եկած ուտողներինը պնդեցնող» և շատ սուտ ասելով բարբառում էր: Մէկը խարուելով սկսաւ շատ ուտել. բայց երբ օգուտ ստանալու փոխարէն, տեսաւ որ փորը գրգռուում է և ձայներ է հանել տալիս, սկսաւ յանդիմանել նորան՝ որպէս մի սուտ խօսող և խաբող մարդու: Բայց նա ասում էր, «ինձ փոյթ չէ, ես հնարք գտայ քո որովայնը մանելու, թէ և անարգութեամբ եմ դուրս գալիս:»

Առակովս իմանում ենք, որ խաբեբայ և կեղծաւոր մարդիկ շատ խաբէութեան խօսքեր են խօսում, որ յարգելի լինին, բայց երբ կյայտնուին, թէ և կանարգուին և կարհամարհուին, սակայն չեն ամաչել բնաւ, որովհետեւ չափից դուրս եկած կըլինի նոցա չարութիւնը:

62.

Սարերից իւրաքանչիւրը իրան գլխաւոր էր կարծում բաւանձին առանձին յատկութիւնով. Յոյներումը Պոնտոս և Պրոպոնտոսը, արեւմուտքում Յեանէն. Պաղեստինում կարմեղոսը. Ասորիքում կորգուս. Հայերում Մաօիսը տապանակով և Աղուանում կաւկաս, ինչպէս Կիլիկեայում Պարխար, և միջին Հայերում Տաւրոս: Միւսերում ևս մի ուրիշներն: Անարուելով յայտնուեցաւ Քորեբը Մովսէսին Աստուծոյ երեւան խաչի պատճառով. Թաբորն Տէրի պայծառութեան համար. Գալիլիացոց սարն Տէրի քարոզութեան համար: Վերջապէս, այդպիսի կարծիքներից յետոյ՝ նոքա լսելով զաղաքեցին իրաւունքը գորանց տալով:

Սորանով այս միտքն է յայտնում, որ թէ և հեթանոսների թագաւորները փառքով մեծ կարծուին և կամ Իսրայէլների թագաւորները սակայն մեծ են առաքինութեամբ այն անձինք, որոնք խոնարհ են մարմնով և հոգւով, երբ որ նորանցումն է բնակվում իջեալ Աստուածը:

63.

Նոյպէս զետերից իւրաքանչիւրը կարծումէր իրան առաջին. ինչպէս Փիսոն և Գեհոնը, Տիգրիս և Եփրատը Կուր և Երասխը, Պառատիս և այլք. բայց դատելով առաջինն եղաւ Յորդանանը Տէրի մկրտութեան պատճառով:

Առակովս կամենում է ասել, որ ճշմարտութիւնն զօրեղ է քան օրինակն:

64.

Այսպէս և աղբիւրներն կարծեցին, ինչպէս նա, որ Պարսուսն է, Նեղոսի դուստր հռչակուեցաւ. նոյնպէս Անտիոքում և Արեթուսայում եղածները և այլք. բայց պատուական եղաւ այն, որ Գրախտն էր ոռոգանում (Չրում):

Կամենում է ասել, որ իւրաքանչիւր աղբիւր մարդկային իմաստութեան օրինակ է, բայց նա, որ Գրախտն է ոռոգանում, Աստուածային է, որովհետեւ դրախտ է մարդն. իսկ ծառերը առաքելութիւն, և աղբիւրն հոգևոր զիտութիւն, որ ոռոգանում է առաքելութիւնը:

65.

Չրային և ցամաքային կենդանիները խնդրեցին իրանց համար թագաւոր. Արարիչը կատարելով նոցա խնդրուածքը՝ տուեց Չրայիններին Աւիաթան և ցամաքայիններին Բեհեմօն,

և սահմանեց, որ և ոչ մինը խլէ միւսի ձեռնից իշխանութիւն, թէ և ցանկանան. ուստի Աւիաթանին ծանր անշարժ ստեղծեց և միշտ լինիլ ջրում, իսկ Բեհեմօնին խեղդվիլ ջրի մէջ:

Առակիս միտքը այս է, որ երկրին բաշխեց թագաւորութիւն նախախնամաբար. ոմանց ծովի կղզիներում, ոմանց ցամաքում սարերով և գետերով ամրացրեց, որ միմեանց թագաւորութիւնը չսպականեն, թէ և կամենան:

66.

Չրի մէջ իշխաններ կարգելուց յետոյ, ասացին, «Աւիաթան թագաւոր, ի՞նչ է պատճառը, որ ոչ ման ես դալիս և ոչ ասպատակում»: Նա պատասխանեց, «Ո՛ր պատճառով, որ մեր մօտ չկան թշնամիներ, և մենք կարօտ չենք ոչ մի բանի, մերը վայելումենք, և ձեզ հետ չեմ զուարճանում, որ ծանրութիւն չլինիմ ձեզ համար.» այս խօսքերը հաւանալի եղան նորանց:

Առակիս միտքը այս է, որ եթէ մի թագաւորութիւն նեղութիւն չկրէ մի ուրիշ թագաւորից, և ունենայ բաւականութիւն, լաւ է, որ խաղաղասէր լինի, ծանրութիւն չտալով իւրայիններին, բայց եթէ հարկաւորվի և ստիպուած լինի թըշնամիներից, անարգութիւն է պատերազմ շտալը:

67.

Չիները գնացին իւրեանց թագաւորի առաջ և ասացին, «Գու ինչո՞ւ ասացիր, թէ թշնամիներ մեզ մօտ չեն դալիս և այն պատճառով մենք կուի չենք տալիս: Ահա մարդիկ դալիս են և մեզ որսում, բայց դու վրէժ չես առնում: Աղոցածուին որսորդների նաւին խփելով՝ շատերին ընկղմեց. և ուրիշ շատ

պատահած բաներ պատմեցին թագաւորին, որ և բարկանալով Տրամայեց ձկներից ոմանց, որ պահպանեն նաւորդներին, որ այդպիսի բան չպատահի: Յետոյ նոցա սիրան առնելով ասաց, «դուք չգիտէք, որ մարդիկ Աստուածանից մեզ վերայ իշխան են կարգված. ուրիմն հարկաւոր է մեզ լուր, ինչ որ նոքա գործումեն»:

Առաիովս կամենում է սովորեցնել, որ եթէ իրանից մի գորեղ թագաւորութիւն կամենայ հարկ պահանջել, պետք է սիրով յանձն առնել և ընդլմացողներին խրատել, որ չհակառակին, որովհետև Աստուածանից կարգաւորուած է, որ աւարը հնազանդ լինի գորեղին:

68.

Չինքրը և այս պահանջեցին թագաւորից թէ «դու ամեն բանում բարեմիտ լինելով՝ չես կամենում վրդովել խաղաղութիւնդ, սակայն այդ անյայտ է թշնամիներին, պետք է կարգել քեզ համար երկրորդ»:

Թագաւորը կատարելով նոցա խնդիրը կարգեց իրան երկրորդ կիտոսին: Հարկաւոր է համարում ունենալ թագաւորին երկրորդ ամեն կարգերի համար, որ մին կպահպանէ բարեկարգութիւն, միւսն կփանէ (կքշէ) պատերազմ:

69.

Արեաները միասին ժողովելով կամեցան կռուի նպատակով արշաւել դէպի Արիտէ, յուսալով թէ իրանք կյաղթեն, որովհետև կարծումէին թէ իրանց մորթիները իրանց համար զէնքեր են, բայց չմտածեցին, որ իրանք զժուարաշարժ լինելով կյաղթուին: Արեաացիները դաւաճանութեամբ առաջ փախչումեն նոցա առաջին, և դարձեալ յետ դառնալով դէպի

Նոքա, այնուհետև սկսում են փախցնել դէպի յետ, և այսպիսով թաւալեցնում նորանց մէջքի վերայ, և այնուհետև քար դնելով նոցա կուրծքի վերայ՝ ծնորելով սպանում են նորանց:

Սորանով պախարակում է նորանց, որոնք մի յառաջադիմութիւն չունենալով՝ խրոխտում են (հարբայ են դայիս) ինչի համար որ լինի բայց վերջում ամօթ են կրում շատերից:

70.

Ծովի գործերը խորհրդակցելով ասացին. «Մենք ինչու դեղնած, փորներս ուռած խեղդում ենք ջրի մէջ, դուքս դանք ջամաքը և այնտեղ կեանք վարենք ուրիշների պէս»:

Պատասխանեց նորանցից մի ծերունի. «Թէ իմ հայրը ինձ պատուիրել է, որ ծովի ապաստանը չթողնեմ, որովհետև մենք բնութեամբ վախկոտ ենք. դուցէ դուքս դանք և վախենալով յետ դառնանք, մեր վախկոտութիւնն ևս ուրիշներին յայտնենք»:

Նոքա չհաւանելով ծերի խօսքին՝ դուքս եկան դուքս, և մի ոտնաձայն լսելով՝ փախան խոյն և խոր թաղնուցան ջրի մէջ:

Առաիովս կամենում է սովորեցնել, որ նախ պետք է իմանալ մէկ բանի զօրութիւն և ապա տեղը և կամ գործը փոխել. նոյն և առնել ծերերի և փորձուածների հաւանութեամբ. որ մի՛ դուցէ իմանալով մեր պակասութիւն, որ չգիտէին առաջ, այնուհետև սկսեն ծաղր առնել մեզ:

71.

Որսորդների վառած կրակը տեսնելով եպիսկոպոս յանկացաւ իրա համար կերակուր դանել. բայց որսորդները նորան բռնելով մերկացրին իւր զգեստից (պատեանից):

Առաիովս սովորեցնում է, որ նախ քննել պետք է այն

բանը, ինչ որ ցանկանում ենք անել, որ մի՛ գուցէ մի ուրիշ բան ձեռք բերել ցանկանալով՝ թողնենք և մերը, ինչ որ ունինք:

72.

Խխունջին մէկը աղաչելով ասումէր «ե՛կ, դո՛ւրս եկ դուրս պատեանիցդ, որ մեծարելով պատուեմք քեզ զանազան օրինակներով» Իսկ նա պատասխանեց թէ «ո՛չ ոք քեզ չի տեսել, որ դու մէկին պատիւ տաս. ինձ ի՞նչպէս կարող ես պատուել. նպատակդ այդ չէ. ես դիտեմ, որ իմ արեան ես ցանկանում» այս ասաց և դուրս չեկաւ, զգուշութեամբ ազատվելով նորանից:

Առակովս մեզ զարթնեցնումէ չհաւատալ խաբեբայ և սուտ խօսքերին, մանաւանդ այլազգիների, աչքի առաջ ունենալով անցած խաբէութիւնները, որոնք եղել են դէպի ուրիշները, որովհետեւ նոքա (այլազգիք) քրիստոնեաների արեան և ստացուածների են ցանկանում, ոչ թէ պատիւ տալու:

73.

Զմիւռնեան (մի տեսակ միջաս) խեցեմորթներից մէկին կանչեց իւր տուն ճաշելու, և մահճի մէջ հանգստանալու. նա յանձն չեր առնում մերկանալը և անկողին մտնելը, ասելով թէ և ճաշ կվայելեմ, բայց անկողին մտնելու համար չեմ մերկանալ: Այսպէս յօժարութիւն չյայտնելով մի փոքր իւր խեցինը թողեց, բայց նա խելոյն քար զցելով պատեանի մէջ բռնեց կերաւ նորան:

Առակովս ցոյց է տալիս նենգաւոր բարբ ունեցողներին, որոնք ժամանակ գտնելով կատարել են կամենում իրանց չարութիւնները, որոնց համոզված լինելով՝ հիշա չէ ազատվիլ այնպիսիներից:

74.

Մէկը կամենում էր ջրային դորտերից բռնել և ուտել, բայց չէր կարողանում, որովհետեւ ամբացել էին նոքա, ուտտի սկսաւ նա դովել նորանց թէ «դուք շատ զեղեցիկ էք ստներով և ձեռներով, մանաւանդ քաղցրաբարբառ աղաղակում էք միասին երգեհոնի պէս. ինչո՞ւ չէք դուք մօտնում մեզ, որ մենք վայելինք ձեր տեսութիւնը» Գորտերը խմանալով նոցա միտքը ասացին: «չէ որ դու վկայեցիր մեր տեսքին և ձայնին. դորանով դու յայտնեցիր, որ մեր մարմնոյն ես ցանկանում, ոչ թէ մեր տեսքին և կամ ձայնին»:

Առակովս ուսուցանում է ուշք դարձնել խաբեբայ խօսքերի վերայ. պատահում է, որ ասածներից յայտնվում է խաբեբայութիւնը, թէ և ասողն կամենում է ծածկել:

75.

Չինրին մեղադրում էր իրանց թաղաօրը ասելով թէ «ինչո՞ւ էք ուտում ձեզանից մանր կենդանիներին» նոքա համարձակելով ասացին. «Յեզանից ենք սովորում, որովհետեւ շատերը զայլս են քեզ երկիրպագանելու, և դու կլանելով նորանց՝ քեզ կերակուր ես վեր առնում, ուտտի մենք ևս քեզ տեսնելով յանդգնում ենք»:

Առակովս յանդիմանում է նորանց, որոնք գործում են և ուրիշներին բամբասել կամենալով աւելի ևս յորդորում են դէպի չարութիւններ, քան թէ չարութիւնների առաջն են առնում. վասն զի պէտք է խրատ տուողն գործով քան թէ խօսքով օրինակ լինի:



76.

Բեհեմօն ամեն մի կենդանիների ազգին նայելով իրան քանչիւրի համար կարգեց իշխաններ. զուարակը անդէաներին, խոյր հօտերին, նոխազը հօրաններին. առիւծը զագոսներին, ձին բեռնակիրներին, արծիւր վայրի թռչուններին, աքաղաղը ընտանի թռչուններին և սահմանեց ամեն մի գործին ուշք դարձնել:

Առակովս թաղաւորների բարեկարգութիւններն է ցանկանում, որ ինչպէս պատշաճն է կարգեն իշխաններ և գառաւորներ, նմանապէս և եկեղեցիներում ուղղել կարգերը:

77.

Չուարակին եթէ զրգուես յորդորես, եղջիւրները զեանին խրելով կթափէ, և եթէ դարձեալ բերես հրապարակ և յորդորես այլ ևս ոտները զեանին չի խփել հող հանելու:

Կամենում է ասել առակովս, որ մի անգամ խրատելով, զօրութեան առաւելութիւնից կզիջանի:

78.

Երբեմն եզնր փախաւ լծի տակից հերկելու ժամանակ, բայց մշակը բռնելով նորան բերաւ կալը, այնտեղից էլ փախաւ բռնեց բերաւ սայլին լծեց, սայլից ևս փախաւ բերաւ շատ բանի լծեց. վերջապէս տեսաւ որ փախչելով անհնար է լինում, հաւանելով մոռացաւ:

Առակս խրատ է նոցա համար, որնք ծուլութեամբ և առանց գործի են կամենում կեանք անցուցանել, այնպիսիներին հարկաւոր է այդպէս խրատել, մինչև որ յանձն կանեն:

ամենայն ինչ, որովհետև անգործ քաղաքավարի լինել անկարելի է:

79.

Անդէաների բազմութիւն ժողովվելով անտառների մէջ հրապարակապէս խորհրդակցում էին մի հնարք գտնել զայլերի ձեռքից աղատելու: Երբ զայլերը այդ լսելով վախեցան, որ մի գուցէ նոցա հնարքով լուծվի իրանց զօրութիւնը, նորանցից մի ծեր ասաց ձեթէ չաղօթէք, որ իրանք իրանց մի պատճառով չցրուին, նոցա զօրութիւնը և խորհուրդը զօրեղ կլինին» Լսելով ծերի խօսքին՝ սխեցին աղօթել և խնդրել ուխտով և նուէրով: Կեսօրվայ ժամին կէտ մտաւ նոցա մէջ այնպէս, որ նոքա փախչելով ցրուեցան և իրեանց խորհուրդները մնացին անխտար. այնուհետև զայլերը ուրախացան:

Առակովս պէտք է իմանալ, որ երբ մեր թշնամիները չար կմտածեն մեզ համար, և եթէ մենք անձամբ չենք կարող լուծանել, պէտք է աղօթենք, խնդրուածք մատուցանենք, որ Աստուած խափանէ այն չարութիւնները:

80.

Մի ժամանակ ողջ անդէայն արանջաց թէ «Մենք աշխատում ենք մեր որթերի համար, և կաթն ենք ժողովում մեր ստինքների (ծծերի) մէջ, բայց մարդիկ ճմլելով նոցա պրակուրը առնում խլում են մեզանից մեր աշխատանքը. գնանք, այլ ևս չվերադառնանք նոցա մօտ» Նորանցից մի իմաստուն ասաց. «Սյուպէս չէ, մարդիկ ինչքան հարկաւորն է մեր որթերին թողնելով, աւելորդն են առնում, և՛ մեզ և՛ մեր որթերին նքստ խնամում են. մեր ստացածը շատ է քան սուածը»:

Սուսիովս խրատում է քրթմնջող սպասաւորներին, որոնք շատ են կարծում իրանցը, քան այն, որ աւերիցն են ստանում: Այդպիսիները սովորելով իմաստուններէց իմանում են, որ իրանցն է սակաւ:

## 81.

Խոյր շատ անգամ խր գլխի եղջիւրներով (բողբոջ) խփեց ծառին և թափեց եղջիւրները և սկսաւ անիծել ծառը. իսկ նա պատասխանեց. «Ինչո՞ւ ես մեղադրում ինձ, դո՞ւ ինքզեա եղջիւրներդ ընկնելու պատճառը:

Սուսիովս յամբիմանում է ի զուր անիծողներին, որոնք բարկանալով իւրեանց ախտերով և կրքերով ուրիշներին են պատճառ բռնում:

## 82.

Հօտը գնալու ժամանակ շարժվում էին նոցա դմակները, տեսնելով այծերը (մանաւանդ նախանձից շարժուած) սկսեցին բամբասել, թէ ինչո՞ւ մեզ պէս պարկեշտութեամբ չէք գնում:

Սուսիովս յայտնում է նախանձոտների բարբը, որոնք շնորհքով յառաջադէմներին բամբասում են, և իրանք չունենալով, իրանց պարկեշտ են համարում:

## 83.

Մոխազը այծերից մի քանիսին վեր առնելով մտաւ քարանձաւներից դժուար տեղեր. գայլը նորանց տեսնելով եկաւ և հարցրեց. «Ի՞նչ էք գործում այդ տեղ» — նոքա պատասխանեցին, մենք կամենում ենք այս տեղ միայնակեաց լինիլ՝ ձգնուիլ քառասուն օր: Գայլը հաւատալով թողեց նորանց և

գնաց, իսկ նոքա ցած գալով այնտեղից՝ գնացին խաղաղութեամբ իւրեանց ճանապարհը:

Սովորեցնում է սուսիովս, այդպիսի դէպքում թշնամիների վտանգից ազատելու համար հարկաւոր է դործ գնել հնաբք:

## 84.

Անասուն կենդանիները եկան առիւծի մօտ և ասացին «Ս, մեն կերպով իշխանի պէս ես վարվում, բայց մէկ բանով՝ զողի, որովհետեւ հետքդ թազցնում ես. վտանգի մէջ ընկնելով դորանից՝ աշխատում են խափանել իշխանութիւնդ»: Այդ բանի վերայ տրտմելով առիւծը սկսաւ յայտնապէս շրջել (մանաւազալ): Ս. յնուհետեւ նոքա տեսնելով նորան, ազատվում էին նորանից:

Սուսիովս շարերի դովութիւնից և պարսաւանքից ազատվելու հնաբք է սովորեցնում:

## 85.

Առիւծի ոտն կոտրուեց, և սկսաւ տրանջալ ամեն կենդանիների վերայ, ասելով թէ, «Դուք իմ հարկատուներն էք. ես որովհետեւ զաղանների իշխան եմ, ինչո՞ւ ինձ համար ընծայարերութիւններ և զոհաբերութիւններ չէք անում, որ առողջանամ»: Պատասխանեցին համայնքն, այն պատճառով, որ մենք քեզանից պահպանութիւն չտեսիք, ոչ արջի ձեռքից, ոչ գայլի և ոչ ուրիշ շատ զաղանների ձեռքից, և դու մինչև անգամ չենայեցիր մեզ: Մենք Աստուծոյն պետք է զոհաբերութիւնանենք, որ այդպիսի վորձանքին քեզ ենթարկեց»: Սուսիովս միտքը այն է, որ թէ աշխարհական և թէ եկե-

ղեցական չար առաջնորդներից տանջուելով ստորագրեալները զո՛նէ չին պաշտպանվում և ուրիշների հասցրած վտանգից, այդպիսիները տեսնելով իրանց առաջնորդներին մի որ և իցէ վտանգով պատժված, փառք կտան Աստուծոյն, որ իրանցով չէ եղիլ պատիժը:

## 86.

Առիւծը արջը և գայլը միասին ցանկանալով ասացին, «Մենք ինչո՞ւ ենք հուժ ուտում մեր որսը մարդկանցից մէկին բռնենք, որ մեզ համար մեր որսից կերակուր պատրաստէ, ինպէս իրանց օրէնքն է. մէկին բռնեցին և կարգեցին խորան կարար (խոհարար պօլար): Մարդը նեղանալով դոցա ձեռքի տակ մնալուց, մտածեց մի հնարք զանել նորանցից ազատվելու. մի մեծ զերան պատուեց և դրաւ ամեն մի կողմում երկթներ (սեպեր) և ասաց առիւծին և մուսերին. «օղնեցէք ինձ պատուելու այս փայտը, որով կերակուր պէտք է պատրաստում. զրէ՛ք դուք ամենքդ ձեր ձեռները ճեղքի մէջ և ձգեցէք: Երբ որ նորա ձեռները դրին, իսկոյն դուրս պրծացրեց երկթները: Նորա մնացին կապուած: Մարդը վեր առաւ տապալը (կացինը) և ասաց. առիւծից սխեմ. այս ասելով փշրեց ամենքին:

Առակովս յանդիմանում է անկիրթների և անփորձների աննշանքը (փափագը), որով ոմանք չարեաց պատճառ են լինում, և շատ անգամ լինում է, որ առաջ սխտողին է պատահում:

## 87.

Արջի փորը ցառում էր. դեղ հարցրեց աղուէսից. աղուէսն էլ ասաց. այս ինչ մարդում դեղ կայ, կզնաս նորա մօտ. նա քեզ կտայ մեղր. որ շատ օգուտ է: Ճանապարհ ընկաւ արջը դէպի այն մարդը, որ լինում էր զիւղում. երբ մօտեցաւ գիւղին, շուները փախցրին արջին, որ և սկսաւ մեղադրել աղուէսին: Աղուէսն էլ ասաց. այն մարդը որ քեզ ո՛չ ազատեց շուներից և ոչ դեղ տուաւ, ոչ կարդացած է և ոչ օրէնք գիտէ. ե՛կ քեզ տանեմ մի հմուտ մի տեղեակ կրօնաւորի մօտ: Երբ կրօնաւորն տեսաւ, սկսաւ յանդիմանել և մերժել նորանց: Աղուէսը ցոյց տուեց արջին մեղուանոցի մուտը, ուր մտաւ նա և կերաւ մի փեթակ. մէկն էլ վեր առնելով ճանապարհ ընկաւ: Կրօնաւորը սկսաւ անիծել աղուէսին, որ պտտճառ եղաւ այնքան վնասին. բայց աղուէսը ասում էր, եթէ արջը անքաղաքավարի եղաւ, այդ մասին ես անպարտ եմ. դու գեղի համար մեղր չտուիր, փորի համար տուիր:

Աշխարհականն իբրև տղէտ անփնաս մնաց. իրաւացի վրէժը կրօնաւորից առնուեցաւ. ազահութեան պատճառով շատ անգամ այդպիսի վնաս է պատահում նենդաւորների առաջնորդութիւնից և զազանաբարոյ մարդկանցից:

## 88.

Աղուէսը գտաւ մի կուրացած գայլ, և մտաւ նորա մօտ փարձով նորան առաջնորդ լինելու: Մի օր աղուէսը ախմայ գայթակղեցրեց նորան ջրի մէջ: Այնուհետեւ գայլը չէր հաւատում աղուէսին, սպասում էր վրէժ տանել նորանից: Աղուէսը վախենալով կամենում էր փախչել, բայց չէր կարողանում, որով

հետև բռնուածէր, և ասաց, վաղը զատիկ է, քեզ կտանեմ եկեղեցին, այնտեղ զոհ (մատաղ) կուտես Սորա վերայ գայլը ուրախացաւ: Գնացին վաղը. բայց աղուէսը նորան քցեց շուների մէջ: Գայլն ասաց. ա՛յս է մատաղն, ո՛վ չար ծառայ:— Այո՛, ո՞չ է, որովհետև այդպիսի չար կուրին բաց ի դորանից ուրիշ բան վայել չէ:

Առակովս կամենում է ասել, որ զղջացած չարագործերը և առաջնորդում են կոյրերին, և եթէ չարաբարոնքը խարում են նորանց, դառնում են նորա դէպի իւրեանց առաջին նենգութիւնը:

## 89.

Ծերացած գայլը գնաց ոչխարների հօտը (սիւրուն) և ասաց «Ես այժմ ապաշխարող եմ, ես ձեզ շատ տրտմեցրի, այդ պատճառով կամենում եմ դալ ձեզ մօտ և աւել ամոզ դառնալ ձեր տանը, որ թողու թխն լինի ինձ. ձեր մանուկներին կպահպանեմ ուրիշ գայլերից: Շուները ուրախանալով ասացին. ե՛կէք այլ ևս չմեղանք դորա դէմ: Գայլը մնում էր և սպասում, մինչև որ դառները փոքր ինչ մեծացան, այնուհետև սկսաւ ուտել և պատառել նորանցից այնպէս, որ մինչև անգամ շատերը տեսան. Այսպէս էր վարվում մինչև որ ինքն վերջապէս սատակեցաւ:

Առակովս խրատում է չհաւատալ շուտով չարերի սովորութեան, որ հիանալով բնութիւն է դառնում և դէպի չարը ձգտում սատակման որդի լինելով:

## 90.

Շուները գնացին իւրեանց թաղաւորի առաջ և ասացին, «ամենքին կեանքի պատճառ տուիր, մե՞նք ինչպէս ապրենք:— Եւ դուք կապրէք, պատասխանեց թաղաւորը:— Ճշմարիտ է, մենք մի կերպով կապրենք, ասացին նորա, բայց եթէ մի հիւր գայ մեր մօտ, ի՞նչ անենք:— Այնքան կզգէք նորան, որ այլ ևս չի դալ:

Առակովս յանդիմանում է օտարատեացներին և հիւրերը մերժողներին, որոնք որպէս թէ օրէնքով են հոգում իւրեանց կեանքը և ասում հիւրերին:

## 91.

Մկները պատգամաւոր ուղարկեցին կատուի մօտ և ասացին. «քո դէմ ի՞նչ մեղք ենք գործում, որ դու այդքան մեզ հալածում ես. քո ի՞նչք ենք ուտում: Կատուն ասաց. ո՞րք չզլիտէք, որ մարդիկ մեզ այն պատճառով են պահպանում, որ մենք ևս պահպանենք նոցա ամբարները, եթէ դուք չմեղանէք նոցա դէմ, համարձակ ման կգաք, և ոչինչ մնաս չի լինիլ ձեզ. այս ասելով կատուն ձեռն գլխի վերան դրեց և հաստատեց երդումով: Մկները համարձակելով կամեցան դուրս գալ և ընկած հատերը վեր առնել. բայց կատուն այն բողբոջին յարձակուեց նոցա վերայ և բռնեց շատերին:— Չէ՞ որ դու երդուեցիր ընկած հատի համար վրէժ չառնել. ասացին մկները:— Ո՛չ, ասաց կատուն, ես՝ ինչպէս իմ սովորութիւնն է, այնպէս ձեռքս գլխիս վերայ դրի:

Առակովս յայտնում է կեղծաւոր երգողներին, որոնք ո՛չ պայմանի և ոչ ուխտի մէջ հաստատ կմնան, այլ կտան յարմար ժամանակ դանելով:

## 92.

Ինծր որսի ետևից վազելու ժամանակ մէջքը կոտրվեցաւ, և չարանալով խփում էր և անիծում իւր կորիւնին (լակոսին) և դարձեալ գլջալով ողբում էր:

Առակովս յանդիմանում է խստասիրտներին, որ մի չար բան պատահած ժամանակ անհամբեր լինելով տրտմեցնում են իրանց ընտանիքը և դարձեալ գլջանում (փոշմանում):

## 93.

Առիւծը բորենուն գողութեան մէջ բռնեց. բայց նա ասում էր. յես մեռածներին եմ ուտում, որովհետև կենդանիներին յաղթել չեմ կարողանում. իսկ դու որովհետև յաղթող ես, այդ գործում ես անյապաղ:

Առակովս Առաքեալի յանդիմանութեան համեմատ յանդիմանում է բռնակալ իշխաններին, որոնք գողերին պատժում են և իրանք բռնակալութեամբ մի և նոյն են գործում:

## 94.

Աղուէսը ճաղարին հարցնում է, այդ ինչիցն է, որ ես միշտ նուազ եմ, իսկ դու այդքան ստուար (հաստ, փափուկ): Պատասխանեց ճագարը, ա՛յն պատճառով, որ ես շատ հոգս եմ անում, և ամեն բան, ինչ որ գտնում եմ, ուտում եմ:

Առակովս կամենում է ասել, որ անհոգութիւնը առողջութեան պատճառ է:

## 95.

Հարցրին նապաստակին թէ ինչո՞ւ այդքան վախկոտ ես — Այն պատճառով, որ շուները, արծիւները և մարդիկ ևս որսում են մեզ, ուստի իրաւացի է մեր վախկոտութիւնը:

Առակովս խրատում է, որ մեր կեանքի թշնամիները շատ են, ուստի միշտ երկիւղով զգուշանալ հարկաւոր է:

## 96.

Մեղադրեցին ոմանք կուղբին, թէ ինչո՞ւ ջրի մէջ շատ չարչարվում ես — Չեն կամենում, ասաց նա, որ ես կեանք ունենամ, այլ և մեռցնելով մորթիս անգամ հանում են ի բաց:

Առակովս չար տէրերին է յանդիմանում, որոնք տանջում են կենդանի և մեռած ժամանակն անգամ:

## 97.

Որսորդը վագրին նախատում էր, որ իւր աղբը ձգելով այրում էր իրան: Իսկ վագրը պատասխանում է թէ դու ինչո՞ւ շատ մեղադրանքի արժանի չես, որ նետով և սրով խօցօտում ես ինձ:

Նման է առակս նոցա, որոնք զիմուքն ոմանց կեանքից զրկելու, և ընդդիմակցողին նախատում են թէ, դու ինչո՞ւ թոյլ չես տալիս քեզ սպանելու:

## 98.

Աղուէսը մի զիրք գտաւ, և գնաց մի քանի տղէսների մօտ և ասաց թէ քահանայ եմ: Նա կարգուեցաւ քահանայ

նոցա վերայ և տօնի օրերում բարձրաձայն աղօթում էր, և շատ յօժարութեամբ աղ էր օրհնում. բայց ուրիշ օրերում ծուլանում էր. մատաղ զօհեյու ժամանակ ներկայ լինելով՝ արիւնից չէր զզվում լեզելով նորան, և եթէ մէկը մեղադրում էր նորան այդ բանում, պատասխանում էր, նուիրված է, սուրբ է, այդպէս արժան է առնել: Երբ որ յայտնուեցաւ նորա կեղծաւորութիւնը՝ ծածուկ զնաց հեռացաւ:

Յայտնի է առակիս միտքը, որ զտանվում են այնպիսի կեղծաւորներ, որոնք քահանայ չեն, և խաբում են տգէտներին, որոնք եթէ ուշ դարձնեն, կիմանան գործերից: Երբ յայտնվում են այժպիսիների գործերը, իրանք ևս հալածվելով զնում հեռանում են:

99.

Կապիկը տեսաւ մալուսին, որ լուացվում էր, ինքն ևս լուացվեցաւ, տեսաւ որ, նա բարձրացաւ մի բարձր տեղ և սխեց աղաղակել, ինքն ևս արաւ նոյնը. ցած գալով տեսաւ որ շունը գէշ է ուտում, կապիկն ևս կերաւ. բայց երբ մեղադրում էին նորան, նա ասում էր. ես այլազգի եմ, լուանալով սրբվում եմ, տեսածս եմ գործում:

Պարզ է առակիս միտքը, որ շատ չարութիւններ տեսնելով գործում են և լուանալով ասում են, թէ սրբվում ենք. պատճառը զնելով մոլար առաջնորդի վերայ:

100.

Մի թագաւոր երազում տեսաւ, որ անձրևի պէս աղուէներ էին իջանում, հրամայեց թագաւորը, որ յայտնեն առ մենքին. ով որ կարողանայ երազի միտքը իմանալ, կստանայ

Թագաւորից հազար դահեկան: Մի աղքատ մարդ զնաց թագաւորի մօտ և ասաց. ինձ երեք օր ժամանակ տուր, ես կպատմեմ երազիդ միտքը: Գնաց մարդը և մտածելով ման էր զալիս անապատում: Այնտեղ կար մի վիշապ, որ տեսնելով մարդին տարակուսված, ասաց. ի՞նչ կտաս ինձ, եթէ յայտնեմ քեզ թագաւորի երազի միտքը: — Ի՞նչ որ խոստացաւ թագաւորը, կէսն քեզ կտամ: — Վիշապն ասաց. զնա՛ և ասա՛, թէ ժամանակ է այսուհետեւ, որ մարդիկ նենգաւոր և խաբեբայ կլինին աղուէսի պէս: Գնաց մարդը և ասաց. որ հաւանելի եղաւ թագաւորին, որովհետեւ մարդիկ բոտ մեծի մասին այնպէս էին: Ատացաւ հազար դահեկանը, բայց խաբեց վիշապին, և չգնաց նորա մօտ անգամ: Թագաւորը կրկին անգամ տեսաւ երազ, որ անձրևի պէս իջանում էին ոչխարներ: Թագաւորը հրամայեց կանչել այն մարդին, որ առաջվայ երազի պէս միտքը պատմէ: Նա նոյնպէս մի քանի օր ներումն խնդրեց. բայց ամաչում էր զնայ վիշապի մօտ, որովհետեւ ապերախտ էր գտնուել վերջապէս զնաց կորազլուխ և ասաց յմեղայ քեզ. յայտնի՛ր երկրորդ միտքը. ես քեզ կտամ առաջին և երկրորդ հասնելքը: Վիշապը չմտաբերելով նորա յանցանքը՝ մեկնեց երազի միտքը այսպէս. թէ կգայ ժամանակ, և արդէն իսկ եկած է, որ մարդիկ ոչխարների պէս պարզամիտ կլինին: Մարդը զնաց պատմեց, որ նոյնպէս հաւանելի եղաւ թագաւորին, որ և տուաւ մարդուն առաջվան պէս հազար դահեկան: Այս անգամ մարդը տարաւ թէ առաջուան և թէ երկրորդ անգամ ստացած զրամները վիշապի համար: Թագաւորը երրորդ անգամ տեսաւ երազ, որ անձրևի պէս սուրիւր էին թափվում բարձրից: Հրամայեց թագաւորը կանչել այն մարդին, որ եկաւ և խնդրելով նոյնպէս ժամանակ զնաց վիշապի մօտ: Վիշապը նոյն բողբոսում մեկնեց երազի միտքը իբրև իւր բարեկամին և ասաց. զնա՛, ասա՛, թէ ժամանակ է, որ մարդիկ վեր կկենան բռնաւորների պէս

սուրերով: Քնաց պատմեց և ստացաւ հազար դահեկան ևս, և զնաց վիշապի մօտ. բայց մտածում էր թէ ինչո՞ւ թողնեմ հազար դահեկանը. վիշապի մօտ. հինգ հարիւրն ևս աշխատեմ ձեռք բերել, բայց ի՞նչպէս կխփեմ վիշապին և կսպանեմ: Մարդը սկսաւ գործ դնել իւր չար նպատակը, բայց չբյաջողվեց. որովհետև վիշապը խոյս տուեց: Մարդը զղջացաւ և մտածում էր ինքն իրան ասելով թէ ես չար գործեցի, և եթէ հարկաւոր լինի միւս անգամ, ես ի՞նչպէս գամ սորա մօտ. վիշապը տեսնելով, որ մարդը զղջացել է իւր արածի վերայ, ասաց նորան. «Մի՛ տրտմիր, քեզանում մեղք չկայ, ժամանակի բերմունքն է. ահա՛ քո սուտ ասելը՝ կեղծաւորների ժամանակն է. զղջալ և հազար դահեկան տալը միամիտների ժամանակն, իսկ ինձ քո հարկանելը (խփել) բռնաւորների ժամանակը:

Այլ այլ ինչ է առակիս միտքը, եթէ ոչ, ժամանակին ծանաշել մտրդկանց և զգուշանալ, որ ժամանակը զանազան մարդիկ է ծնանում, երբեմն նենգաւոր, երբեմն պարզամիտ, երբեմն բռնակալ և սոցա նման շատ բաներ:

101.

Փիղը տուեց իւր որդուն Պղատոնին, որ նորա մօտ ուսանի իմաստութիւն: Պղատոնը առաջին անգամ սկսեց սովորեցնել լսարանում չոքելը, բայց նա չէր կարողանում. յետոյ ասաց. գլուխդ խոնարհեցրո՛ւ զէպի երկիր, այն ևս չկարողացաւ: Պղատոնը վերադարձրեց նորան զէպի իւր հայրը և ասաց, «Որդիդ թագաւորի տան լինելու արժանի է միշտ ոտի վերայ կանգնելով, ոչ թէ իմ լսարանում. պատճառ, ոչ նստել է կարողանում և ոչ գլուխը խոնարհեցնել»:

Առակովս զիտեմք, որ հարկաւոր է ամեն մի կարգի արժանաւորին ընտրել կազմուածքով և բարքով և այլն:

102.

Ուղտին խփեց իւր պահապանը. նա բարկանալով ասաց պահապանին. «տե՛ս, ինձ այլ ևս չխփես, երբ որ ես տրտում եմ, ապա թէ ոչ կմեռնանիս իմ ձեռքով»: Պահապանը հարցրեց, «ի՞նչ է քո տրտութեան նշանը, որ իմանալով չխփեմ քեզ»: — Երբ որ կտեսնես, ասաց նա. իմ ներքին շուրթն (բռոշ) կախ ընկած և իմ ոտն ձայն չէ հանում, կիմանաս, որ ես տրտում եմ: — Ես ի՞նչպէս իմանամ, ասաց պահապանը, երբ ամեն ժամանակ այդպէս է լինում:

Չարաբարոններին է վերաբերում առակս, որ միշտ բարկացած են լինում, և պատճառ են բերում երբեմն թէ զայբացած լինելով չկարողացանք համբերել: Այսպէս ստույթեամբ ծածկում են իւրեանց չարութիւնները, բայց հաւատալի չէ նոցա նենգաւոր բարքին:

103.

Խոզը զնաց Քարդէացիների մօտ աստեղաբաշխութիւն սովորելու: Արհեստաւորը նորան հրամայեց անթարթ (աչք առանց ճպելու) նայել զէպի երկինք. բայց չկարողացաւ, որովհետև նորա պարանոցը (վիզը) ՚ի բնէ անշարժ է, որ և անկաբելի էր թեքել, ուստի հրամայեցին լսել: Բայց նա ասաց, ես երկրային իմաստութիւն ունիմ, որովհետև կարողանում եմ երկիր բրել: Լսելով այս աստեղաբաշխը ասաց, այո, այն պատճառով չես յարմարվում երկնաւորին, որ երկրաւորին ցանկացող եղար:

Առակս զէպի նոցա է, որոնք խոզի նման միշտ հաստապած զէպի երկիր, զէպի երկինք նայել և Աստուծոյ ձեռքի գործերը տեսնել չեն կամենում:

## 104.

Էջը գնաց սար կրօնաւոր լինելու և վախենալով տեղի դառնու թիւնից (և մանաւանդ խրատում էին, որ ծոյլ չլինի,) վախաւ ասելով, խառան խառան, որպէս թէ տաք է խառանը, որտեղից եկել էր նա կրօնաւոր լինելու:

Առակս դեպի նոցա է, որոնք աշխարհից և անասնական վարքից հեռանալով գնում են անապատ, և վախենալով կրօնքից և կրօնաւորների խրատից, դարձեալ զիմում են դեպի աշխարհ, յիշելով առաջին վարքը:

## 105.

Նախատում էին ջուրուն: Իշորդի լինելու համար, նա պարծենում էր մօր կողմով, բայց յաղթուեցաւ, որովհետեւ հօր ազգը զօրեղ է քան մօրը:

Այդ է առակիս միտքը, որ արժանի թագաւորութեան և այլ ամենայնի հօր կողմից քան մօր կողմից պատշաճ է:

## 106.

Ձին խրոխտալով չկամեցաւ հնազանդել հեծելու համար: Երբ փախած ման էր գալիս, պատահեց նորան սառիւծը, որից փախչելով, պատահեցաւ արջին, որից ազատուելով հանդիպեց դայլին. և այն. Յետ այնորիկ խոնարհութեամբ և հնազանդութեամբ դարձաւ ոչ թէ դարմանի այլ և մահից ազատվելու համար:

Առակովս պիտի խրատուինք, որ Աստուծոյն հնազանդել հարկաւոր է, ոչ թէ միայն նորա մեզ այստեղ պահպանելու այլ յաւիտենական մահից փրկելու համար ևս:

## 107.

Գոմէշը կամեցաւ երկրաչափ լինել. երկիր չափելու ժամանակ նեղացաւ և գնաց ընկաւ մի շամբի մէջ (եղեգնուտ տեղ, զամշլըղ). վարժապետը մեղադրեց նորան ասելով թէ անհամբեր ես: Արին պատասխանեց. «Մի՞թէ միայն երկիրը հարկաւոր է չափել, ջրաչափ ևս կլինիմ:»

Առակս դեպի նոցա է, որոնք թողնելով մի ժամանակ ապականուած վարքը, կրկին վերադառնում են դեպի առաջին սովորութիւնը: Բայց երբ մեղադրվում են, նոքա այնպէս են պատասխանում. «Մի՞թէ միայն պարկեշտներն են, կան և մեղսասէրներ, նոյնպէս և մենք:»

## 108.

Գոմէշը կամեցաւ խփել իւր պահպանողին, բայց չկարողացաւ, և սկսեց արոնջալ Աստուծոյ վերայ, թէ ինչու իմ եղջիւրները (պօղեր) ուղեղ չստեղծեց: Գոմէն պահպանողն ասաց. «Աստուած իմանալով քո չար կամքը, այդպէս հրամայեց քեզ ունենալ եղջիւրներ:»

Առակս ռեալիստների համար է, որ նոցա կամբի համաձայն թոյլ չէ տալիս Աստուած վրէժ առնել նոցա ձեռքով:

## 109.

Վիշապը եղջերուի հետ կամեցաւ պատերազմել (կռուել) և մտածում էր, որպէս թէ եղջերուն դաշտում հարթ տեղում չէ կարող խփել: Երբ կռիւն սկսաւ, ստերով ևս յաղթում էր. որջի մէջ մտնելով՝ այնտեղից ևս մերժում էր շնչով. մտաւ ջրի մէջ, որտեղից խնամ էր եղջերուն, որ այնտեղ խփէ:

կոխատում էր և այնտեղ և ամեն տեղ յաղթող էր երևում: Նման է առակս միայնակեացնրի հետ բանասարկուի կռուին, որ եթէ երկրաւոր վարքով է կովում, երկրաւոր բաները ոտի տակ են տալիս, և եթէ նեղութեամբ, խորհրդով են յաղթահարում. և եթէ զիտութեան է ձեռք մխում, այնտեղից ևս հալածում են և ամեն բանով յաղթող են լինում Տէրի նման:

IIO.

Գայլը սպասում էր այծեամին (վայրի այծ) որ երբ ննջէ, նորան բռնէ. բայց նա խմանալով չէր ննջում շատ օրեր, մինչև որ գայլը թմրելով նիրհեց (խոր քնեց). առիւծն եկաւ և սպանեց գայլին:

Այս առակը միանձնեան յարմար է, որ սպասում է ոտու խը նոցա ախտերով ննջելուն, որ կարողանայ յաղթել, բայց երբ նոքա արթուն են լինում, տաղտկանում զղվում է ոտխը և ինքն վերջում յաղթվում:

III.

Թորեկը (կատու) աղաչում էր ոգնուն, թէ սուր ինձ օրդիդ ինձ որդեգիր լինելու. ե՛կ բարեկամ լինի՛նք: Շատ օտիւ պելուց յետոյ յանձն առաւ: Եւ երբ ստացաւ ասաց. որովհետեւ զժուարահամբոյր է որդիդ, ուստի մերկացրու նորան իւր վուշերից, որ հեշտ լինի զրկել և զգուել: Խաբուելով այնպէս արաւ և տուաւ թորեկին, որ սկսաւ ուտել և վերջում շատ սուղով հեռանալ այնտեղից:

Առակովս այլասեռնեան խորամանկութիւնն է յայտնում, որ քրիստոնեայ պարզամիտներին խաբում են, որ իւրեանց որ-

դիները տան այլասեռ իշխաններին այն նպատակով, որ նոքա պատուելով մեծացնեն նորանց. և չեն կամենում, որ նորանց խրատողներ լինին, այն պատճառով, որ նոցա հոգիները զրկելով ճճեն և նոցա արիւնները Բայց երբ յայտնվում է այնպիսիներին խաբէութիւնը, միայն իւրեանց արտասուքով և ողբով կամենում են խաբել նոցա ծնողներին: Այսպէս և պատահում է զուստրներին հետ

112.

Յովազը (Ֆէլենկ) որսի ետեից ընկնելով՝ չյաջողվեց լրան, որ և սկսաւ նախատել իւր պահպանողին: Նա ոչ ուտում էր, ոչ խմում և ոչ մի տեղ բարձրանում: Նորան ասաց տէրը մեղքը քննէ, որ ոչ թէ համբերութեմբ այլ հեղգութեամբ ևս որսում:

Ծոյլերին է վերաբերում առակս, որ սակաւ աշխատելով թէ հոգևոր և թէ մարմնաւոր զործերում, և երբ չեն յաջողվում, մեղքը իրանց վերայ զցելու փոխարէն, արանջում են Աստուծոյ և իրանց խրատողների վերայ:

113.

Յամաքային կենդանիներին թաղաւորից հրաման դուրս եկաւ, որ գան անյապաղ ժողովին ամենքն իրա մօտ: Շուտով կատարուեցաւ հրամանը. ամենքն ժողովեցան. եկան քարաթաւ, մողէս և խլուրդ, որ նոքա ևս պարզեւ ստանան, որովհետեւ թաղաւորը այդ իսկ բանի համար էր կոչում, որ ամեն մէկին պատուէ: Թէ և ամենքն ծաղրում էին նորանց. բայց նա մեծարեց ամենքին ինչպէս արժանն էր և հարցրեց, դուք ինձ ի՞նչ ծառայութիւն ցոյց կտաք, որ ինձանից պատիւ էք ստա-

նում: Քարաթաւը և մողէսը ասացին, մենք քարամուտ ենք, մեր տէրիւք թշնամիների բերդը կմանենք, թէ յաղթել ևս չկարողանանք, զօրք կհաւաքենք այնտեղ: Խլուրդներն ասացին. թէ մենք ևս քաղաքը կմանենք ական հասանելով (նաղիմ ապով):

Առակովս յայտնում է, որ ամենքեան թէ մեծ և թէ փոքր, ոչ միայն թաղաւորները այլ և իշխանները և՛ աշխարհականները և՛ եկեղեցականները կարօտութիւն կունենան փոքրներին և անարդներին:

114.

Թուչունները առ հասարակ աղաղակ բարձրացրին, թէ մեր իշխան արծիւը չար է, պատճառ, միշտ ինքն մեղանից է կերակրում, և զո՛նէ մեզ ուրիշ որսողներից չէ պահպանում: Այս լսելով արծիւն ասաց. «Գորանից աւելի ձեզ էլ ի՞նչ բարութիւն, որ երկու որդի եմ ծնանում և նորանից մինը ոչնչացնում, մինը ինձ մօտ պահում, որ ձեզ ծանրութիւն չըլինի: Գուք իմ մօտ լինելով՝ ոչ ոք չէ կարող ձեզ որսալ. իսկ ուրիշ տեղ ձեզ անպատրաստ գանելով որսումեն. ուրեմն զուք ՚ի զուր էք չարախօսում:»

Առակիս յարմար են վարվում թաղաւորները իւրեանց մօտ պահելով թաղաւորութեան ժառանգ որդին, որ ոչինչ փրաս չլինի թաղաւորութեան. նոցա միմեանց մօտ լինելով ոչ ոք չէ կարող չար գործել:

115.

Չազերը ասացին իւրեանց ծնողներին, թէ ինչո՞ւ արծուի և բաղէի նման մեզ համար կենդանիներ չէք որսում,

այլ մեռածների ոսկրներ էք բերում մեզ համար կերակուր: Ծնողները պատասխանեցին. «Ո՛րդեախներ, այն պատճառով մեզ Աստուած երկայնակեաց ստեղծեց, որ կենդանիներին չենք սպանում, այլ բաւականանում ենք մեռածներով քահանաների նման, և ոչ թէ բռնաւոր իշխանների նման, որոնք յափշտակում են կենդանիներին:»

Առակովս կամենում է, որ արդարապէս վարվինք. չյափշտակինք անիրաւութեամբ, որ երկար կեանք ունենանք:

116.

Բազէն աղաւնու ետեւից ընկաւ որսալու. բայց նա աղաղակում էր, «Եւ Աստուծոյ պատարագ եմ, ինձ մի՛ մեղանչեր» իսկ բազէն ասաց. Աստուծոյ պատարագը Աստուծոյ սեղանումն կլինի, ոչ թէ այստեղ օղումը ման կգայ. այս ասելով բռնեց և կերաւ նորան:

Առակս վերաբերում է նորանց, որոնք մահից վախենալով ասումեն թէ մեր անձները Տէրին ենք նուիրել, որոնց յարմար է ասել, թէ կրօնաւորին հարկաւոր է անապատում բնակիլ և ոչ թէ աշխարհում դատարկաշրջիկ կեանք վարել:

117.

Արուժանը (արու թուչուն) տեսնելով բազմորդի լորին՝ զոհանում էր Աստուածանից և ուրախակից լինում լորի հետ: Լորը ասաց նորան, «Ի՞նչ Ծճմարտութեամբ ես զոհանում, երանի՛ է քեզ:» Բայց նա իսկոյն խփեց նորա ձագերից մէկին և բռնեց: «Ահա՛, ասաց լորն, յայտնի եղաւ, որ Աստուածանից զոհանում էիր աղահուստեան համար:»

Առաւելս յայտնումէ հարուստներից ոմանց բարբը, որ ուրախանում են իւրեանց ձեռք ընկած յաջողուածներովը իրանց սեպհական կարծելով ուրիշներինը:

II8.

Շահէնի (Թագաւորական բաղէ) ձեռքից որսայլու ժամանակ աղատուեց հաւբալի ձաղը, և սասաց, Թո՛ղ այդ պապատարագ լինի Տէրին: Հաւբալն ծաղր առնելով նորան սասաց, ինչ որ ձեռքովդ մատուցանես, ա՛յն կլինի պատարագ:

Առաւել վերաբերումէ հովուին, որ գաղաններին կերակուր եղածը, գայլերից պատուածներ և վերաւորվածները՝ ասում է, Թո՛ղ նուէր լինին Տէրին:

II9

Յինը հաւի ձագեր տեսնելով խոտացաւ ընծայ մատուցանել սուրբ Սարգսին, և թէ յաջողէր իրան որսալ նորանից: Բայց որսի վերայ ցած իջանելու ժամանակ՝ փուշ կպաւ նորա աչքին և կուրացրեց նորան, որ և սկսաւ չարախօսել սուրբի վերայ, որ չօղնեց նորան այդ գործում:

Առաւելս յանդիմանումէ նորանց, որ իրանց չար գործեր գործած ժամանակ աղաչում են սուրբից օգնութիւն, չիմանալով յիմարները, որ սուրբերը չար գործերի պատճառ չեն լինիլ և ոչ լսող իւրեանց չար խօսքերին:

I20

Չիտը տեսաւ ջայլամին, որ մեծ մեծ ձու էր ածում, հետաքրքրութեամբ հարցրեց իմանալ պատճառը, որին պատասխանեց, թէ կրակ եմ կուլ տալիս, այն պատճառով եմ

այդքան մեծ մեծ ձուեր ածում: Յշմարիտ կարծելով չիտը կրակ կուլ տուեց և մեռաւ. չմտածելով, որ ջայլամի մեծութիւնն էր պատճառ մեծ մեծ ձու ածելուն:

Առաւելս յանդիմանումէ տկարների՝ ՚ի գուր աւելորդ ցանկութիւնը, որ զօրեղների գործերը տեսնելով, ցանկանում են և ինքեանք ունենալ, չմտածելով իւրեանց տկարութեան վերայ:

121

Չատկի տօնին ամեն թռչուններ գնացին և խոտովանո թեամբ հաղորդում էին. գնացին նոցա հեռ և սահուր և հողամաղը և խոտովանեցան քահանային, թէ մենք խիղճ ասածը չգիտենք, մենք միներ և գորտեր որսացինք և կերանք: Քահանայն մերժեց նորանց պիղծ կոչելով: Իսկ նոքա գնացին սուրբ ձաղեր որսացին և բերին տուին քահանային որ խաբվեց և արդարացրեց նորանց, ասելով թէ գուք չիմացաք խոտովանել. այդ ձերացած և փտարազուրկ թռչուններ էին. և այդպէս հաղորդեց նորանց:

Առաւելս յանդիմանումէ աղահ քահանաներին, որ պոռնիկներին և ուրիշ պիղծերին մերժում են եկեղեցուց երկիւղ տալով, իսկ յետոյ ընծաներով ընդունում են նորանց պատճառներ բերելով և հաղորդում:

I22.

Ճնճուկները երամով (խումբով) գնացին արազկի (էյկէյկ) մօտ և աղաչելով ասացին. «Քո բունի մէջ մեզ տեղ տուր ձագեր հանել. և պահպանի՛ր մեր ձագերը օձերից» — Ինձ ի՞նչ կանէք, ասաց նա, որ ես ձեր կամքը կատարեմ: — Աղօթք կա-

նենք, պատասխանեցին նորա, որ ձեր ձագերը առողջ մնան վնասակար օղից, և հանդերձելու մն կհանքի արժանի լինիք ձեր արգարութեան պատճառով: Ի վերայ այսր ամենայնի նա տեղ տուեց նորանց: Երբ ձագեր հանեցին նորա, օձը սողաց նորանցից որսալու: Տառեղը (արագիլը) տեսնելով սպանեց օձին. և ման էր գալիս նոցա չորս կողմով, որ սահմաններում գտնուած օձերին բոլորովին ոչնչացնէ նոցա փրկութեան համար:

Առակովս ուսուցանուած է վշտակից լինիլ տկարներին, և ցանկանալ, որ նոքա փրկութիւն վայելեն:

I23.

Բուն (բայցուշ) պատգամաւոր ուղարկեց արծուի մօտ, և խնդրեց նորա աղջկը իւր հարսնութեան, ասելով: «Ի ու ցերեկը քաջամարտիկ ես և ես զիշերը, ուրեմն յարմար կլինի մեր խնամութիւնը: Շատ աղաչելուց յետոյ արծիւն յանձն առաւ տալ: Հարսանիքի ժամանակ՝ որովհետեւ ցերեկ էր, լոյս չէր տեսնուած փեսայն. ուստի բաղմականները ծաղը արին նորան. երբ զիշերացաւ, հարսը չտեսաւ լոյս, սորան ևս նոյնպէս ծաղը արին. այս պատճառով լուծվեցաւ (քանդվեցաւ) հարսանիքը:

Առակս վերաբերում է այն հաւատացեալ թաղաւորներին և իշխաններին, որոնք իւրեանց աղջիկները մէկ պատճառով ամուսնութեան են տալիս այլազգիներին, նոցա, որոնք խաւարված են հաւատոյ լոյսից:

I24

Արծուի ձեռի տակ գտնուած բոլոր թռչունները աղաչեցին և ասացին, «Մենք քո հարկը կտանք անյապաղ (առանց


ուշացնելու) միայն դու մեզ միշտ մի՛ վախեցնէր: «Արծիւը դաշինք զրեց և շատ ժամանակ մնաց նոցա հետ խաղաղութեամբ. բայց նորա սխեցին ապստամբել և արհամարհել. մինչև անգամ ժողովեցան, որ գահալէժ անեն նորան իշխանութիւնից: Ճնճղուկն էլ պարծենում էր. թէ ես էլ կծրեմ նորա աչքում և կկուրացնեմ նորան. այդպէս ամեն մինը պարծենում էր իւր զօրութեամբ. մինչև անգամ սխեցին կռիւ բաց անել նորա հետ: Այս ամենին նա այլ ևս չկարողանալով համբերել՝ յարձակեցաւ նոցա վերայ և սպանեց նորանցից շատերին:

Առակս վերաբերում է անհաւատներին և հաւատացեալ թաղաւորին, որ բարեպաշտութեամբ խաղաղութիւն է սիրում. բայց նոքա ապարախտ լինելով ապոտամբում են և խաղաղութեան պատճառը չիմանալով ծաղրուում են և պատճառ չենում պատերազմի և՛ ահամայ և՛ անխնայ մահուան:

I25.

Ընտանի հաւր իւրեան բռնելու ժամանակ աղաղակում էր. ոմանք մեղադրում էին թէ ինչո՞ւ ի զուր աղաղակ ես բարձրացեցում. նա պատասխանեց, թէ վախենումեմ, որովհետեւ միշտ բարի նպատակով չեն բռնում. երբեմն զլիսի վայր կախ են տալիս և շատ օրեր ճանապարհ տանում. և երբեմն կրակի վերայ խորովում և ուտում:

Առակովս տերերի բարքն է յայտնում, որ միշտ բարի չեն լինում, թէ և քաղցր են երևում, բայց երբեմն չար ևս սպասելի է նորանցից, ուրեմն հարկաւոր է զգաստ լինիլ և պատրաստութեամբ վարվել նոցա հետ:



126

Մէկը շատ անգամ աղաւնու ձազը բռնելով՝ դովումէր նորա միամտութիւնը, որին վերջապէս ասաց աղաւնին. ո՞վ խտտասիրտ մարդ, եթէ ինձ միամիտ ասուեցաւ, մի՞թէ քեզ արիւնարբու լինիլ հրամայեցաւ. այժմ յայտնի է, որ դու չար մտքով ես գովում:

Առակովս գրիողների բարքն է յայտնում, որոնք իմանալով թէ անոխակալ կլինին առաքինի մարդիկը, առաւել չարանում են և կամ գովում նոցա վարքը, որով և յանդիմանվում են. որ եթէ պատուիրեցաւ առաքինիներին համբերել. մի՞թէ նոցա հրամայեցաւ զրկել. դորանով յայտնի է, որ նոքա յանդգնութեամբ են գործում:

127.

Թռչուններից ոմանք հիւր գնացին տատրակի մօտ և տեսնելով որ ազքատ և ցնցոտի կրօնաւոր է, ցոյց տուին նորան կրօնաւորութեան յարմար մի աւելի նեղ տեղ, մի և նոյն ժամանակ պահանջումէին նորանից զանազան կերակուրներ, որ չունէր: Ի վերայ այսր ամենայնի տատրակն ասաց. «ես ձեր ամեն մէկի խորհուրդը միմեանց հակառակ եմ տեսնում»:

Առակովս յայտնում է աշխարհականների սովորութիւնը, որ կրօնաւորին տեսնելով քարանձաւներն են (մազարայ) ցոյց տալիս նոցա տեղը, մի և նոյն ժամանակ պահանջում են նոբանցից պարարտ կերակուրներ:

128.

Աքաղաղը շատ անգամ աղաղակեց և ասաց, Աստուծոյն

ևս յայտնի է, որ մի կամ երկու բարբառը արթուններին բաւական է, իսկ շատը ծոյլերի համար է, որ նորանով ևս ծոյլերըն չեն զարթնում, բայց միայն պէտք է ծոյլերի պատճառը կարել:

Առակիս մտքը այս է, որ սուրբ գրքի վարդապետութիւնը մի կամ երկու անգամ բաւական է զգաստներին, իսկ շատ անգամ կրկնելը ծոյլերի համար է. թէպէտ և յայտնի է քարոզիչներին, որ խտտասիրտներն շատից ևս օգուտ չեն ստանում, այլ որ պատճառ չբերեն թէ մենք չենք լսել, այն պատճառով շատ են խօսում:

129

Ճնճղուկներն ժողովեցան միասին խորհրդակցելու որսողների վերայ, իսկ մի ծերունի ասաց, «Մի՛ ժողովիք, գուցէ թշնամիները լսեն ձեր թեւերի ձայնը. թռչելով ևս կ'յայտնէք ձեր վախկոտութիւնը. աւելի լաւ է, որ գնաք աղօթէք առ Աստուած»: Նոքա չլսեցին, և յանկարծ որսողների թեւերի ձայն լսելով ցրիւ ընկան:

Առակովս կամենում է մեղ խրատել, որ երբ չենք կարող ընդդէմ կանգնել մեր թշնամիներին, լաւ է, որ չժողովնք նոցա համար կարծիք տալու, և շուտով չցրուինք նոցա երկիւղից և մեր վախկոտութիւն չյայտնենք, այլ իմաստունների խրատին լսելով պէտք է Աստուծոյն ասպաւինել:

130.

Մեռաւ ազուսի որդին, որի վերայ շատ սղաց նա. եկան և շատերը նորա հետ ողբալու: Ազուսը մեծ ճաշ պատրաստեց սղաւորների համար և ասաց. «Այս քրիստոնեաներիցն եմ

սովորել, ոչ թէ այլազգիներից, որոնք ազահ լինելով լացի համար՝ հացի չին կանչում. այսպէս արաւ և ազուաւք:

Առակովս նոցա կարգերի սովորութիւնը անվայել է համարում թէ սուզի և այլն:

131.

Անձեկը անտառում միշտ սովորաբար աղաղակում է, մանաւանդ կենդանիներից մէկին տեսնելու ժամանակ. երբ իւր ձաղը կամեցաւ իմանալ պատճառը, պատասխանեց նա, որ իմ թշնամիները ինձ միշտ արթուն տեսնեն և որս չմտաբերեն:

Առակովս սովորեցնում է մեզ միշտ արթուն լինիլ, աղօթք և օրհնութիւն անպակաս ունենալ, որ մեր հոգու թշնամին չվստահանայ պատերազմ տալ մեզ հետ մեզ յաղթելու նպատակով:

132

Սարեկը իւր որդին տուեց քահանայական ուսման, բայց նա սուլելով, ձայներ հանելով թեւերն էր թափահարում. քահանայն թէ և խրատում էր աշխատել սովորել սաղմոսներ և օրհներգութիւններ, որոնցից ծնանում էին հոգու համար սուզ և զղջումն. բայց նա աշխատում էր պար զալ աւելացնել, ասելով թէ իմ հօր արհեստը ուրախութիւն պատճառող է իսկ քո արհեստը տրամոթիւն, և թէպէտ սովորեց, որ այժմուս տրամոթիւնը յետոյ ուրախութիւն կրերէ, սակայն չլսելով նորան, զարձաւ իւր տուն:

Առակովս յայտնում է երկրաւոր ուրախութիւնների խաբէութիւնները, թէ որոնց վերջն սուզ է լինում, և հոգեւոր սուզի վերջն ուրախութիւն, ինչպէս ասում է Տէրն:



133

Անգղը արջնագուաւին հարսանիք հրաւիրեց, նա մերժում էր, ասելով թէ որովհետեւ ես կրօնաւոր եմ և սղաւոր, ուստի չեմ կարող զալ: Կամեցան նորան սուզից հանել, բայց նա յանձն չէր առնում ասելով, եթէ այսօր հանէք ինձ սուզից, վաղը անշուշտ պէտք է հաղնեմ, ուրեմն լաւ է բնաւ չհանել:

Առակս վերաբերում է կրօնաւորներին, որ միշտ սեւազդեստ են և սղաւոր. մարդկային բնութեան նայելով, որ եթէ մին կամենայ մի կարճ ժամանակում զուարճանալ, յիշէ, որ այդ երկար չէ լինելու, լաւ է, որ այնպէս մնայ:

134.

Ճայեկը սազին (դազ) աղաչում էր ասելով, թէ ես սեւաղէմ լինելով արհամարվում եմ ամենքից. իսկ դու այդքան սպիտակ ես և պայծառ, խնդրեմ և ինձ սովորեցնես, որ և ես քեզ պէս սպիտականամ: «Շատ բարի, ասաց սազը, միայն միշտ ինձպէս լուացվիր ջրով:» Լուացվելու ժամանակ դուրս էր ընկնում նորա սե վետուրը, և զարձեալ նոյն ձևով դալիս էր: Կարձեալ աղաչեց սազին. նա ասաց թէ «լուացվելու ժամանակ իմ լեզուն ևս պիտի սովորիս, որ կարողանաս ինձ նման լինիլ:» Ճայեկը յանձն չառաւ մտանալ սազի ձայնը, և մնաց նոյնպէս սեւաղէմ:

Առակիս միտքը այս է, որ պարսիկը սեւաղէմ է հոգեով. որ դալով քահանայի մօտ կամենում է հոգու պայծառութիւն սովորել: Նա լուացվելով մեղքից սրբված է կարծում, բայց ճշմարիտ խոստովանութիւն յանձն չառնելով, մնում է նոյնպէս սեւաւ հոգեով, որին արժան չէ և ոչ ջրով մկրտել, եթէ հաւատ չէ ընդունում:

## 135

Միրամարդը իւր զեղեցիութիւն ամենքին յայտնելով դո՛ւն թիւն էր ստանում. յետոյ մտածեց թագաւոր լինիլ: Իմաստուններից ոմանք խրատեցին, թէ չպէտք է խաբուիլ. ազգով պէտք է թագաւոր լինիլ. բայց նա չէր կամենում լսել նորանց, այլ ցանկանում էր իւր նպատակին հասնել: Թուշուններ թագաւորը լսելով եկաւ և կոտորեց նորա մանուկներին և նորա ազգատոհմը: Շատերն ևս նորա թեւերը և փետուրները դուրս քաշելով՝ մերկացրին նորան, որ ոչ թէ թագաւորութեան չարժանացաւ, այլ իւր զեղեցիութիւնից ևս զրկուեցաւ:

Սորա պէս շատերն խաբուեցան չար յորդորդների խօսքերին լսելով. այբախօսները փառքի չհասնելով իւրեանց ունեցածներից ևս զրկուեցան:

## 136

Որսորդը կաքաւների երամ տեսնելով՝ խոստացաւ նորանց պատիւ տալ թագաւորի տանը և իրանց կամեցած կերակուր պատրաստել: Ոմանք կասկածելով ասացին. չար է խոստումնդ. դուք մեր ազատութիւնն էք խափանում. վերջումն ևս մեզ կեանքից զրկել էք կամենում, և ուրիշներին մեզանով որսում. մենք դորան չենք հաւանում. այս ասելով թե խփեցին և փախան: Իսկ նոքա, որոնք խաբուելով նորա դէմքից, դիմելով դէպի կերակուրն և ընկերն, որ աղաղակով կոչում էր, իօհոյն բռնուեցան, և այն ամեն անցքը, որ պատմուեցան իմաստուններից, նոցա գլխին կատարուեցան:

Յայտնի է առաւիյս միտքն, որ որսորդն՝ մարդկային ազգի որսին խաբում է նորանց թագաւորական պատուով և փառքով

և ուրիշ որինակով. բայց իմաստունները վերջին վնասին նայելով, որ նոքա այստեղ ազատութիւնն են խափանում և վերջումն ՚ի կորուստ մատնվում, իրանք ազատվում են չարից փախչելով:

## 137.

Կիւն Ափրոդիտականից նեղանալով գնաց խոստովանեց տատրակին, թէ այնքան եմ տանջվում, որ իմ ձաղը չեմ հանում. ուրիշի բոյնի մէջ եմ ձու ածում: Տատրակը խրատեց նորան և ասաց, «Աղօթք արա և կրքիդ տեղ մի՛ տար» բայց նա տաքանալուց չէր դատարում, թէ և նուէրներ էր մատուցանում, ոչինչ օգուտ չէր ստանում, այլ ևս յանդիմանվում էր:

Առաւիյս վառաշոտներին է յանդիմանում, թէ և խոստովանում են ողջախոհներին և նուէրք են տալիս Աստուծոյն, բայց երբ որ իրանց կրքերին, չար խորհուրդներին ընդիմանալ չեն կամենում, անօգուտ են մնում:

## 138.

Ծիծեռնակը իւր բնակութիւնը տան գերանի տակ շինեց որսողների երկիւղից և ընտանի թշնամի մկներից նեղանալով կատուից մի մագ առաւ դրեց իւր բունի մէջ. դորանով իւր ձագերը մնացին անվնաս:

Այս թռչունի առաւիյս խրատում է, որ երբ օտար թշնամիներից ամբանալով զգուշանում ենք և ընտանի թշնամիներից նեղութիւն կրում, նոյն իսկ ընտանիներից պէտք է մեզ օգնականներ գտնենք նոցա դէմ:

139.

Հաւքալը տատրակի բոյնը քանդեց և իրանը շինեց. այդ պատճառով նորա դատաստան զնացին արդար արազլիլ մօտ, և այնտեղ միմեանց նախատուճէին և պարծենում, տատրակը ողջախոհութեամբ և կրօնաւորութեամբ, իսկ հաւքալը քառանօրեայ պահեցողութեամբ. այսպէս նախատուճէին մին կեղծաւորութեամբ միւսն ուրիշի վատասին ուտելով: Իսկ դատաւորն երկուսին սաստեց և հարցրեց հաւքալին, թէ ինչո՞ւ քանդեցիր. նա պատասխանեց, մի շինուածի նշան չտեսի, այն պատճառով ես ինձ համար վեր առի: Գարձեալ հարցրեց դատաւորը, դո՞ւ էիր դրել, որ վեր առիր:— Ո՛չ, ասաց նա: Կրկին հարցրեց, միմեանց վերայ չիա՞ր մի երկու գերան զրուած:— Կար, ասաց հաւքալը: Գատաւորն հրամայեց յետ դարձնել և տուգանք ևս տալ:

Առակովս սովորեցնում է ողիզ դատել և ոչ յայտնապէս մեծարանել և կամ թշնամանել միմեանց, և դարձեալ ինչ որ մենք չենք դրել, սովորեցնում է վեր չառնել, և ուրիշներէ շինուածները՝ թէ վատ ևս լինին, չքանդել:

140

Թորդերը (կուռնիներ) իւրեանց զնալու ժամանակ կարգաւորվում են և միմեանց զէպի առաջ են տանում, և միմեանց տեղ են տալիս կռկալու ժամանակ, մի քանիսների պէս ոչ թէ միայն են շրջում, այլ և պահպանում են միմեանց:

Սոյնպէս և մենք պէտք է միաբան լինինք և զգոյշ, և միմեանց պատիրը պահենք, պահենք և մեր ընկերի անձն չարից:

141

Բուխձակը աղաղակում է կառ, միւսն պատասխանում է կաճ, բայց չկայ, թուչելով ուրիշ տեղէ դնում:  
Ստախօսներին է վերաբերում առակս, որ շատ անգամ յանձն են առնում ճշմարտութիւնը կատարելու, բայց չեն կատարում:

142

Արաւը և կելը կղզիներումն են հանում ձագեր, և աներկիւղ անցուցանելով ասում են ձագերին, ահա այսուհետեւ մենք անպարտ ենք, դուք ինքներդ պէտք է ձեզ զբոշանաք:

Առակովս սովորեցնում է քրիստոնեաների մանուկներին մեծացնել կրթել և կեղեցիներում մինչև նոցա չափահաս լինելը, մինչև որ կարողանան չարն ու բարին հասկանալ և այնուհետև անպարտ լինիլ նորանցից:

143

Ձինաքալը մեծ պատում ձուկն էր ուտում, բայց կատարը իբրև խոտակիր թուռն, բամբասում էր նորան. իսկ նա ասում էր, թէ ես Յոյն և Վրացի քահանաներիցն եմ սովորել, և սորանով աւելի լաւ եմ, որ զինի չեմ խմում:

Առակովս յանդիմանում է որովայնամոլներին, որ պատճառներ են բերում շատերե գայթակղութեան համար:

144

Սարսարակ թուռնը ցերեկը պարարում է, և զիշերը վաղուան համար հողս անելով մաշվում:

Առակովս յանդիմանում է հոգածուներին, որ չմոռանան Տէրի պատուէրը, այսինքն չհոգալ վաղուան համար, որ ախտ է հոգւոյն և մարմնոյն:

## 145

Սոխակ և ցախ սարեկը և սոցա նման ուրիշ երգողներն ոչ միայն երգում են, այլ և սիրում են աննախանձաբար ուրիշի համար երգել:

Առակովս կամենում է, որ մենք աննախանձ լինինք, և մեր օրհնութիւն երգելու ժամանակ, սիրենք և ուրիշների երգելը:

## 146

Ճպուռը այնքան երգում է, մինչդեռ օդից յղանում է և ծնանում մարմինը մերկանալով:

Առակս սուրբերի օրհներգութեան է վերաբերում, որ յղանում են հոգւով բարի խորհուրդներ և ծնանում առաքինութիւններ՝ մարմնոյ կիրքը մերկանալով:

## 147

Մրջկենի բոյնը արջը փորում էր և լեզուով ժողովում և ուտում. մրջկենն էլ աշխատում էր հնարք գտնել նորան սպանելու. գնում է պիծակի, գոռելիս, մթելիս, շանաճանձի և բրէտի և սոցա նմանների մօտ, և աղաչում է օգնել ազգասիրաբար: Նոքա ցաւակցելով խփում են արջի աչքին և ականջներին, որ և իւր գլուխը խփելով քարին՝ վէրք է ստանում և նեխում. որից ծնանում են որդներ և ցաւի սաստկութիւնից

բերանաբաց գոչում է. իսկ նոքա նորա որովայնը մանելով խոցոտում են նորա աղիքները, որից տանջուելով և ցաւից ստիպուած զիմուճ է դէպի ջրի հոսանքը, և չափից դուրս ներս մանելով խեղդվում է:

Առակիս միտքը այս է, որ զօրեղները տկարներից չվախենալով արհամարհում են, սակայն իմաստութեամբ զօրանում են փոքրները և յաղթում զօրեղներին. խոհեմութիւն է վախենալը փոքրներից իբրև մեծերից:

## 148

Յոպուպը թէպէտ արդարախոհութեամբ ծերացած հայր է կերակրում, սակայն շատերը արհամարհում էին նորան զազրահոտութեան համար, նա մի անուշահոտ նիւթ գանելով թագցնում էր իւր կուրծքի վերայ, բայց նորանով ևս չէր կարողանում ծածկել իւր վատ հոտը:

Առակս վերաբերում է նորանց, որոնք շատ բաներում գովելի են լինում, բայց եթէ ունենում են մի վատ բան իրանցում բնութիւն արած, և այն ուրիշ վարքով ծածկել չեն կարող:

## 149

Չղջիկը որովհետև ցերեկը լոյս չէ տեսնում, մտնում է մեծ մեծ քարերի ճեղք և կամ խորափիտ տեղեր, և որովհետև նոքա վատահոտ են և զազրատես, ցերեկը դուռնդ են լինում և զիշիրը համարձակում:

Առակս վերաբերում է բանսարկուներին և աւազակներին, որոնք արդարութեան լոյսից փախչելով՝ սիրում են խաւարը: Բանսարկուները սպէսների հետ են շրջում. աւազակները սի-

րով մէկ տեղ են ժողովու՞մ. ինչպէս չարահոտ են վարքով,  
նոյնպէս գործու՞մ են զիշերները և չարութիւններ:

150

Թռչուններն առ հասարակ ժողովեցան զուարճանալ  
ծովի վերայ. ոմանք շրջումէին ծովի եզերքում, ոմանք բոլո՞  
րովին խորասուզու՞մ էին, իսկ ոմանք բարձրանու՞մ էին և դարձեալ  
իջանում և հեռանալ չէին կարողանում. իսկ ոմանք  
թռչելով սարերի վերայ էին իջանում, որոնցից ոմանք ևս  
գալիս էին և ընկղմու՞մ (բաթմիշ լինում): Այսպէս կորած-  
ների հանդէսն աւելի էր լինում, քան փրկուածների:

Առակիս միտքը այսպէս իմացիր, — ծովն աշխարհս է. թռչունները մարդկան ազգերը, որոնք զբաղվում են աշխարհային  
կեանքով. ոմանք պարկեշտութեամբ են վարվում, ոմանք բոլորովին  
աշխարհի սիրոյ մէջ ընկղմուած են, ոմանք աշխատում են ազատ լինել  
շատ անգամ, բայց չեն կարողանում. ոմանք սարերում են կրօնաւորութիւն  
անում, որոնցից ոմանք խարվում են աշխարհի ցնորքով, ինչպէս ասում է  
Տէրն Վատերն են կանչուած և քիչերն ընտրուած:

151

Մարախ Աստուծոյ զօրք է անուանվում, որ Նորա հրամանով  
ժողովում են երկիր ապականելու համար. և Նորա խնամքով ուղարկվում է  
տարմ (մորեխածտի խումբ) նորանց ջնջելու համար:

Առակովս կամենում է ասել, թէ Տէրի կամքովն են թագաւորները  
զօրաժողով լինում երկիրը աւարով ապականելու, և նորա խնամքով  
զօրանում են ոմանք նորանց հալածելու համար:

152

Մեղուաքաղը մեղուին չէ վնասում, որքան իւր տանն է լինում  
(այսինքն փեթակում) բայց զբոսում գտնելով կրանում է նորան:

Բանասերուն մեզ յաղթել չէ կարող, որքան եկեղեցում լինինք  
և մտքով դէպի Աստուած. բայց զբոսում գտնելով մեզ կզցէ  
շատ յանցանքի մէջ: Առակովս այս պիտի սովորինք:

153

Թիթեռնիկները որքան օդի մէջ շրջում են, ոչինչ վնաս չեն  
գործում, իսկ իջանելով երկրի վերայ՝ ծնանում են երկիր ապականող  
թրթուրներ:

Առակովս այս պիտի իմանանք, որ որքան մեր խոհականութիւնը  
երկնքում է շրջում, շահվում է և չէ վնասվում, բայց եթէ խոնարհվում է  
դէպի երկիր, ծնանում է զազիր խորհուրդներ և ապականում է մարմինը:

154

Հնդկաց թագաւորը մի թռչուն ունէր, որ ածում էր ձուի տեղ  
մարգարիտներ և ակներ: Յունաց թագաւորը լսելով ցանկացաւ  
ձեռք բերել նորան, ուստի պատգամաւոր ուղարկեց և խնդրեց  
նորանից: Նա տուեց թռչունը, բայց և ինքն խնդրեց նորանից  
նորա ձին, որ անցնում էր արագութեամբ թռչունների հետ:  
Քէպէտ երկուսների խնդիրներն ևս ծանր էին, բայց վերջապէս  
անյապաղ կատարուեցան: Երբ բերին հաւը Յոյների մէջ,  
նա ածում էր հասարակ ձու. նոյնպէս ձին Հինդկաց  
զիկների մէջ կաղում էր և բոլորովին չէր արշաւում:  
Հնդկաց

Թագաւորն դարձրեց ձին շատ մեղադրելով . նոյնպէս արաւ և Յունաց Թագաւորը: Թէ հաւն և թէ ձին իւրեանց տեղն զնաւով եղան առաջվան պէս:

Առակովս այս պէտք է իմանալ, որ իւրաքանչիւր Թագաւորութեան ճոխութիւն Աստուածանկից է տրուած, և թէպէտ աշխատում են միմեանց դարձնել, բայց չեն կարող:

I55

Յունաց Թագաւորի որդին ցանկանում էր ամուսնանալ, բայց որին իւր հայրը կամենում էր, ինքն նորան չէր հաւանում. նա ասում էր հօրը. «Ման կգաս ամեն Թագաւորութեան մէջ, որն ամենեւին չքնադադեղ կլինի, այն կընտրես ինձ համար:» Հայրը նեղանալով սորանից, կանչեց իմաստասէրներին, որ այն պատանուն համոզեն հաւանեցնեն: Իմաստասէրները իմաստուն խօսքերով չկարողացան համոզել վերջապէս սովորական ազնիւ կերակուր պատրաստեցին և ածեցին զանազան ոսկեղէն, արծաթեղէն, փայտեղէն և ուրիշ այդպիսի ամանների մէջ, և ճաշի ժամանակ բերին մատուցին և ստիպեցին նորան, որ իւրաքանչիւր ամանից ճաշակն առնէ: Ճաշակեց և ասաց «Մի է ամենի համը, ինչո՞ւ զանազան կերակուր չպատրաստեցիր» — Դա քեզ օրինակի, ասացին իմաստունները, ինչպէս մի է ամեն ամանի մէջ զանուած խորտիկը, նոյնպէս մի է բոլոր կանանց մարմնոյ կազմուած պէտքի ճաշակը: Սորանով պատանին հաւանեց:

Առակովս յանդիմանում է ցանկասէրներին, պատճառ կանանց պէտքը զանազան կազմուածում մի է, և ստեղծուած է օրգեծնութեան համար. նա ցանկութեան անօթ չէ:



I56

Մի չար իշխան կար, որից նեղանում էին նորա ստորադրեալները: Մի ծեր խրատ տուեց թէ ուրիշ հնարք չկայ նորանից ազատուելու, միայն եթէ նախանձով կարծիքի մէջ զցէք նորա կնոջը: Այդ լսելով իշխանը կհիւանդանայ և կմեռնի և ստորադրեալները կփրկուին:

Առակովս յանդիմանում է կանամբի տղամարդկանց սաստիկ նախանձը, թէպէտ և որքան խստասիրտ լինին, այդպիսի բաներով կկտրվին և կմեռնին:

157

Մի կտաւազործ բնակվում էր Տամբատում. նա սովորութիւն ունէր իւր որդուն զօրացնելու համար ասել, «Մենք Թագաւորութեանք արհեստով:» Երբ որդին հարցնում էր թէ ինչպէս, նա ասում էր. շուրի սանտրը թագի պէս զլխիս եմ դնում, և ստէծը (ջուլհակի գործիք) իբրև սուր բարձրացնում եմ, կտաւի գործի վերայ՝ ինչպէս աթոռի վերայ նստում եմ: Եւ ասի տակ ունեւրով պատուանտան, և կտաւը ժողովում եմ որպէս աշխարհ հնազանդեցնելով. սանտրի ձայնն էլ իբրև փողի ձայն, և ուրիշ շատ այսպիսի բաներ ասացի Այնուհետև որդին ստիպում է հօրը, որ Պարսից Թագաւորի աղջիկը խնդրէ իւր ի հարսնութիւն: Հայրը խնդրեց, բայց նա զայրանալով հրամայեց նորան սպանել և երբ իմացաւ թէ Տամբատումն է այն մարդը, հրամայեց ներել:

Առակովս կամենում է ասել, որ ներողութեան արժանի է թէ Աստուծոյ և թէ մարդկանց մօտ նա՛, որ անզխտութեամբ է մեղանշում:

158

Մեծ Աղեքսանդր թագաւորից երկրագործը աւելի պատիւ ստացաւ քան Հիւսն այն ժամանակ, երբ նորա համար ապարան (պալատ) էին շինուում: Այդ բանի վերայ նախանձուեցան հողագործն ու Հիւսն միմեանց հետ մինն ասում էր բնակութիւն առնել, միւսն կերակուր: Նա լսելով որովհետեւ ինքն ևս իմաստասէր էր, կանչեց և ուրիշ իմաստուններին, որ նոցա մէջ պատուի ընտրութիւն անեն: Նոքա ասացին թէ, առաջ Ադամին ասուեցաւ երկիր գործել, բայց դարբնութիւն կանուխ յայտնուեցաւ, և որովհետեւ շինում է նորա գործին, և նորանով Հիւսնի և մշակի գործին, վասնորոյ առաջինն է պատուով. բայց հողագործն երկուսի հարկաւորութիւնն էլ ունի: Ահա այսպէս համոզում են նորանց չնախանձել:

Առակովս կամենում է ասել, որ թէ հողւոր և թէ մարմնաւոր արհեստի մէջ պատուի արժանի են առաջիններն, թէ և միմեանցից կարեւորութիւն ունին:

159

Սողոմոն թագաւորի համար մէկն հանդերձ էր կարում գեղեցիկ արուեստով և շատ ուրախանալով փառաւորվում էր իսկ բեհեզագործն դորան հակառակ իւր արհեստն էր յարգում: Թագաւորը լսելով կանչեց նորանց, և ընտրութիւն արաւ նոցա մէջ այսպէս, թէ անշնորհք է կտաւը առանց կարողի, սակայն ի՞նչ կկարէ արուեստով, եթէ կտաւ ստեղծուած չլինէր, որովհետեւ և Ադամը տերեւ գտաւ և շինեց հանդերձ. սորանով կտաւագործը առաջինն գտնուեցաւ կարողից:

Առակովս յարգում է կտաւագործին, որին շատերը արհամարհում են:

160

Պղնձագործն ու երկաթագործը միմեանց խնամութիւն անելու ժամանակ իւրեանց արուեստով մեծ մեծ խօսում էին, այնպէս որ հակառակութիւն եղաւ, և գնացին ծերերի ատենն: Նոքա մեծարգի ցոյց առին երկաթագործին, ասելով թէ, հասարակաց օգտակարն պատուական է:

Առակովս կամենում է ասել, աւելի պատուական բան չկայ հասարակաց օգտից թէ մարմնաւոր և թէ հողւոր գործերում:

161

Ոսկին թագաւորելու ժամանակ երկրպագութիւն էր պահանջում ամեն նիւթերից. թագաւոր էր կոչում իրան, որովհետեւ թագաւորի պատկէր էր եղել, և նորանով ամբարտաւանում էր արծաթագործների և ուրիշների վերայ ևս: Ամենքը եկին, բայց ցորեանն չեկաւ, ասելով, ես կմնամ մինչև որ առաջ ինքն կգայ ինձ կերկիրպագանէ:

Առակովս յայտնում է թէ նիւթերը փոփոխական են միշտ պատիւ չեն կարող ստանալ, որովհետեւ երբեմն մինն յարգվում է և երբեմն անպատիւ լինում: Սովի վտանգի պատճառով ամենայն նիւթերը խոնարհվում են ցորենի առաջ, նոյնպէս և ուրիշ նիւթերից է պատահում, այդպէս կլինի և արհեստաւորների մէջ. ուրեմն չպէտք է հպարտանալ:

162

Մի խաղախորդ (կաշի շինող) անց էր կենում մորթե-  
գործի դռնով և սկսաւ արհամարհել վատահոտ կոչելով նո-  
րան, և նա մօտենալով յանդիմանում էր նորան ասելով, եթէ  
ես ոսկեգործներից և կամ ուրիշներից նախատվէի, յարմար էր,  
բայց դու ինձանից աւելի վատահոտ լինելով ի՞նչպէս ես  
համարձակում:

Առակովս յայտնում է թէ անհամբեր կլինին, երբ  
իրանցից աւելի վատերից բամբասովում են, և դորանով իրանց  
յանդիմանելու իրաւունք են տալիս արդարներին:

163

Ծերերը հին հին խօսքեր էին պատմում. մի ծեր բրուտ  
այնպիսի խօսքեր խօսեց, որին անկարելի էր հաւատայ. նա  
պնդում էր, թէ երբ Աստուծոյն աշակերտ էի, այն ժամանակ  
լսեցի. մի ուրիշն էլ թէ ես Աստուածանից այդպէս չլսեցի,  
երբ որ նորան աշակերտութիւն էի անում շէնք շինելում, որով-  
հետեւ երկնքի և երկրի լինելութիւնը առաջ է քան մարդոյն:  
Առակովս յանդիմանում է այն ծերերին, որ իրանց հնու-  
թեան պատճառով շատ խօսքեր ստում են:

164.

Մի մարդ փողոցում ընկած գէշից կերաւ և անցնելով  
տեսաւ կոշկակարին, որ ատամներով ձգում երկարացնում էր  
կաշին, և սկսեց բամբասել նորան, որին ասաց կոշկակարը ո՞վ  
մարդ, եթէ վաղուց մեռած մորթին այդպէս վատ է, որք չեմ  
ուտում, ապա ո՞րչափ վատ է այդ, որ դու մարմին ես ու-  
տում առանց սուրի:

Առակովս յանդիմանում է ոմանց յանդգնութիւնը, որ  
իրանց մեծ չարութիւնները չեն տեսնում, բայց ուրիշների  
սակաւն են դատում:

165.

Ձատկի տօնին եկին հաւատացեալները հաղորդվելու,  
մէկ հովուի էլ համոզեցին, որ նա ևս հաղորդվի, բայց երբ  
տեսաւ փախաւ ասելով, ոչ ճաշ է, որ ուտեմ, և ոչ հրամենք:  
Ասացին այդքան է խորհուրդն, բայց չհաւանելով զնաց նա  
հեռացաւ:

Առակովս վայրենացածների յիմարութիւն և տգիտու-  
թիւնն է յայտնում, որոնք միայն երևելի բաներին նայելով  
զայթազովում են:

166.

Մի մարդ Գալիանոսի ժամանակում ունէր մարմնական  
առողջ կազմուած, և արհամարհում էր բժիշկներին, որ բնա-  
խօսութիւն էին անում առողջութեան վերայ. նա ասում էր  
ես կարօտութիւն չունիմ այդ արհեստին: Բայց երբ հիւան-  
դացաւ և զնաց բժիշկների մօտ, նորանցից յանդիմանուեցաւ,  
և տեսնելով իւր տկարութիւնը, միշտ չարչարվում էր նոցա մօտ:

Առակովս կամենում է ասել, որ մարմինը միշտ կարօ-  
տում է բժշկի և հողին Աստուածային խրատի, ուստի չպէտք  
է արհամարհել ոչ մինը և ոչ միւսը, որովհետեւ միշտ առ-  
ողջ չենք կարող լինիլ:

167

Գալիանոսը բնախօսութիւն էր անում մարմնական առողջութեան վերայ, և ասում էր, «Եթէ մարդ զգոյշ լինի ու տեղու և խմելու ժամանակ, կարօտութիւն չի ունենալ մեր արհեստին» Մի մարդ լսելով ոչ ուտում էր և ոչ խմում, այդ պատճառով չարաչար հիւանդացաւ և թշնամանում էր Գալիանոսին, որ և լսելով ասաց. «Չգիտե՞ս դու, յիմա՛ր մարդ, որ մենք մեր բնութեան արարիչ չենք, այլ օրնական, և դու ինչո՞ւ չհասկացար իմ խօսքը և ա՛յնպէս չվարվեցար»

Առակովս կամենում է ասել, որ հմտութեամբ և ուշադրութեամբ պէտք է լսել բժիշկներին և Աստուծային խօսքը, և այնպէս հաւասարութեամբ վարվիլ, որ հոգւոյն և մարմնոյն առողջութիւն է, և չափազանցութիւնից պէտք է խոյս տալ, այսինքն առաւելութիւնից և նուազութիւնից, որովհետեւ չարը երկուսումն էլ կայ:

168

Մի իմաստասեր մարդ տեսաւ անկազործին, որ կորումեր և անկում, ասաց ո՛վ մարդ, դու գործող ես քան անկող: Նա հմտութեամբ պատասխանեց թէ յարմար է. որովհետեւ Աղա՛մին գործել և պահել հրամայեցաւ, և ոչ անկել, վասն զի, անկելու կարօտութիւն չունէր, բայց մերը, որ ապականվում է, միշտ կարօտութիւն ունի. և եթէ անկասէր լինէր, չէր արտաքսուել և չէր գործել տաժանելի երկիրը միշտ սերմելով:

Առակովս այս խրատն ենք սովորում, որ անկազործները կլինին և անկասէր. և երկար ժամանակ կմնան այդու՛մը-ըրախտումը տունկերի մէջ և իւրաքանչիւր տարի երկիրը կգործին:

169.

Մի դող մտաւ մի հարուստ մարդի տուն մի բան գողանալու. տանուտէրը ներս մտնելով տեսաւ և սկսեց ծեծել և բռնել. դողն էլ շուտ սկսեց նորան ծեծել և ասել, թէ դու ինձ անենելով որ այսքան աշխատում եմ, ինչո՞ւ չասեցիր բաւական է, հանգստացի՛ր. վերջապէս աղաղակելով կանչեց ուրիշներին, որոնք եկան բռնեցին գողին և տարին ատեան: Գատաւորը հարցրեց գողից, թէ ինչ բարի գործի համար էիր ողջոյն խնդրում. նա պատասխանեց, եթէ նորա համար բարի ևս չլինէր, սակայն ինձ համար շատ բարի է: Սորանով գողը օգուտ չստացաւ. հրամայեց դատաւորը կախել նորան:

Առակովս յայտնում է չարագործների սովորութիւնը, որ թէպէտ ուրիշներին փնասում են իրանց բարի կարծելով, բայց դորանով չին արդարանալ, այլ կստանան իրանց արժանի պատիժը:

170.

Աւազակը մէկ քահանայի բռնելով կամենում էր սպանել. քահանայն զօրութեան հոգի ստանալով, յաղթահարեց նորան, և ինչպէս արժանն էր սկսեց տանջել նորան: Գողը աղաչում էր և ասում թէ շուտ քահանայ ես և միշտ ասում ես չխաղաղութիւն ամենեցուն, և սորա նման շատ բաներ: — Ո՛վ չարագործ, պատասխանեց քահանայն, ես իսկ խաղաղութիւնը պահպանելու համար եմ քեզ տանջում, որովհետեւ դու չես սիրում խաղաղութիւնը:

Առակովս կամենում է ասել որ եթէ մեզ պատահում է մի հակառակութիւն, խռովասիրութեան համար չպէտք է հա-

կառակիլ, այլ պէտք է աշխատել չթողնել, որ խաղաղութիւնը քանդուի:

171

Դողուր դատարկ մանդալու համար մանուկին ասաց մայրը, թէ մի՛ գնար, դրսումը մարդագայլ կայ:—Մանուկը չսելով դուրս եկաւ և տեսաւ մէջքից կորացած, աչքի լոյսից զրկուած, աչքերը շուռ տուած բլշած մի ծեր, որին մարդագայլ կարծելով՝ փախաւ ընկաւ մօր գիրկը և ասաց, դայլնց պակաս չէ այն ծերը: Զմարխտ որ չար էր:

Առակովս կամենում է ասել, պատուական չէ այն ծերութիւնը, եթէ չարաբարոյ լինի ծերացածը:

172.

Մի թագաւոր շատերին հրաւիրեց իրան զինուորութեան և խոստացաւ պատերազմից յետ՝ տալ նորանց յախտենական թագաւորութիւն, միայն պատուիրեց, որ նոքա չունենան հին գէնք, այլ իւր գէնքովը զինաւորվել, որ յաղթող լինին: Զինուորները յօժարեցան, երբ սկսաւ պատերազմ, որոնք թագաւորի գէնքովն էին զինուորված, անխոցոտելի մնացին. իսկ հին գէնք կրողները թէպէտ և նորը ստացան, բայց վիրաւորվելով մեռան, և մնացին անպակ յաղթողների պակվելու ժամանակ:

Առակովս կամենում է ասել ձմարխտ թագաւորների թագաւոր Գրիստոսն է, որ կանչեց շատերին հոգևոր զինուորութեան և հրամայեց արդարութեան գէնքի տակ չունենալ և մեղքի գէնք, որ հակառակ են միմեանց, ասպա թէ ոչ, չորի

պատերազմում կմեռնին, և չեն հասնել արդարութեան պակին յաղթողների հետ:

173.

Մի տնկասեր մարդ տնկեց իւր պարտէզի մէջ ծառից բուսած մի նոր ձիւղ. մի գեղեցիկ աղբիւր էլ ջրում էր նորան. տունը շուտով աճեց և պողաբերեց, որով շատ ուրախացաւ տնկողն: Մի ուրիշ տեղից մի ժանգատեսիլ ջուր էր գալիս և խառնվում այն ջրի հետ, որից ձիթենու պտուղները թափվում էին. բայց երբ այդ ջուրը դարձնում էր դէպի ուրիշ տեղ, դարձեալ նա լաւ պտուղ էր տալիս, և դորանով զուարճանում էր տնկողն:

Առակովս պարտէզ է անուանում առաքիլասեր հոգու մէջ տնկած զանազան առաքիլութիւնները, իսկ ձիթենին՝ ողորմութիւն, որը և՛ սիրեց և՛ տնկեց ուրիշ առաքիլութեան հետ, և աղբիւրը՝ զիտութիւն, որից կծնանի մարդասիրութիւն, իսկ ժանգաջուրն՝ փառասիրութեան և այլն ապականիչ ախտեր. և դէպի ուրիշ տեղ դարձնելն՝ ախտը կտրել կնշանակէ և կրկին ուրախանալ պողաբերելու վերայ:

174.


Երկու մարդ ծանապարհ ընկան միասին հեռու քաղաք գնալու. մէկը սկզբումը արիաբար էր գնում, սակայն գնալով հետ զհետէ ծուլանում էր այստեղ ու այնտեղ ընկնում ծանապարհին, և քաղաքի մօտ բոլորովին թուլացած ընկնում է աւազակների ձեռք և սպանվում: Իսկ միւսը որ սկզբումն էր ծոյլ, գնալով հետ զհետէ արիանում էր, և քաղաքին մօտեցնալով ամենեկին արագ էր վաղում. այդպէս մտաւ նա քաղաք, ուր և վայելեց հանգստութիւն:

Առակիս միտքը վերաբերում է ծոյլերին և արիւնքին; որովհետեւ ծոյլերը քիչ են աշխատում բարութեան ճանապարհում, որ տանում է դէպի կեանք, յետոյ ծուլանում են օր ըստ օրէ, և կեանքի վերջում, որ պետք է արիանան, բնութեամբ տկարանալով ընկնում են ոսոխի ձեռք և մեռանում, զրկուելով կեանքի մէջ մտնելուց: Իսկ թէ և արիւնքը սկզբումը հանդարտ են շարժում, միշտ ուսմամբ առաջ են գնում և կեանքի մէջ մտնելուն մօտեցած ժամանակի, դուրս են գալիս մարմնուց և վայելում յաւիտենական բարիքը:

175

Մի վաճառական մի շատ մեծ մարգարիտ ունէր, որ իւր պատուականութեամբ անգին էր, նա և ունէր շատ ակներ: շատերը լսելով աշխատեցան գնել նորան. բայց գին տալ չկարողացան: Վաճառականը դրեց այն մարգարիտը մի քարեայ սիւնի գլխին, որ շատ ողորկ էր, և ասաց, ով կարողանայ վեր բարձրանալ սիւնի գլուխը, նորան լինի մարգարիտը: Շատերը աշխատեցան, բայց չկարողացան վեր բարձրանալ. ոմանք արիւն հանեցին ոտերիցն, որովհետեւ արիւնը կաշող է, և նորանով վեր բարձրանալով ստացան մարգարիտը և շատ ուրախացան:

Վաճառական Քրիստոսն է, անգին մարգարիտը իւր Աւետարանը, ակները մարգարէիւնքի և առաքեալնքի խօսքերը, սիւնը նորա ուսման նեղութիւնները, որովհետեւ արեան չափ աշխատել է, որ զլուխ դուրս գայ և Աւետարանի միտքը սովորի:



176

Մի թագաւոր մի հեռու քաղաք ունէր, որ շատ հրաշակված էր իւր զեղեցիկութեամբ, որ ունէր դէպի ինքն և շատ ճանապարհներ: Մարդիկ ամեն մի ճանապարհով աշխատեցին գնալ այն քաղաք. այնպէս որ ոմանք գնացին դժուար և երկար ճանապարհով, ոմանք զազանուտ, ոմանք գտա ՚ի վեր, ոմանք հարթ և կարճ ճանապարհով. բայց քաղաքի մօտ ամենքը հարթ ճանապարհում խառնվում էին և մտնում քաղաք և զանազան օթեաններում հանգստանում. նորա ամենքը շատ ուրախացած անտեղծ էին քաղաքի զեղեցիկութիւնը:

Ճշմարիտ թագաւոր Աստուած է, քաղաք նորա արքայութիւնը. շատ ճանապարհներ՝ նորա պատուիրանները, որովհետեւ պատահում է, որ ոմանք կուտութեամբ են գնում և՛ դժուար և՛ երկար ճանապարհով. ոմանք հեթանոսների հետ պատերազմում են նահատակութեամբ, ոմանք կրօնաւորութեամբ և ձգնութեամբ, ոմանք մարգարիտութեամբ. բայց ամենի վերջը սէրն է. որով ամեն մի վաստակի համեմատ կհասուցանվի, և կուրախանան պսակի և պարգևի արժանանալով:

177

Երկրում մի շատ բարձր սար կար, որ իւր խիտ բարձրութեամբ անմատչելի էր, բայց աշխարհի բնակիչները կամեցան նորա վերայ ամրանալ, որովհետեւ լի էր ամենայն բարութեամբ, միայն թէ նորա վերայ բարձրանալը շատ դժուար էր, թէ և ունէր շատ ճանապարհներ: Նորա որոնք բարձրանալու ժամանակ կամեցան ոտներին դատար տալ փոքր ինչ հանգստանալով, իսկոյն զայթակղելով զնայցն հասին մինչև

յատակը շատ անդամ այդպէս էր պատահում: Իսկ նորքն, որոնք չկամեցան հանգստանալ, այլ դաւազանի օղնութեամբ աշխատեցին գնալ, բարձրացան և հանգիստ վայելեցին:

Ամուր սարն կենդանիների երկիրն է. հաւատացեալները կամենում են բնակիլ նորա վերայ զանազան պատուիրաններով, և եթէ կամենում են յանդգնութեան մէջ հանգստանալ, բարձրանալ չեն կարող, որովհետեւ անդադար գնալի է ճանապարհըն, բայց նա՛ որ ոչ մի բանով չի կամենում հանգստանալ, մի միայն համբերութիւնը նեցուկ ունենալով, հեշտութեամբ է վեր բարձրանում, որովհետեւ առաքինութեան հանդիսար համբերութիւն է, որով ուրախացած կհանգստանայ:

178

Մի տեղ միասին տնկուած երկու ծառ կային լի սրտով զներով. մէկի պտուղը տեսքով շատ գեղեցիկ էր և ուտելու համար քաղցր, հովանին էլ ախորժելի, ուտի շատերը դիմում էին զէպի նա և մանում նորա հովանու տակ. բայց հիւանդանում էին նորա ստուերից (շուաքից), և պտուղներից ուտելով մեռանում: Սակայն միս ծառն՝ թէ և անհաճոյ էր տեսքով. բայց հովանին հիւանդներ էր բժշկում և պտուղն ուտողն անմահացնում: Եստ ուշ սովորելով շատերը գնում և զուարճանում էին այդ զիւտի վերայ:

Առակովս կամենում է ասել, որ երկու տունկը մեղք և արդարութիւնն են, որ տնկվում են մարդի մէջ. առաջ ախորժելի են երեւում մեղք, որի վերայ մտածելը հոգու հիւանդութիւն է, իսկ դործելը մահ. այդ է հովանին և ճաշակն: Բայց առաքինութիւնն առաջին անգամ դժուարապահ է, իսկ կամենալն և դործելն հոգու համար առողջութիւն է և կեանք,

որ սովորելուց յետոյ բնաւ հեռանում են չարից և ուրախանում բարիի վերայ:

179

Մի աշխարհում մի ծառ կայ բարձր հասակով և՛ գեղեցիկ տեսքով և՛ պտղով և՛ ցանկալի հովանիով: Ամեն սուրբ թռչունները նորա ձիւղների վերայ հանգստանում են և սուրբ կենդանիները նորա հովանու տակ, և եթէ պատահի, որ զգանները և անսուրբ թռչունները զիմեն զէպի նորանց, նոյն ժամայն կիւնանին. բայց սուրբերը ճաշակելով պտղեցը՝ աճում են և անմահանում:

Ծառը՝ առակիս մտքին նայելով, սուրբ Երրորդութիւնն է ամենաբարի նշանով. բունն՝ Հայր, ոստն՝ Որդի, պտուղն՝ Հոգի, հովանին՝ խնամք. և սուրբերն հովանու տակ և ձիւղների վերայ նորա զօրութեան մէջ հանգստանում են. և եթէ բանսարկուն յանդգնում է, սատակում է. արդարներն ճաշակելով անմահանում են հաւատով, և աճում բարեգործութեան և սուրբ վարքի մէջ:

180

Ամեն ազգերը երբ որ լսեցին, կամեցան վայելել այն ծառից. բայց մի ժանտատեսիլ կին նստած էր ճանապարհի անցքի վերայ, և խմեցնում էր անցնողին յիմարութեան զիւղ: Նորքն՝ որոնք ընդունում էին, վայր էին ընկնում և չէին կարողանում գնալ. բայց նորքն, որոնք ժայթքում էին, դարձեալ շարունակում էին ճանապարհը. իսկ նորքն՝ որոնք հեռիովն էին անցնում, անփորձ տեղ էին հասնում և վայելում:

Կինն՝ բանսարկուն է բաղմամբնաւոր չարութիւններով.

բաժանն՝ խորհեաթեան հրահուրանքը. և ժայթքել զարձուցանել՝ խոստովանել և ապաշխարելն, որով վերկիւմ են. և հեռուից անցանելն՝ աշխարհից հրաժարվիլը, որ վայելիլ է տալիս Երրորդութեան խնամքը:

181


Մի սերմանող սերմն սերմեց իւր ազարակում (արտում) երբ բուսած փոխուեցաւ գարի, կորեակ, որմն և ցորեան:

Այս է առակիս միաքբ. սերմանող Քրիստոսն է, սերմն՝ Աւետարան. ազարակն՝ աշխարհս, փոխվիլը զանազան աղանդներ աւելի և կամ նուազ. սակաւ մնալը՝ ցորեանն, որովհետեւ քիչերն են ընտրուածներն, թէ և կան շատ ուղղավատներ:

182

Մի մարդ ցած էր գալիս ամենաբարձր սարից. աջ կողմում արեգակն, ձախ կողմում լուսինն, տասն երկու աստղաներն էլ կուրծքի վերայ. նորա բերանից բղխում էին ազբէրներ և չորս անդ բաժանուած հոսում էին և լցնում երկիրը, իսկ սուրբ և անսուրբ կենդանիները լուացվում էին նոցա մէջ: Երբ վերադարձաւ մարդն դէպի սարը. քիչերը բարձրացան, և սարումը որովհետեւ շատ թռչուններ կային, նոցա հետ խառնուեցան. մնացեալները առաջին կերպարանն ստացան, ուրիշներն թէ և չփոխուեցան, բարձրանալ ևս չկարացին:

Առակիս միաքն յայտնի է:



ՈՂՈՄՊԻԱՆՈՒ ԱՌԱԿՆԵՐԸ:

1

Սանտուն (ծծմայր) մանուկին՝ որովհետեւ լաց էր լինում, ասաց. «Թէ լուռ չի մնաս, վեր կառնեմ, գայլին կտամ քեզ»: Այս խօսքը՝ գայլը որ լսեց, յուսով սպասում էր, որ իրագործվէ. և մնաց մինչև երեկոյ, որ ձեռք բերէ մանուկին. երբ երեկոյացաւ, մանուկը քուն մտաւ. գայլը դարձաւ գնաց, այն օրը որսից զրկուելով: Երբ քածը հարցրեց, նա ասաց պատճառը, թէ կնկան հաւատարմ խաբուեցայ:

Եւ դու մի՛ հաւատար, իմացիր, որ նոքա շափերը արհատ են արեւ այդպէս խոստանալը:

2

Արիայն ձիուն արշաւելու (վազելու) հանդէս է կանչում. և երբ բանը հաստատուեցաւ, ձին ձաղը արաւ նորան և սիսեց ուրախ կեննք վարել, միամիտ և անհոգ լինիլ այդ մասին. իսկ կրիայի դորձն ասպարէզն էր և շուտ շուտ կրթութիւնը, որով աւելացնում էր իւր արագաշարժութիւնը: Երբ որ հասաւ հանդէսի ժամանակը, ակտրանը հանդիսականներով լցուեցաւ. յարձակովները եկան և ընդունեցին արշաւը:

լու նշանը, բայց ձին իւր աւելի դատարկութիւնից կապուած  
մնաց և զնալ անգամ չէր կարողանում. իսկ կրիայն աւելի  
արագ վազում էր, որի վերայ յոյս չունէին բնաւ:

Ամեն բան բնութեան չպէտք է հաւատալ, այլ կրթու-  
թիւն և արիաջանութիւն ևս պէտք է:

3

Առիւծը կուսի գեղեցկութեան վերայ զարմանալով ցան-  
կանում էր ամուսնանալ նորա հետ, ուստի գնաց խնդրեց աղ-  
ջկայ հօրից, որ տայ նորան իւր կնոթեան: Հայրը վախենա-  
լով չէր կարողանում մերժել. բայց վերջապէս պատճառ-  
բունեց ոչ միայն առիւծի արհեստը, որով զանազանվում էր,  
այլ և ասաց, աղջկիս վախնում է ճիրաններից (ճանկերից)  
և ահազին ժանիքներից (կեռիքներ). իսկ եթէ առանց դոցա  
կգաս, ցանկալի և աւելի սիրելի փեսայ կլինիս: Առիւծը հաւա-  
նեց, որովհետև խիստ վասված էր ցանկութեամբ, և հանե-  
լով իւր ճիրանները և ժանիքները՝ եկաւ հարսնացուի մօտ:  
Երբ ներս մտաւ, քարով ջարդեցին նորան, որովհետև զր-  
կուած էր արդէն վրէժ առնելու գործիքից:

Առակովս խրատում է բնութեան զէնքը չհանել իրա-  
նից:

4

Աքիւր ցանկացաւ մի պատանու, և աղաչեց Աստղիին\*,  
որ ինքն գեղեցիկ կլին կարող է լինիլ, իւր նպատակին հասցնէ:

\*) Չաստուածուհի: Սա ԅունաց Ափրոդիտէն կամ Վեներան է, որ Ղատի-  
ներէն Վենուս եւ Հայերէն Աստղիկ է կոչվում: Ըստ առասպելաց սա ծովի  
փրփրատեսակ ալիքներից ծնուած է համարվում եւ գեղեցկութեան պատճառով

իրան: Բանը գուցե եկաւ. հարսանիքը սկսաւ. վառեցին տա-  
գաստի ջահերը. լսուեցան կրդի և պարի ձայներ. իսկ նա մի  
մուկ տեսաւ թէ չէ, իսկոյն ընկաւ նորա ետեւից որսի:

Այսպէս և բնութեան գործը անընդդիմադրելի է և  
ամեն բանում գորեզ:

5

Առիւծը ծերութեան պատճառով զօրութիւնից և աւա-  
զութիւնից ընկաւ, և հեշտութեամբ որսալու արհեստը վայր  
դրեց և հիւանդացաւ, և պատմեց իւր անցքը: Իսկ անասուն-  
ները ամեն տեղից գալիս էին նորա մօտ. նա ներս ընդունե-  
լով նորանց՝ գործ էր գնում իւր սովորութիւնը: Բայց աղուէ-  
սը իմանալով նորա հնարքը, զրոյց անցնելով մնաց դռնումը  
և այնտեղից կատարեց իւր այցելութիւնը: Առիւծը հարցրեց.  
ինչո՞ւ դու միայն ուրիշներից զատուած (Չոկված) մնում ես

ծագողների զշտոյ (Յագուհի) է անուանվում: Դա նկարվում է իբրև ամենագե-  
ղեցիկ դիցուհի ծովային չորրոտանիների կարծր կաշիներից շինուած կառքի  
վերայ նստած, որին լծուած են երկու տղանի, եւ մէջքը կամարածու գօտի  
կապած, որը շատ գեղեցիկ նկարագրում է: Հոմերոսը: Ետին տօնվում էր այս  
կուսպաշտութեան ժամանակ ամեն տարի օգոստոսի 6-ին տօնվում էր այս  
դիցուհու տօնը, եւ զանազան ծաղիկներով զարդարվում էր տաճարը: Սորա  
կուստունը շինուած էր Հայաստանի Աշտիշատ քաղաքում, որ Վահագնի  
սննեակ էր կոչվում. այնքան յարգելի էր Հայերի մէջ, մինչ զի ոսկեայ զարդե-  
րով ցրել էին տաճարը: Վարդավառի տօնի օրը, որ նախնի աստուածապաշտ  
հայեր սովոր էին աղանձներ թուցնել, իբրև Եօյի տապանից դուրս գալու  
շիշտակ, կուսպաշտութեան ժամանակ սկսեցին կատարել այդ հանդէսը Աս-  
տղիի համար. որ յետոյ մեր Ս. Լուսաւորիչը փոխեց Բրիստոսի պաշտաւ-  
կերպութեան տօնը:

դրուումը— չետդ՝ ասաց. ինձ արգելում է որովհետև մտած-  
ներին յայտնի է, դուքս եկածներին ամենևին ոչ:

Խարդախների խաբէութիւնը բարերարներին շատ է. իսկ  
իմաստուններին յայտնի է:

6

Մայրը եղջերուին ասաց. «Եթէ դու մեծութեամբ դո-  
րաւոր ես շուներից և արագութեամբ վեհ, պէտք է որ դու  
փախցնես նորանց եղջերներովդ. ապա ինչե՞ն է, որ շներից  
այդպէս վախենում ես. — Ես լաւ եմ տեսնում իմ մեծու-  
թիւնը, պատասխանեց եղջերուն, և փառաւորվում եմ իղջեր-  
ներովս, յաղթում եմ և իմ արագ վագելովը, բայց միայն  
եթէ շան հաջները (հաչոցը) լսում եմ, իսկոյն ամեն խոր-  
հուրդներս խափանվում են, և ես երկիւղով սկսում եմ  
փախչել:

Ասակովս կամենում է ասել, որ ոչ մի մխիթարութիւն  
և յորդորումն կարող է զօրացնել բնութեամբ երկչոտներին:

7

Որմիզը\*) հրաման էր տարածել, որ հաւերը մի երևե-  
լի որ զան ժողովին իրա մօտ գեղեցիկներ ընտրելու համար.  
որովհետև ով որ զօրաւոր է հաւերից, ամենքի վերայ պէտք է  
լինի թագաւորս Այնուհետև լցուեցան հաւերը աղբիւրների  
և գետերի մէջ իրանց զարգարելու, անվայելուչ փետուրները  
դուքս հանելով. բայց ճայը (ազուաւի ազգից) ժողովելով

\*) Չաստուած: Սա Արամազդն է, որ Յունարէն Գիոս կամ Չես, Լա-  
տիններէն Յովիս կամ Իւպիտէր և Պարսիկերէն Արմիզդ է կոչվում. ծնուած էր

զանազան թռչունների փետուրներից արհեստական կերպով  
զարդարուեց, և երևում էր շատ գեղեցիկ և զարմանալի, այն-  
պէս որ զանազանազոյն փետուրներով մի ծաղկած բուրաստա-  
նի էր նմանվում, ուստի նա խրոխտալով պարծենում էր. զար-  
մացել էին նորա վերայ հաւերը և չաստուածները, և ամենքը  
վճռեցին յաղթութեան տեղը նորան տալու: Կա զիշերահաւը,  
որ ամեն բանով իմաստուն էր, ճանաչելով նորան և նորա  
փետուրները, մօտեցաւ, դուքս հանեց և ցոյց տուեց կեղծ գործը  
ամենքին, այնպէս որ իւրաքանչիւրը մօտեցաւ և դուքս հանեց  
իւր փետուրը. մի կարճ ժամանակում ճայը մնաց մերկ և  
խայտառակ ամենքի աւաջ:

Կամենում է ասել, «վ ինչ ունի բնութիւնից, այն բաւա-  
կան է. արտաքին զարդարանքով չպէտք է պիտոյանալ:

8

Նապաստակները միասին ժողովվելով ասացին. «Այդ ինչ  
կեանք է մեզ համար. մեր կեանքը կեանք չէ, որովհետև ար-  
ծիւններ և շուներ և ամենքը ընկած են մեր վերայ մեզ ճնշե-  
լու, ուստի բազմազիմի կիրքեր և երկիւղ մեզ պատելին, լաւ  
է, որ զնանք ընկնենք լծի մէջ և խեղդուինք:» Ամենքը համա-

կոռնոսից (ժամանակի չաստուած) և Աէայից (Կիւրեղից), և համարվում էր  
չաստուածների վեհազոյնը և անմահների և մահկանացուների հայր: Սա  
իւր մօր խորամանկութեամբը Կրտէնում Ամաղթեայ այժի կամնով մեծանալով  
հալածեց երկնքից իւր հօրը և բոլոր աշխարհին տիրելուց յետոյ, իւր երկու  
եղբայրների հետ բաժանեց, այսինքն Պոսիտոնին ծովի իշխանութիւնը տուեց,  
Պղուտոնին դժոխքի, իրան երկնքի, ուր պէտք է բնակէր ինքն: Գորա պատ-  
կերը նկարվում էր գահի վերայ բազմած, մէկ մեռով արքայական գաւազանը  
բռնած, միւսովը կայծակներ. ոտների տակն էլ մեւերն տարածած արծիւ:

ձայնեցան և վաղեցին դէպի լիճը լճի ափում շարուած գորտերը զգալով նոցա ոտների ձայնը, մեծ երկիւղով ընկղմուեցան խոր ջրի տակ: Նապաստակներից մինը, որ աւելի ծեր էր, խկոյն կանգնեցրեց նորանց լճի ափում և մեղադրելով ասաց. «Սիրելիք, տեսնում էք, որ մեզանից աւելի վախկոտներ ևս կան:

Առակովս թշուառներին մխիթարում է, որ իրանցից աւելի թշուառներին աչքի առաջ ունենան:

9

Ազուաւը իւր բնութիւնը պարսաւում էր, թէ շատ սև եմ թեւերով, և փորի սպիտակութեան երանի էր տալիս: Չպէտք է գարմանալ, ասաց նա, այդ զանազանութեան վերայ. այլ պէտք է անձնի զարդ համարել: Գու բազինների և ծուխերի մէջ պտտելով մրձոտներից թեւերդ. բայց ես ամեն օր մարգերում և գետերում եմ գտնւում: Ազուաւը ուղիղ կարծելով այս՝ գնաց, և օրերը միշտ չարչարանքով անցկացրեց դետերում և մարգերում, յուսալով թէ կփոխուին իւր թեւերը, բայց ընդհակառակն սովը և զիշերվայ պարզը (այեազը) նորան սպանեցին:

Արժան չէ նոր ձեռով ձեւել, որ բնութեան չէ յարմար:

10

Էջ էր, բայց առիւծ էր կարծւում, որովհետև առիւծի մօրթի էր գցել իւր վերայ: Հեռուից ամեն մի տեսնողին երկիւղ էր պատճառում և կովերի ամեն նախիրներին և ոչխարի հօտերին փախցնում: Բայց երբ մի սաստիկ քամի փչեց և վեր առաւ նորա վերայից առիւծի մօրթին, ապա յայտնուե-

ցան և յանդիմանուեցան նորա խաբէութիւնները: Այնուհետև ամենքը ոտ բարձրացրին դէպի նա. ոմանք սկսեցին դաւազանով ծեծել, որովհետև էջ էր և կամենում էր կեղծաւորութեամբ առիւծ ձեւանալ շատերի աչքին:

Այսպէս և դու, ո՛վ մտացի, կարօտ ես տանջանքի, վասնզի շատ անկիրթ ես և խրատվածների ձեռով կեղծաւորվում ես:

11.

Գորտը ամբարտաւանութեամբ մեծաբանում էր ուրիշ անասունների վերայ և ասում. «Ես ձեզ բժշկի կարող եմ լինել, և ամեն ցաւ բժշկել, որովհետև ես սովորել եմ ասկէլեպի աղայցն»: Այդ հռչակելով կարծում էր թէ մի բան է ասում, և հպարտութեամբ խոստանում էր կատարել: Բայց աղուէն՝ որ ամեն բանով խմաստուն էր, գորտի հպարտութիւնը յանդիմանում էր ասելով. յայտնի է, որ այդպէս դեղին և հիւանդոտ ցոյց տալով մարմինդ, ուրեմն քո գեղերը կարող են բժշկել ուրիշներին, իսկ քեզ առողջացնել չեն կարողանում:

12

Գայլերը ոչխարների մօտ պատգամաւոր ուղարկելով ասացին, թէ «Մենք որ ձեզ հետ միշտ պատերազմում ենք և անհաշտ ենք, շուներն են պատճառը, որովհետև զայրացնում են մեզ և ահամայ թշնամութեան մէջ գցում. եթէ նոքա մէջտեղից վեր առնուին, խաղաղութիւն կլինի այնուհետև մեր ու ձեր մէջ, և մեզանից ձեզ ոչինչ վնաս չի լինի»: Այստարները հաւանելով, որովհետև յիմար են, շուների պահպանութիւնը կտրեցին իրանցից: Գայլերը նորանց անապատում շու-

ներից հեռու գտնելով, սկսեցին նոցա վերայ յարձակուիլ և հոտորել ամենքին:

Առակովս խրատում է զգուշանալ թշնամիների խրատներից:

13

Զուարակները միասին արածում էին մի տեղ, ուր նո-  
րանցից մօտ կար մի առիւծ, որից վախենալով միաբանութեան  
սիրով կապուել էին զուարակները, և միաբանութեամբ էին  
կատարում զործի մուտքը և ելքը, նոյնպէս միաբան և արօտը  
և զնացքը: Իսկ առիւծը չկարողանալով զօրութեամբ հերքել,  
հնարքով էր կամենում բաժանել նորանց, որովհետև նա խրա-  
քանչիւրին կեղծաւորութեամբ բարեկամութիւն էր ցոյց աու-  
ել, արդէն սկսեց չարախօսութիւն միմեանց վիրայ, այնպէս որ  
թշնամանացնելով միմեանց հետ՝ բաժանմունք զցից և այնու-  
հետև բաժանուած գտնելով մի մի նորանցից բռնում էր և  
վայելում:

Առակովս խրատում է հաստատ պահել մանրմութիւնը  
դէպի բարեկամները:

14

Մի ազուաւ կոուցում պանիր բռնած նստած էր մի բարձր  
տեղ, իսկ ազուէսը աշխատում էր խլիլ նորանից պանիրը: Նա  
մօտենալով աչքը զցից նորա վերայ և սկսեց երանի տալ և  
զովհասաներ կարդալ այսպէս: «Յոյնդ սև զիշերվայ մանուկ ես,  
քեզ արժան է ծաղկել զոյնից, և զօրութիւնդ քեզանում  
այնքան է՝ որքան չկայ ուրիշներում. նոյնպէս և իմաստու-  
թիւն, այլ ևս ուրիշ արգելք չկայ թագաւոր լինելու համար,  
միայն եթէ ձայն ունենաս, և կարօտ չլինիս զօրան»: Այս զո-

վութիւնից զբողոքեցաւ ազուաւր, և իւր մեծաձայնութիւնը  
ցոյց տալ կամենալով՝ բացեց բերանը և մեծաձայն զոգոսաց.  
Իսկոյն պանիրը վայր ընկաւ և եղաւ կերակուր աղուէսին:  
Աղուէսը վայելելով ասաց. «Ճշմարիտ, քեզանում ձայն կայ,  
բայց խելքից պակաս ես»:

Առակովս զգուշացնում է չխտրուիլ սուտ գովասանքով:

15

Կապիկները բնութիւնից աւելի բարձր մտածեցին, և  
նախանձեցան մարդկանց վիրայ: Նոքա մտածեցին քաղաքում  
բնակիլ և հաստատել ժողովարաններ և խորհրդարաններ, սո-  
վորել արհեստներ և ապրել մարդկանց պէս: Երբ որ այս կա-  
մեցան, և զործին ձեռք մխեցին, մի ծեր կապիկ ասաց նո-  
րանց. «Ինչո՞ւ էք այդպէս մտածում. մտածեցէ՛ք, որ այժմ  
մարդիկ մեզ որսալ չեն կարողանում, իսկ եթէ ներքսև բա-  
կումը լինինք, մեր չորս կողմ պատկով կապանեն մեզ»:

Առակովս կամենում է ասել, որ ծերութիւնը ունի մի  
իմաստութիւն իւր անցած ժամանակով և հմտութեամբը:

16

Արծիւը հալածում էր կաքաւին, բայց նա զնաց առա-  
ւէն բռնեց բզէզին և բերաւ բարիխօս: Արծիւն չսկսեց բզէզի  
բարիխօսութեան, բզէզն էլ շփոթված զօրս եկաւ զնաց ար-  
ծուի բոյնը և նորա ձուն զլորեց դէպի ցած, որ ընկաւ և  
փշրուեցաւ. այսպէս անելով շատ ժամանակ անորդի էր թող-  
նում արծուին: Արծիւն այդ հանգամանքից ստիպուած զնաց  
թաղաւորի զօգուէն ածեց իւր ձուն: Բզէզն իմանալով մտաւ  
նորա ոտների մէջ և կծեց փորի կողմից. ցաւից ստիպուած,

դէպի վեր վազելով թագաւորը վայր գցեց ձուն և կտորեց  
 Առակովս կամենում է ասել, որ եթէ հնար լինի, մարդ  
 կանցից ո՛չ որին քեզ հետ մի՛ թշնամանայնել, թէ աղքատ  
 թէ տկար ևս լինի:

17

Մըջինն ընկնելով ջրի մէջ քիչ էր մնում, որ խեղդուէր,  
 աղանին մի տերև ձգելով ջրի մէջ՝ աղատեց նորան: Նա  
 ևս աղատեց աղանունն որսորդի ձեռքից որսալու ժամանակ  
 կծելով նորա փորի փափուկ կողմից:

18

Որսորդն բռնեց մի կաքաւ և կամենում էր մորթել կա-  
 քաւն ասաց նորան, որինձ մի՛ սպաներ, ևս շատ կաքաւներ  
 կխաբեմ և կբերեմ կձգեմ քո պատրաստած ականատի (թա-  
 լակի) մէջ:՝ Որսորդն ասաց, այժմ ճշմարիտ որ կմեռնիս իմ  
 ձեռքով, որովհետև քո սիրելիներիդ և ազգականներիդ մահին  
 ես մատնում:

Առակովս կամենում է ասել, թէ որողայթ մի՛ պատրաս-  
 տեր սիրելուդ համար, որ Ատուած չի հաւանել քո զործին,  
 և զարձեալ դու կընկնիս նորա մէջ:

19

Մի քաղցած աղուէս դտաւ սառն և սկսաւ աղաղակով  
 ուտել, և ասել վա՛յ ինձ, սարսափելի է դայլե դայլը. ՚ի զուր  
 աղաղակ է ընկել զլիտովս, բայց փորիս մէջ ոչինչ չէ մտել:  
 Գորանով կամենում է ասել, թէ աշխարհիս մեծութիւն

և փառք երազի պէս են. որոնք միայն աղաղակ և զբաղումն  
 ունին, յետոյ ոչ որին չեն երեւալու, որովհետև անցաւոր և  
 խաբող են:

20

Աղուէսից հարցին թէ քանի՞ նենգութիւն և արհեստ  
 գիտես. նա կրկնելով ասաց, հազար նենգութիւն և արհեստ  
 գիտեմ. երեսուն դեռ միայն ազիովս շան առաջին. իսկ ան-  
 ձնովս թէ որքան չեմ ասում, մի մեծ արհեստ ևս այն է,  
 որ ոչ ես եմ շանը տեսնում և ոչ նա ինձ:

Առակովս կամենում է ասել թէ ապաշխարողները ան-  
 թիւ են, բայց կատարեալ մարդ նա է, որ չէ մեղանջում:

21

Մի այրի կին մի աղայ ունէր, որ և սկսաւ միրգ և բան-  
 ջար գողանալ և ուտել: Մայրն ևս ուրախութեամբ վայելում  
 էր և չէր խրատում աղային Ատուծոյ կամքի համաձայն:  
 Տղայն հեռոցհեռէ աւելացրեց զողութիւնը, բերում էր անա-  
 սուն և անօթներ (ամաններ): Երբ հասաւ նա երիտասարտու-  
 թեան հասակին, եղաւ սմբերումն աւազակապետ: Շատ չա-  
 բութիւններ անելուց յետոյ բռնեցին նորան և տարին կախե-  
 լուս Կախելու ժամանակ ասաց, բերէք մօրս ինձ մօտ, որ ես  
 համբուրեմ նորան: Մայրն մօտեցաւ որդուն թէ չէ, իսկոյն  
 կծե՞ծ և կտրեց մօր քիթն թագաւորը, որ ներկայ էր տեսա-  
 ըանին, ասաց, ո՛վ չար, ինչո՞ւ խրատեցիր մօրդ—Այն պատ-  
 ճառով, ասաց աւազակապետը, որ նա ինքն ինձ չխրատեց աղա-  
 յութեան հասակում, որ ես այսօր այս ցաւի մէջ չընկնէի: ուրեմն  
 լա՛ւ արի: Թագաւորը հրամայեց արձակել նորան և կախել մօրը:

Առաւելս կամենում է ասել, որ ամեն ծնող, որ չէ խրատում իւր որդուն Աստուծոյ կամքի համաձայն, պարտական է մնում դատաստանի օրում:

## 22

Աղուէան խեցգետին (բակ) եղբայրացան և վարուցանք արին միասին, և ժամանակին հնձեցին, և կասելով կուտեցին Յետոյ աղուէան ասաց. «բարձրանանք այս փոքրիկ սարի վերայ, ով որ շուտ ցած գայ նա վեր առնէ ցորեանը» Երբ բարձրացան, ասաց խեցգետինը. «ննձ հեա սէ՛ր արա փախչելուցդ առաջ, ազիդ առաջիս գետնին զարկելով, որ ես իմանամ և դամ ետեկցդ» Աղուէան այնպէս արաւ և վազեց, բայց խեցգետինը արդէն խճճուել էր աղուէսի ազիի մէջ: Երբ տեղ հասաւ աղուէսը, ազին զրեց ցորենի շեղջի վերայ, և յետ նայեց, որ տեսնէ թէ խեցգետինն որտեղ մնաց. խտոյն խեցգետինն բնկաւ շեղջի վերայ և ասաց. «Աստուծոյ անունով եկել եմ. ինձ կհասնէ ցորեանը» Զարմանալով աղուէան ասաց ո՛վ չար, դու ե՞րբ եկիր այստեղ:

Առաւելս յայտնում է, թէ նենգաւոր մարդիկ այնպիսի գործ են բռնում, որ իւրեանց անձներին կորուստ է լինում, և տկարները յաղթում են նորանց:

## 23

Առիւծը բռնեց աղուէսին իւր սպասաւոր, և նշան տուեց, թէ «Երբ արիւն տեսնես իմ աչքում, ինձ իմաց արա, այն է իմ որսի նշանը» Առիւծը որսում էր, և ուրախանում էին: Աղուէսը հպարտանալով դուրս եկաւ առիւծի մօտից և գնաց գայլի մօտ և նորան բռնեց իւր սպասաւոր և ասաց.

«Երբ որ արիւն լինի իմ աչքում, յայտնի՛ր, եթէ չլինի ևս, դու ասա՛, այո՛ կայ, ինչ ժամանակ ես հարցանեմ»:» Փոքր ինչ անցած, գայլն ասաց, թանձրագոյն արիւն կայ աչքումդ. աղուէան ուրախանալով նստեց եղնիկների ճանապարհանցքում, և ասաց գայլին, դու բախի՛ր, ձայն հանիր իմ վերայ. եղնիկները գալու ժամանակ նա վազեց նոցա առաջ, արաւ այնպէս, ինչպէս տեսել սովորել էր առիւծից. բայց եղնիկներն այնքան կոխտեցին նորա զլուխը, մինչև սատկեցաւ: Այնուհետեւ գայլն մօտեցաւ և ասաց. կանգնի՛ր ոտի այժմ ճշմարտապէս թանձրացաւ արիւնը քո աչքում:

Առաւելս կամենում է ասել, թէ վայել չէ մարդուն իւր կարողութեանից աւել ձգտիլ թէ դէպի հոգեւորն և թէ դէպի մարմնաւորն:

ԵԶՈՎՊՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

ԵԶՈՎՊՈՍԻ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1

Ներկայումս Փոլիզացին ծնաւ 594 տարի Յիսուսի ծնունդից առաջ ստրուկ ծնողներէ: Որքան նորա արտաքին կերպարանքը տղից էր և ծիծաղելի, այնքան առաւել նորա ներքին յատկութիւնները զեղեցիկ էին և զովիւ: Պատմութիւնը ասուժէ, թէ նորա զլուխը սուր էր, քիթը տափակ, վիզը կարճ և հաստ, երեսի զոյնը թուխ և դեղնած. ահա այդ էր պատճառը, որ նորա անունը դրին Նզովպոս, որ կնշանակէ Նթովպացի, սէ:

Նորա առաջին վարժապետը՝ Դիմարքոս Աթենացին տեսնելով Նզովպոսի մաքի սրութիւնը և ընդունակութիւնը՝ ընդունեց նորան իւր դպրոցի մէջ աշակերտ, որին և սկսաւ ուսուցանել: Նզովպոսը մեծամեծ օգուաներ քաղեց նորա դասերէց բայց անանկով, որ իւր ստրկական վիճակը արգելք է լինում այն ազատախօսութեան, որ Վիլիստիայի առաջին գործին է, և թէ իւր խրատները և իմաստալից խորհուրդները ամենեւին արժանաւորութիւն չեն ունենալու, ինչպէս և միւս իմաստասէրներինը, սկսաւ առակներ շարադրել և պատմել: Այս կերպով

հասարակ ժողովուրդից սկսած մինչև իշխաններին լսել տուեց իւր համարձակասոս ճշմարտութիւնները

Դիմարքոսի ձեռքից ընկաւ Քսանթոսի ձեռքը. և վերջապէս մի Սամոսացի հարուստ վաճառական դնեց. նորան և ազատութիւն պարգևեց: Կրեսոս Լիւզիոյ թագաւորը լսելով Եզովպոսի հռչակաւոր անունը՝ հրաւիրեց իւր մօտ և մեծ պատուով ընդունեց նորան: Եզովպոսը ճանապարհորդելով Յունաստանի մէջ Կրեսոսի գործերի պատճառով հասաւ Աթէնք քաղաք, որ արդէն Պիսիտորատոս բռնակալի իշխանութեան տակ էր ընկած: Լսելով Աթենացւոց զանգատը և տրտունջը, պատմեց նոցա «Արամազդի և գորտերի» առակը: Երբ որ դարձաւ Լիւզեա, թագաւորը պատուիրեց նորան, որ տանէ Կեղփեան տաճարի և նորա քուրմերի (կուռքի քահանայ,) համար մեծածախ զոհեր և քնձաներ: Բայց Եզովպոսը լաւ ծանաչելով քուրմերի խարխալութիւնը և արծաթասիրութիւնը՝ միայն տաճարինը տուեց, իսկ քուրմերի համար տարածք յետ դարձրեց թագաւորին և սքանկեց: «Յրիւ լողացող գաւազանները» առակը, որովք հեռուից մի բանի նման էին, բայց մօտից ոչինչ:

Վրէժխնդիր քուրմերը տաճարի նուիրական ոսկէ բաժակը դրին նորա պարկի մէջ, և յետոյ ամբաստանեցին նորան իբրև գող, և մահու վճիռ կարգացին նորա վերայ այդ սուտ գողութեան համար, և անխնայաբար ցած գլորեցին նորան Հիամպէ ժայռից: Բոլոր Յունաստան սղաց նորա մահուան պատճառով: Ամեն անգ յարգեցին նորա յիշատակը ինչպէս մարդկութեան մի բարերարի:

Եզովպոս առաջինն էր, որ շարագրեց, հաւաքեց և գրեց առակներ, ուստի և կոչվում է «հայր առակագիրները»: Առակի նպատակը գլխաւորապէս իրատելն է. բայց իրատել զանազան նմանութիւններով և համադրչ կերպով յայտնել այն ճշմարտութիւնը, որ անհնարին էր բացայայտ և սրբապէս անել:

տու թիւնը, որ անհնարին էր բացայայտ և սրբապէս անել:

2. Գորտեր և Արամազդ: (\* .

Գորտերը ազատ և խաղաղ վիճակ վայելելով՝ ձանձրացան, և խնդրեցին Արամազդից մի թագաւոր, որ կարողանայ կառավարել նորանց: Արամազդը առաջին անգամ բանի տեղ չդրաւ նոցա խնդիրը. բայց գորտերը չդատարեցան և կրկին սկսեցին աղաղակ բարձրացնել. նոքա այնպիսի ջերմեռանդութեամբ էին պահատում, որ վերջապէս Արամազդը զիջաւ նոցա աղաչանքին այսպէս. — «Ահա ձեր ցանկացած թագաւորը.» ասաց նա, և բարձրից ձգեց մի մեծ գերան, որ սարսափելի գորշմանքով ընկաւ ջրի մէջ, այնպէս որ, գորտերը վախից և սարսափից չէին համարձակում դուրս գալ իւրեանց ծակերից: Բայց փոքր ժամանակից յետոյ մօտեցան թագաւորին, ողջոյն և երկիրսպագութիւն տալու համար: Երբ որ նոցա երկուքը փոքր առ քրքր սկսաւ փարատվել, գորտերը այն ասալիճանի լըբացան, մինչև անգամ սկսան թռչոտել նորա չորս կողմով և նստել նորա վերայ և ծագրել, ասելով թէ թագաւորը ոչ խելք ունի և ոչ գորութիւն, և ամենեւին չկամեցան այն գերանին արքայավայել պատիւ և յարգանք տալ: Կրկին դարձան դէպի Արամազդը իւրեանց աղաչանքով, որ մի ուրիշ թագաւոր շնորհէ իրանց: Արամազդը լսեց նոցա խնդիրը և ուղարկեց մի արագիլ նոցա վերայ թագաւորելու: Այս նորընտիր թագաւորը իւր գորութիւնը և կարողութիւնը ցոյց տալու համար ման էր գալիս նոցա ջրաշնորհների ափերում, և սիրտն ուզածի չափ բռնում կլանում էր հպատակներին: Յու-

(\* Արամազդ չաստուած է. տես «Պոմպիլիանու առակները» 7 դուրը Կամոթ. թարգմ.

սահառուած գորտերը ևս առաւել սկսեցին գանգատել Արամազդին և մի թագաւոր խնդրել. բայց այս անգամ Արամազդը չուզեց լսել և կատարել նոցա խնդիրը: Ահա այն օրից սկսած գորտերը չեն գատարում գանգատուելուց և տրանջալուց և մանաւանդ երեկոյեան պահին երբ արագիլը հեռանում է ջրի ամերից. նոքա դուրս են գալիս ջրից և աղիողորմ կոկոսալով ցոյց են տալիս իւրեանց գառն վիճակը: Սակայն Արամազդի ականջը չէր լսում և չեր կամենում փրկել նորանց այդ թշուառութիւնից ասելով. եթէ խաղաղասէր թագաւորին չընդունեցիք, պէտք է որ այդպէս բռնաւորից ամեն կերպ զրկանք կրէք:

### 3. Գայլ և գառն:

Մի գայլ անդրիւրի մօտ ջուր խմելիս տեսաւ գառնուկին, որ ծարաւից տանջուած ջուր էր խմում նոյնպէս նոյն աղբիւրից. բայց շատ հեռի նորա խմած տեղից: Գայլը կատաղաբար վազեց նորա վերայ և սարսափելի ձայնով ասաց գառնուկին. «Ո՛վ լիբբ և ամբարտաւան, դու ի՞նչպէս համարձակեցար խմել և պղտորել այն ջուրը, որից ես խմում եմ»: Սարսափից գառնուկը, երբ տեսաւ իւր կատաղի թշնամուն, և ասաց հեշութեամբ. «Ես այնքան հեռուից եմ խմում, որ ամենևին չի պղտորվիլ քո խմած ջուրը. մանաւանդ որ դու աղբիւրի մօտն ես, իսկ ես աւելի ցած. բայց եթէ քո բարկութեան պատճառն այն է, որ ես հաւանելի չեմ երևում քեզ, այդ մասին ևս ների՛ր ինձ. միւս անգամ խոստանում եմ չերևիլ քո աչքին»: Գայլը լսելով այս պարկեշտ խօսքերը՝ ևս առաւել բարկացաւ և ասաց. «Տասն ամիս գորանից առաջ դու խայտառակել ես իմ անունը, ասելով իբր թէ գայլը գող է և ան-

գու թի» — Տասն ամիս առաջ ես գեռ ծնուած չէի, պատասխանեց գառնուկը համեստութեամբ: — Եթէ դու չէիր այդ բամբասողը, ուրեմն քո հայրն կամ մայրն է եղել, որոնք միշտ իմ արեան ծարաւ թշնամիներ են եղել: Այս ասելով իսկոյն յարձակուեց գառնուկի վերայ և անողորմաբար պատառ պատառ արաւ նորան:

Հգոր և չար մարդիկ իւրեանց չարութիւնը արդարացնելու համար միշտ կարող են պատճառներ գտնել:

### 4. Առիւծ և ցուլ:

Առիւծի սիրտն ուզեց մի ցուլ սպանել և ուտել, այդ պատճառով ցուլին հրաւիրեց իւր մօտ ճաշի, ասելով թէ մի գէր (չաղ) ոչխար ունիմ պատրաստած: Ցուլը միամտութեամբ գնաց առիւծի մօտ. բայց դեռ ներս չմտած՝ շարժեց հետաքրքրութիւնը խոհանոց (կուխնեայ) մտնելու. մտաւ և տեսաւ որ ոչինչ չկայ այնտեղ. լուռ ու մունջ գնաց հեռացաւ դէպի իւր տուն: Առիւծը երկար սպասելուց յետոյ կամեցաւ իմանալ պատճառը, թէ ինչո՞ւ արդեօք ցուլը չէ երևում. գնաց նորա մօտ. բայց ցուլը ասաց. առիւծին. յբարեկամ ինձ մի՛ սպասեր այսօր ճաշի. ես քո մօտ չեմ գալ, որովհետեւ խոհանոցումդ ո՛չ թէ ոչխար՝ այլ ցուլ եփելու համար էիր պատրաստել կաթսայն (ղազանը):

Խելօք և խոհեմ մարդի համար դժուար չէ չարի սրտի խորհուրդը իմանալ:

### 5. Երկու բարեկամ և արջ:

Երկու բարեկամ միասին ճանապարհորդելու ժամանակ պատահեցան մի արջի, որ տեսնելով նորանց՝ իսկոյն յարձա-

կուեց նորանց վերայ: Մէկը թողնելով իւր ընկերին այն վտանգի մէջ՝ շուտով բարձրացաւ ծառի վերայ, թէ և մինչև այն բուսակն խօսք էին տուել միմեանց օգնելու և միմեանցից չբաժանվելու: Միւս բարեկամը լսելով որ արջը մեռածի մարմինը չէ ուտում, այդ պատճառով իրան մեռած ձեռքներով ընկաւ գետնին և շունչը կտրեց, և ամենեւին կենդանութեան նշան ցոյց չտուեց: Արջը սխտեց նորան այս կողմ ու այն կողմ գլորել և դունչը նորա երեսին և ականջին քսելով հոտոտել վերջապէս տեսաւ որ նորանում կենդանութիւն չկայ, թողից և հեռացաւ նորանից: Այդ հնարքով վտանգի մէջ ընկածն ազատուեց. միւսը ցած եկաւ ծառից և սխտեցին շարունակել իւրեանց ճանապարհը: Ծառի վերայ ազատվողը հարցրեց թէ արջը ինչ էր ասում քո ականջին, երբ գետնի վերայ պտուկած էիր: Նա պատասխանեց. «ինձ արջը ասում էր, որ միւս անգամ բարեկամ չանուանեմ այն մարդին, որի հաւատարմութիւնը փորձած չլինիմ թշուառութեան ժամանակ:

6. Ընկոյզ և դդում:

Մի անբարիշտ մարդ տեսնելով դդումը բարակ ծղօտից կախուած՝ ասաց. «Եթէ ես լինէի բնութեան տեղ, այսպիսի թոյլ ճիւղից չէի կախել դդումը, այլ կբուսցնէի նորան ահագին ընկուզենու վերայ»: Այսպէս մտածելով առաջ գնաց, և երկար մանդալով վաստակեցաւ և պտուկեց մի մեծ ընկուզենու ստուերի (շուաքի) տակ և քնեց: Յանկարծ փչեց քամին. ծառի տերեւները և ճիւղերը շարժուեցան, և ծառի դազածից մի ընկոյզ պուկ եկաւ և ընկաւ նորա քթի վերայ: Քթի տրեւը իսկոյն սխտեց վագել մարդը սարսափելով վեր թռաւ քնից և ծանր ախ քաշելով ասաց «ո՛հ, ևս ինչպէս յիմար էի,

երբ կամենում էի, որ ընկուզենու վերայ բուսանէր դդումը, եթէ ընկուզի տեղ դդում ընկնէր երեսիս վերայ. անպատճառ ես կենդանի չէի մնալու, ուրեմն յիմար էի, որ կամենում էի բնութեան օրէնքները փոխել:

Աստուած ինչ որ ստեղծել է, բարի նպատակով է: Աստուծոյ ձեռքը ամեն բան իմաստութեամբ է կառավարում:

7. Երկու հասակի մարդ:

Մի մարդ ունէր երկու կին, որոնց մին պառաւ, միւսն մատաղահաս: Երկու կին ևս աշխատում էին, որ իրանց տղամարդին հաւանելի երեւին այնպէս որ հասակի անհաւասարութիւն չլինի նոցա մէջ, պառաւը փետում էր (պոկում էր) մարդի սև մազերը, որ իւր նման ծեր երեւի, իսկ մատաղահասը փետում էր նորա սպիտակ մազերը, որ իւր նման երիտասարդ դառնայ: Միամիտ մարդը կարծելով թէ այդ ամենը սիրոյ նշան է, թոյլ էր տալիս երկու կնոջ ևս, որ կատարեն իրանց սրտի ուզածն. բայց շատ ժամանակ չանցաւ մարդը կուռ (քաշալ) դարձաւ:

8. Ոչխարազգեստ գայլ:

Մի գայլ վերան ոչխարի մորթի ձգած՝ մտաւ ոչխարների մէջ այնպիսի ճարտարութեամբ, մինչև անգամ հովիւը չկարաց իմանալ նորա ով լինելը: Քայց երբ նկատեց հովիւը, որ ամեն օր մի ոչխար է կորչում իւր հօտից և չգիտէր թէ ինչ անէ, մնացել էր շեւարված: Մի օր վճռեց, որ անպատճառ թագնուի մի ծառի ետևում և իմանայ գործի հանգամանքը. այնպէս էլ արաւ, ինչ տեսաւ. — տեսաւ յանկարծ, որ խորամանկ գայլը յարձակուեց մի պարարտ ոչխարի վերայ և պատառ

պատառ անելով կերաւ: Հովիւը օգնութիւն կանչեց իւր ընկերներին, որոնք վերայ հասան, բռնեցին դող գայլին և կահեցին մի ծառից:

Չպէտք է հաւատալ մարդուս արտաքին ձևին, այլ հարկաւոր է նայել նորա վարքին և գործերին:

9. Թխսահաւ և վառեակներ:

Թխսահաւը գտաւ ցորենի կոյտ, և կրթկրթալով սկսեց կանչել իւր վառեակներին (ձագերին), որ գան և ուտեն: Վառեակները վազ է վազ եկան և թաթիկներով սկսեցին ցրել տալ ցորենի հատիկները: Մայրը տեսնելով նոցա չարութիւնը՝ ասաց, Վինչո՞ւ էք վատնում այդ օգտաւէտ բանը. փոխանակ ուտելու նորանց ոչնչացնում էք:» Մայր, ասացին ձագերը, մենք հետեւում ենք քո ցոյց տուած օրինակին, ինչպէս որ դու ես անում, այնպէս ևս մենք ենք անում:»

10. Սուտ մեռուկ կատու.

Մի տան մէջ շատ մկներ կային: Կատուն իմանալով այդ խփոյն գնաց տեղաւորվեցաւ այդ մկնաշատ տանը, և երկար ժամանակ ապրում էր նոցա որսով: Մկները տեսնելով, որ օր ըստ օրէ նուազվում է իւրեանց թիւը, խօսք կապեցին դուրս չգալ ծակերից և չընկնել նորա ճիրանաւոր թաթերի տակ: Կատուն խիստ ախրեց, տեսնելով որ մկները առաջվան պէս երթևեկութիւն չեն անում այն տան մէջ, և ինքն չէ կարողանում իւր սրտի ուզածի չափ ձեռք բերել նորանցից, այդ պատճառով սուտ մեռուկ ձեւանալով՝ պահեց գետնի վերայ: Մկներից մի ամենամեծը հասկանալով կատուի խարդախու-

թիւնը, ասաց. չբարեկամ, եթէ դու քար ևս դարձած լինիս ևս չեմ խարուիլ և մօտենալ քեզ:

11. Նաւավար և նաւաստի:

Մի օր մի նաւ ծովի վերայ այլեւձութեան պատահեցաւ: Երբ որ ձանապարհորդները առհասարակ մահուան ահի և սարսափի մէջ էին՝ յանկարծ քափն հանդարտեց, հանդարտեցան շուտով և ծովի ալիքները: Նաւաստիները տեսնելով օրի պայծառանալը և վտանդի հեռանալը՝ սկսեցին շատ ուրախանալ և անհոգ լինել, բայց նաւավարը՝ որ շատ անգամ փորձված էր, որ շատ անգամ փոթորիկը զգաստացրել էր նորան, ասաց, «Պետք է չափաւոր և հանդարտութեամբ ուրախանալ. առանց յուսահատութեան վշտանալ, որովհետեւ մարդուս կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անընդհատ ուրախութիւնների և տրտմութիւնների խառնուրդ:

12. Գայլ և կռունկ:

Գայլը ազահարար ոչխար ուտելիս մի մեծ ոսկր մնաց նորա որկորում, որ չարաչար սանջում էր և անհանգիստ անում նորան: Նա կորագլուխ գնաց անասունների մօտ և խնդրեց, որ իւր ցաւին մի ծար անեն, բայց նոքա ոչ միայն չէին կամենում թեթեւցնել նորա ցաւը, այլ և ցանկանում էին նորա մահը տեսնել: Վերջապէս գտաւ նա մի ողորմած կռունկ, որ կարեկցելով նորա թշուառութեանը, մանաւանդ յուսալով, որ վարձ պիտի ստանայ գայլից, իւր երկայն կտուցովը հանեց նորա որկորից ոսկրը. երբ որ գայլը ազատուեց անհրաժեշտ մահից, կռունկը պահանջեց խոտացած վարձը: Գայլը ծաղրելով նորան և կրճտելով իւր ատամները նորա վերայ, ասաց Պոս-

յիմար, մի՞թէ շնորհակալ չես, որ ողջանդամ մնացիր, մի՞թէ զփուար էր ինձ համար պոկել քո յիմար զլուսը, մինչդեռ նա իմ բերանումն էր, մինչդեռ կտուցովդ ոսկր էիր հանում որկորիցս:

Խեղօք մարդը հեռի պիտի փակուէ չարերի ընկերութիւնից, ապա թէ ոչ, կլսէ այն, ինչ որ կռունկը լսեց գայլից:

13. Երկու պոյտ:

Երկու պոյտ (մինը կաւից միւսը երկաթից շինած) լուր դումէին ջրի մէջ: Կաւի պոյտը զգուշութեամբ պահպանում էր իրան իւր ընկերից, իսկ երկաթի պոյտը քաղցրութեամբ ասում էր նորան. «Ինչո՞ւ զգուշանում ու հեռանում ես ինձանից բարեկամ, ես միտք չունիմ քեզ փնասելու» — Ես լաւ գիտեմ, որ դու միտք չունիս ինձ փնասելու, ասաց միւսը, բայց միայն վախենում եմ, որ մի՞ գուցէ ջրի ընթացքը մեզ այնպիսի սաստիկութեամբ մօտեցնէ, որ ես քեզ խփուելով փշրուիմ:»

Հասարակ վիճակի մարդիկ պիտի զգուշանան մեծատանց ընկերութիւնից, որոնց տասն օգուտը չի հաւասարվիլ նոցա տուած մէկ փնասին:

14. Աղուէս և այծ:

Ծարաւած աղուէսն ու այծը իջան մի ջրհորի մէջ, որ այնտեղից կարողանան լցնել իւրեանց ծարաւը: Երբ կուշտ խմեցին, մտածեցին թէ ի՞նչպէս պէտքէ դուրս գալ ջրհորից: Աղուէսը փոքր ինչ մտածելուց յետոյ, ասաց. «բարեկամ, ես գտայ հնարքը, եթէ կամենաս լսել իմ խրատին, դու ևս հեշ-

տութեամբ կարող ես դուրս գալ այստեղից. յետին ոտներիդ վերայ բարձրացի՛ր, զլուսը դէ՛մ տուր պատին. ես մէջքիդ վերայով դուրս կգամ և քեզ կօղնեմ, որ դու ևս ազատուիս»: Այդպէս արաւ այծը. բայց երբ դուրս եկաւ աղուէսը և ազատեց իւր զլուսը այն փորձանքից, սկսեց ուրախութիւնից դէս ու դէն թռչկոտել և ծիծաղել այծի թեթեամտութեան վերայ: Այծը բարկութեամբ յանդիմանելով նորան, ասաց. «Ինչո՞ւ չես կատարում տուած խօսքդ:» — «բարեկամ, պատասխանեց աղուէսը, եթէ քո խելքը մէքիդ համեմատ երկայն շնէր, դու չէիր իջնել ջրհորի մէջ, նախ և առաջ մտածելով թէ ի՞նչպէս կարող ես դուրս գալ այն տեղից:»

Խեղօք մարդը դեռ մի բան չսկսած՝ առաջ մտածում է թէ ինչ վերջ պիտի ունենայ այն:

15. Սագ և գեղջուկ:

Մի գիւղական ունէր մի սագ, որ ամեն օր մի մի ոսկի ձու էր ածում: Յիմար գիւղականը կարծելով թէ սագի փոքում ոսկու հանք կայ, մորթեց նորան, որ մի անգամով հարստանայ. հանեց նորա փորոսիքը, բայց ոսկու հանք չգտաւ նորա մէջ: Այնուհետեւ սկսաւ ակն ու վաշ քաշել և փոշմանել իւր արած յիմարութեան վերայ. բայց նորա զղջումն յեա չգարձրեց կորցրած հարստութիւնը:

Ագահը շատ անդամ կորցնում է այն, ինչ որ ունի:

16. Շուն և գայլ.

Մի օր մի վատուժ և սոված գայլ հանդիպեց մի գէր ու կուշտ շան. կանչեց նորա առաջ և հարցրեց. «Ասա՛ խնդրեմ, շո՛ւն եղբայր, այդ ինչի՞ցն է, որ այդպէս հաստ ու

պինդ ես դու և փափուկ, իսկ ես քեզանից աւելի զօրեղ եմ  
 և շատ անգամ մի կտոր մսի համար արիւն եմ թափում, և  
 ըստ մեծի մասին կեանքս քաղցածութեամբ անցուցանում:»  
 — Զաւատում եմ ասածներիդ, պատասխանեց շունը, բայց եթէ  
 կամենումես ինձպէս բախտաւոր լինիլ, պէտք է կատարես  
 նոյն ծառայութիւնը, ինչ որ ես կատարում եմ: — Ինչ ծառա-  
 յութիւն է քո կատարածը, հարցրեց գայլը: — Իմ ծառայու-  
 թիւնն է զիշերները պահել իմ տիրոջ տունը. որ գողերը ներս  
 չմտնեն: — Բարեկամ, ասաց գայլը ուրախութեամբ, եթէ այդ  
 է քո ասած ծառայութիւնը, ես 'ի բոլոր սրտէ պատրաստ եմ  
 յանձն առնել, որովհետեւ իմ կեանքը այնպէս թշուառ է, որ  
 թշնամուս անգամ չեմ ցանկանալ այն, պատճառ, օրերս ան-  
 տառների մէջ անցուցանելով միշտ կնիթարկվում եմ դառնա-  
 շունչ օդի, անձրևի, ձիւնի և կարկտի: Իհարկէ, եթէ քեզ  
 պէս խաղաղ կեանք, կուշտ փոր, ապրուստ ունենայի, աշխար-  
 հումս ամենից բախտաւորը ինձ կհամարէի:» Այս ասելով ճա-  
 նապարհ ընկան դէպի տուն, բայց գայլը տեսնելով շան քեր-  
 թած վիզը, հարցրեց. «Ինչիցն է առաջացել այդ». — Ոչինչ  
 բան է այդ, պատասխանեց շունը: — Բայց ես կամենում եմ  
 իմանալ, թէպէտ և ոչինչ լինէր այդ, ասաց գայլը: — «Եթէ  
 շատ հետաքրքիր ես իմանալու, ասաց շունը, ահա՛ դորա  
 պատճառը: Երբ ես խիստ զուարթ եմ լինում, իմ տերը ինձ  
 կապում է, որ ես չվազվզեմ և չյոզնիմ, այն պատճառով, որ  
 զիշերն արթուն մնամ. երեկոները արձակում են, որ ես ուր  
 կամենամ կարող եմ ման գալ:» — Բայց ասա խնդրեմ, ասաց  
 գայլը, եթէ այնպէս պատահի, որ սիրտդ ուզենայ մէկ տեղ  
 գնալու, արդեօք, իրաւունք ունի՞ս գնալու: — Ո՛չ երբէք,  
 պատասխանեց շունը: — Եթէ այդպէս է, ուրեմն բարով  
 վայելեա քո երջանկութիւնը: Բայց թէ ինձ հարցանես, եթէ

ինձ թագաւորութիւն ևս տալու լինէին, ես չէի ընդունիլ այդ  
 պարտաւորութիւնը, որովհետեւ իմ կեանքի նպատակն է ազա-  
 տութիւն:

## 17. Աղուէս և արագիլ:

Մի խորամանկ աղուէս արագիլին իւր տուն ճաշի հրաւի-  
 րեց. բերաւ նորա առաջ կերակուրները տափակ պնակի (ամա-  
 նի) մէջ. այնպէս որ արագիլը չկարողացաւ ոչինչ ուտել իւր  
 կտուցի երկարութեան պատճառով, և ցոյց տուաւ որպէս թէ  
 ինքն չէ հասկանում նորա լարած որոգայթը (թալակ): Մի  
 քանի օրից յետոյ արագիլը գնաց աղուէսի մօտ և հրաւիրեց  
 նորան իւր տուն ընթրիքի (իրիկվան հացի): Նշանակած ժա-  
 մին եկաւ աղուէսը նորա մօտ. բայց մուտքել էր իւր արած  
 խարզախութիւնը և ամենեին չէր կարծում թէ արագիլը  
 վրէժխնդիր կլինի իրանից: Արագիլը բերաւ նորա առաջ ման-  
 րած միս մի նեղ բերանանի շիշի մէջ, այնպէս որ չէր մտնում  
 աղուէսի գլուխը: Բայց արագիլը հանդարտութեամբ մոցնում էր  
 ամանի մէջ իւր երկար ու բարակ կտուցը և ախորժակով ու-  
 սում: Երբ ճաշը վերջացաւ, ասաց ծիծաղելով: «Դու պատ-  
 ճառ չունիս ինձանից անգոհ լինելու, որովհետեւ ինչպէս դու  
 վարվեցար ինձ հետ, նոյն օրինակով վարվեցայ և ես քեզ հետ:

Առակիս մտքը պարզ է, ինչպէս կամենաս որ քեզ հետ  
 վարվին, այնպէս ևս դու վարվիր ուրիշների հետ:

## 18. Չի և առիւծ:

Մի ծերացած առիւծ չէր կարողանում առաջվայ պէս  
 կենդանիներ որսալ: Մի օր պատահելով արագավազ ձիուն՝  
 կամեցաւ խաբէութեամբ իւր որոգայթի մէջ ձգել նորան. բժիշկ

ձեացաւ և հարցրեց ձիւ առողջութիւնը: Ձին հասկանալով նորա սրտի չար խորհուրդը՝ ասաց. «Հիւանդ եմ, և հիւանդութեանս պատճառն այն է, որ ոտս փուշէ մտելը ազատ ման գալ չեմ կարողանում: Առիւծը խոստացաւ հանել նորա ոտի փուշը: Ձին շնորհակալութեամբ ընդունեց նորա օգնութիւնը, և քամակը դարձրեց դէպի նա: Երբ առիւծը մտեցաւ նորան, ձին ետևի ոտները բարձրացրեց և պինդ աքացի տուեց նորա ճակատին ու փախաւ: Առի՞ծն ուշաթափ եղաւ այդ սաստիկ հարուածից. և ոչ թէ միայն այն օրը քաղցած մնաց, այլ և երկար ժամանակ հիւանդ պառկած մնաց:

Եստ անգամ չարերը կորչում են նոյն իսկ որոգայթի մէջ, որ պատրաստում են ուրիշների համար:

19. Խեղդուած կին:

Մի գիւղական արագընթաց գետի մէջ պտոււմ էր իւր խեղդուած կնոջ մարմինը, բայց մի անտփօր կերպով. որովհետեւ փոխանակ գետի հոսանքին (գնացքին) հետևելով առաջ գնալու, նա ընդհակառակն դէպի ակն էր գնում: Հարեանները ծիծաղելով նորա վերայ, ասացին. «բարեկամ, դու այն պէս չես անում, ինչպէս հարկաւորն է, շատ կարելի է որ ջրի ալիքները դէպի ցած տարած լինին կնոջ մարմինը իսկ դու դէպի վեր ես գնում:» — Կուք յիմար էք, պատասխանեց գիւղականը, երևում է, որ դուք չգիտէք կնոջ բնաւորութիւնը. իմ յամառ կինը ամեն բան դէպի հակառակն էր անում, ուրեմն կասկած չկայ, որ այժմ ևս ջրի գնացքին հակառակ գնացած վինի:



ՁԱՆԱԶԱՆ ԱՌԱԾՆԵՐ:

Գրքի մեծութեամբ և կազմի շքեղութեամբ զբեր արժանաւորութիւնը մի՛ գատիր:

Այս երեք նշանով ճանաչիր իմաստունին. 1, երբ ուրախ է ուրիշների բարութեան վերայ. 2, երբ համեստ է իւր յառաջադիմութեան ժամանակ, և 3, երբ նա բաց 'ի իւր անձնից ոչ ոքի վերայ վատ չէ խօսում:

Նա՛ որ քիչ է տալիս և մխլթարում է, առաւել բարեգործ է կատարում, քան թէ նա՛ որ շատ է տալիս և բամբաստում:

Ով որ իրան զիտուն ասաց, իմացիր որ նա է ամենից ազէտը:

Մարդուս մարդ շինողը բնաւորութիւնն է, ոչ թէ խելքը: Խելք մարդը միշտ որոնում է իմաստութիւն, միայն յիմարը կարծում է թէ արդէն գտել է:

Փառասէրը չի բաւականանալ նա և այն ժամանակ, երբ աշխարհիս միջի ամեն բարիքը իւր վինէին:

Մի՛ խօսիր այն ծառի վերայ, քանի որ նորա պտուղը չես տեսել:

Մի՛ երթևեկեր չարերի մօտ, նոքա մի այնպիսի փշոտ թուփ են, որ մտեցողին միշտ պատատում են:

Մարդուս հանճարը նման է թրին, որի մարմինը պատեանն է. հարկաւոր ժամանակում, ո՞րն են գործածում, երկաթը, թէ պատեանը: Ապա ուրեմն մարդուս վերայ դատելիս ինչո՞ւ են խարվում նորա արտաքին փայլով:

Մարդու արժանաւորութիւնը կանգունով (արշնտով) չեն չափում:

Երբ որ ղինին ներս է մտնում, զաղտնիքը դուրս է դալիս:

Գայլին անտառից դուրս բերողն սողն է:

Ամեն մարդ իւր բախտի շինողն է:

Կախվողն տանը չուանի անուն մի՛ տար:

Լա՛ւ է, որ ձեռքդ ձգես, քան թէ զլուխդ:

Կրակ չկայ առանց մոխրի:

Աստուած չկամենայ, մարդ չի կարենայ:

Խելքով սկսելը գործի կէսը անելն է:

Կարձ աղօթքը երկինք կհասնէ:

Մէկ անգամը սովորութիւն չէ:

Չեռքի մատերը միմեանց նման չեն:

Արջը չսպանած, կաշին մի՛ ծախեր:

Մի հատ բորոտ ոչխարը բոլոր հօտը կապականէ:

Սիրուն վանդակը թուչունի փոր չի կշտացնիլ:

Հաղար բարեկամ ունիս քիչ է, մի շարակամ ունիս շատ է:

շատ է:

Խելքը Թշնամին անխելք բարեկամից լաւ է:

Շատ խնացողը շատ կսխալի:

Վերմակիդ յարմար օտներդ ձգիր:

Քեզանից զօրեղի հետ մի՛ կռուիր:

Աստուածանից վախեցողն, մարդից չի վախենար:

Ինձ պատուողի ծառան եմ, անպատուողի արքան եմ:

Արտասուքից յետ ծիծաղ է դալիս:

Շատ ծիծաղողը շատ լաց կլինի:

Անպտուղ ծառին քար չեն ձգիլ:

Գիշերը մեծ փոր ունի, Աստուած գիտէ թէ վաղը ի՞նչ է ծնելու:

է ծնելու:

Բարեկամիդ գլխին նայիր, շարակամիդ ոտներին:

Հաղար ըիր մէկ ասա՛:

Լեզուն շաքար, սիրտը կրակ:

Բարեկամիդ հետ կե՛ր, խմի՛ր, բայց առ և տուր մի՛ աներ:

Երբ որ ոսկին խօսում է, լեզուն պիտի լռէ:

Լեզու խնացողը Հնդստան կգնայ:

Ամեն բան կհինանայ բաց ի բարի գործից:

Հին դրամը և հին բարեկամը պէտք է պահպանել:

Բարի խօսելով լեզուն չի մաշուիլ:

Երբ կաթսայդ (ղազանդ) շուռ կգայ, բարեկամներդ

կփախչին:

Երբ եզը վայր ընկնէ, դանակաւորը կշատանայ:

Քաղցած փորը ահ չունի:

Գառն ձեացողին զայլը կուտէ:

Կնկանդ ընկեր եղիր, ձիանդ տեր:

Շա է ընտիր զինուորը, որ իւր քաջագործութեան վերայ

քիչ է խօսում:

Աղքատին՝ որ քեզանից ջուր է խնդրում, դու կաթ տուր:

Առանց դժուարութեան բան չկայ, մարգարիտ գանողը

պիտի ծովի անդունդը մտնէ:

Տերեւի շրշեւնից վախեցողը անտառ չպիտի գնայ:

Գիտունը կարող է ճանաչել ազէտին, որովհետեւ ինքն

ևս մի ժամանակ ազէտ է եղել: ազէտը չէ կարող ճանաչել

զիտունին, որովհետեւ ինքն ամենեւին զիտուն չէ եղել:

Ամեն մարդ կարծում է թէ ինքն իւր հօրեանից աւելի

խելօք է, ինչպէս և ամեն մայր կարծում է թէ իւր զաւակները

ամենից սիրուն են:

Ազուաւին հարցրին, ո՞ւմ ձագն է սիրուն: Ասաց իմը:

Երեսպաշտութիւնը դժոխքի բանալին է:

Ոչ թէ թրից, այլ նորա գործ ածողից վախեցիր:

Ամուրին (ազաֆ մարդ) մի անկատար էակ է, նա նման է մի զրբի, որ բազկացած է երկու հատորից, որոնց մի հատորը կորած է: Դարձեալ ամուրին նման է մկրատի մի հատիկ բերանին, որ օգուտ տալ չէ կարող բաց 'ի վնասից:

Կոցինդ մի' բարձրացներ այն ծառի վերայ, որ փոթորկի ժամանակ քեզ ապաստան է եղել:

Եթէ ուզումես յաջողութիւն, մի' վազեր, այլ վաղ զարթիր:

Բամբասանքի և չարախօսութեան դէմ պատ չէ կարելի դնել:

Ուսումը այնպիսի ծառ է, որի արմատը դառն է, պտուղը քաղցր:

Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհաւատաց:

Այսօրվան գործը վաղուան մի' թողիր:

Ժպտոր ոչ թէ տէր, այլ ստրուկ է իւր զանձին:

Իմաստունը իւր սխալանքի պատճառը իրանից է հարցնում, յիմարը ուրիշից:

Տղէտի սխալից զգաստութիւն սովորիր:

Բանդ արա, յետոյ պարծեցիր:

Կարօտութեան ժամանակ բարեկամիդ կձանաչես:

Լաւ եղն լծան տակին կիմացուի, լաւ կինը օրօրոցի:

Այն կինը՝ որ սիրում է իւր մարդին և զաւակներին, նա է տան զարդը, թէ կուզ տգեղ ևս լինի:

Կնիանդ զաղտնիքը ոչ ոքի մի' ասեր:

Հարեանիդ մի կով ուզիր, որ Աստուած քեզ երկուսն տայ:

Ոչ ով չասէ, թէ իւր ճրագն մինչև առաւօտ լոյս կտայ:

Ով կկարգայ, նա մարդ ա:

Ամեն բանի սկզբում մտածիր վերջի համար, դու ամենեւին վատ բան չես գործիլ:

### ԳՈՇ ՄԻԻԹԱՐԻ ԱՌԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ:

Ա. քաղաղ.	128.	Ա. ըջ.	85, 86, 87.
Ա. գոաւ.	130.	Ա. ջնագուաւ.	134
Ա. խրիզան.	26, 27.	Ա. ջնդեղ.	47.
Ա. զանի.	116, 126.	Ա. քա յակաղնի.	24.
Ա. զբիւրներ.	64.	Ա. քա յածաղիկ.	30.
Ա. դէքսանդր.	158.	Ա. րեւածաղիկ.	35.
Ա. դուէս.	87, 88, 98.	Բ. ագէ.	115, 116
Ա. դուէսների անձրև.	100.	Բ. աղլա.	40, 41, 42
Ա. յծեափն.	110.	Բ. ամբակներ.	19.
Ա. նասուններ.	84.	Բ. նհնամլ.	65, 67, 76.
Ա. նոզ.	133.	Բ. ուիճակ.	141, 166.
Ա. նդէաներ.	79, 80.	Բ. որէ.	93.
Ա. նծեղ.	131.	Բ. ու.	123.
Ա. ուիւծ.	84, 85, 86.	Բ. րէտ.	147.
Ա. ուշտ կապոյտ.	33.	Գ. ազաններ.	85.
Ա. սպուզան.	30.	Գ. ալլ.	79, 83, 86, 88, 89.
Ա. սակիներ.	5.	Գ. արի.	36, 37.
Ա. ստուած.	1.	Գ. ետեր.	63.
Ա. րագիլ.	122.	Գ. ինձ.	48.
Ա. րար թռչուն.	142	Գ. նտածաղիկ.	33.
Ա. րեզակն.	3, 5.	Գ. ող.	169.
Ա. րծիւ.	95, 114, 123, 124.	Գ. օմէշ.	107, 108.
Ա. րմաւենի.	7.	Գ. օռեխ.	147.

Գորտեր. 70, 73. 21.  
 Դա մնն. 15.  
 Կեղծի. 16.  
 Դժնիկ. 7. 18.  
 Դրախաի ծառեր. 21.  
 Եղն. 78.  
 Եղջերու. 109.  
 Եպէնէս 71.  
 Երկինք 2, 6.  
 Երկիր 6.  
 Երկու ծառ 178,  
 Զմիւռնեան 73.  
 Զուարակ 77.  
 Էշ 104.  
 Ընկուզի. 57. 17.  
 Թագաւոր 180.  
 Թախթ 50, 51.  
 Թղենի 7, 10, 12.  
 Թթենի. 14.  
 Թիթեռն 153.  
 Թորեկ 111.  
 Թուչուն հրաշալի 154.  
 Թուչուններ 114, 121, 124.  
 127, 148.  
 Թրթուր 153.  
 Իմաստասէր 168.  
 Ինծ 92.  
 Իշխան չար 156.  
 Լեռան (սար) բարձր 177.

Լեռներ (սարեր) 62.  
 ԼԼիաթան 65, 66.  
 Լոլիաս 44. 45.  
 Լոր 117.  
 Լուսին 4, 5.  
 Խաղախորդ 162.  
 Խաշխաշ 49.  
 Խեցեմորթ. 73.  
 Խինջիւն 72.  
 Խլուրդ 113.  
 Խնկածաղիկ կամ խնկողկուզի 31  
 Խնձորի 11.  
 Խող 103.  
 Խոլորձ 33.  
 Խոյ 81.  
 Խորդեր 140.  
 Խստոր 53, 55.  
 Ծերեր 163.  
 Ծիծառն 138.  
 Ծիրան 15.  
 Կաքաւ 186.  
 Կակաչ 30.  
 Կաղամբ (քալամ) 61.  
 Կաղնի 24.  
 Կապիկ 99.  
 Կառ 34.  
 Կասկինի 23.  
 Կատար 143.  
 Կատու 91.

Կենդանիներ 65.  
 Կուրք 96.  
 Երտոս 68.  
 Կկու 137.  
 Կնձիթ հատ 40.  
 Կորեակ 36. 38.  
 Կորնգան 33.  
 Կտաւազործ 157.  
 Կտաւատի հատ 40.  
 Կրեայ 69.  
 Կիւ 142.  
 Կոշկակար 164.  
 Հաճար 39.  
 Հաճարի 22.  
 Համասպրան 26. 27.  
 Հաւ 125.  
 Հաւամբգի 25.  
 Հաւբալ 139.  
 Հաւրճուտ 30.  
 Հողամաղ 121.  
 Հովիւ 165.  
 Հօտ 82. 89.  
 Հօրանք 82.  
 Չագեր 115.  
 Չի 106.  
 Չիթենի 13.  
 Չիւնածաղիկ 32.  
 Չինաքաղ 143.  
 Չկներ 75.

Չմերուկ 50. 58.  
 Չագար 94.  
 Չակնդեղ 50.  
 Չայեկ 134.  
 Չանապարհորդներ 174.  
 Չնձղուկ 129.  
 Չպուռն 146.  
 Մալում. 99.  
 Մայր և մանուկ 171.  
 Մայր 20.  
 Մանիշակ 28.  
 Մաշ 46.  
 Մարախ 151.  
 Մարգարիտ 175.  
 Մարուտ 30.  
 Մեղու 152.  
 Մեղուաբաղ 152.  
 Մկներ 91. 121. 129.  
 Մնև 39.  
 Մողէղ 113.  
 Մորենի 8. 9.  
 Մորթեգործ 162.  
 Մրջիւն 147.  
 Մրտի 25.  
 Յոպոպ 148.  
 Յովաղ 112.  
 Յունապի 18.  
 Նապաստակ 95.  
 Նարինջ 20.

Նշենի 23.  
 Նոխազ և այծեր 83  
 Նունենի 7. 10. 14.  
 Շահէն 118.  
 Շաղգամ 50 56.  
 Շամամ 60.  
 Շանաճանձ 147.  
 Շուշ 87. 89. 90. 95. 99.  
 Շուշան 26. 28  
 Ոգնի 111.  
 Ուեռն. 43.  
 Ոչխարների անձրև 100  
 Ոսկի 161.  
 Ոսպն 44.  
 Որդի թագաւորին Յունոց 155.  
 Որթ 7. 8. 9.  
 Ուղտ 102.  
 Չաման 48.  
 Չիտ. 120.  
 Պարտեզ. 173.  
 Պիծակ 147.  
 Պղնձագործ 160.  
 Չայլամն 120.  
 Չղջիկ 149.  
 Չորի 105.  
 Սագ 134.  
 Սալոր 15.  
 Սակո 121.  
 Սամթ 48.

Սարդի 20.  
 Սարեկ 132  
 Սարսարակ 144.  
 Սաւսի կամ սուսի 19.  
 Սելս 50 57 59.  
 Սերգեւելի 16.  
 Սերմանոզ 181.  
 Սէզ 33.  
 Սիսեռն 40 41.  
 Սիրամարգ 135.  
 Սոխ 54. 55.  
 Սոխակ 145  
 Սողոմոն 159  
 Սուսերների անձրևու մե 100.  
 Սպանախ 52.  
 Ստեպոկին 50 56.  
 Վաղբ 97  
 Վարդ 25.  
 Վարուժան 117.  
 Վարունկ 59.  
 Վիշապ 100. 109.  
 Տանձի 11.  
 Տառեղն (արագիլ) 122.  
 Տատրակ 127.  
 Տնկագործ 168.  
 Տարասի 25.  
 Տախ սարեկ 145:  
 Տին 119.  
 Տինկ 33.

Տորեան. 36. 37.  
 Փեղենայ. 48.  
 Փեննա. 29.  
 Փիղ. 101  
 Փիճի. 22.  
 Քահանայ և աւագակ 170.  
 Թագաւորի քաղաք. 176.  
 Քարաթաւ. 113.  
 Օձ. 122.

**ՈՂՈՄՊԻԱՆՈՒ ԱՌԱԿՆԵՐԻ  
 ՑԱՆԿԸ.**

Ադուաւ. 9. 14.  
 Աղուէս. 14. 19. 20. 22. 23.  
 Այրի կին. 21.  
 Առիւծ. 3. 5. 23.  
 Արծիւ. 16.  
 Աքիս. 4.  
 Բղէզ. 16.  
 Գայլեր և ոչխարներ. 12.  
 Գորտ. 11.  
 Եղջերու. 6.  
 Զուարակներ. 13.  
 Էշ. 10.  
 Խեցքետին. 22.  
 Կապիկներ 15.  
 Կարաւ. 16. 18.  
 Կրեայ և ձի. 2.  
 Զայ և այլ հաւեր 7.  
 Մրջինն և աղանի 17.  
 Նապաստակներ. 8.  
 Սանտու. 1.  
 Փոր. 9

**ԵԶՈՎ ՊՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ.**

Աղուէս և արագիլ 17.  
 Աղուէս և այծ. 14.  
 Առիւծ և ցուլ. 4.  
 Գորտեր և Արամագղ 2.  
 Գայլ և զառն 3.  
 Գայլ և կուռնկ. 12

Եղոպոսի համառօտ կենսադրու- Խեղդված կին. 19.  
 Թիւնը. 1. Ձի և առիւծ. 18.  
 Երկու բարեկամ և արջ. 5. Նաւաւար և նաւատիներ. 11.  
 Երկու հասակի մարդ. 7. Շուն և գայլ. 16.  
 Երկու պոյտ. 13. Աշխարհագրեալ գայլ. 8.  
 Ընկող և դուռ. 6. Սաղ և գեղջուկ. 15.  
 Թխասահաւ և վառեակներ. 9. Սուտ մեռուկ կատու. 10.

01 51  
 55 14 13 20 22 23  
 17 21  
 18 18 23  
 2 26  
 4  
 10 16  
 8 11  
 11  
 13 18

# ԲԱՌԱՐԱՆ

Ազադաղ կամ քարաղաղ որձակ, արջոր տաճկերէն խորոզ  
 Ագռաւ. քաշ. տաճ. զարդայ.  
 Ախրիզան. ծաղիկ.  
 Աղուէս Թիւլքի.  
 Այծեամբ. վայրի այծ. տաճ. տաղքեչի.  
 Անդէայ. նախիր.  
 Անծեղ. կաշաղակ Թռչունը, զաջայայ. տաճ. սաղսղան.  
 Առիւծ. սալան.  
 Առոյտ. տաճ. Կօնջայ բոյսը, երեքտերեւանի խոտ.  
 Ասպուզան. սարի ծաղիկ.  
 Արագիլ. տաճ. լէյկէյկ Թռչուն, ձկնիւլ.  
 Արամազդ. Գիտս կամ Զեւ չաստուած, չաստուածների հայրը  
 տաճ. շիրսիգտ  
 Արաւր. մի տեսակ Թռչուն, որ ձու է ածուճ. ձագեր է հա-  
 նուճ կղզիներուճ.  
 Արծիւ. զարաղուշ, արեօլ  
 Արմաւենի խորմի ծառ.  
 Արջնագռաւ. սև ագռաւ.  
 Արջնեղ. սև սոնիջ, սև ու գնախի, չեօրեկ օթու.  
 Արքայակաղնի. տիօղնի, տիսիլի. տաճ. Փնդխի ծառ.  
 Արեւածաղիկ. տաճ. կիւնարախան.  
 Աքիս. մկնահարուկ.

Առնէտ. սրչովուլ, որ թշնամի է մկան, չղջիկին և ճնճղկին.  
 Բազէ. որսե թռչուն, զղղուշ.  
 Բակլայ. ունդ. տաճ. փախլայ.  
 Բեհհմոմն. բեհհմովթ, բեգեմօտ կենդանին.  
 Բզէզ, աղտեղատեր Ֆէյին կլոլող սև բղոճ.  
 Բուրձակ. տաճ. բայղուշ.  
 Բորննի. զայլի նման գաղան, քաւթառ քիւսի. տաճ. զրթլան.  
 Բու. բայղուշ.  
 Բրէտ. իշամեղու, խածանող կծող ճանճ.  
 Գեղճուկ. գիւղական, շինական, ռամիկ.  
 Գինճ. համեմ. տաճ. քիշնինջ.  
 Գնտածաղիկ. վայրի ծաղիկ, բացվենիկ. տաճ. փափունիճ.  
 զուան չիւէյի.  
 Գոռեխ. կծող ճանճ, իշամեղուի ազգից. զամբուր աւրսի.  
 Գորտ. գորանիկ, զուրբաղայ.  
 Դամոն. սալոր գեավալու.  
 Դդուճ. բուրանի, դաբաղ.  
 Դեղճ. հիւլի շափտալի.  
 Դժնիկ. փուշ տաճ. աղթիքան.  
 Եղջերու, եղնիկ, զլսաւորապէս արուն,  
 Եպենէս. ծովային կենդանի, խեցեմորթ, ինչպէս խսունջ,  
 լպրնիկ:  
 Զմիւռնեան. միջատ, փոքրիկ թռչող կենդանի. տաճ. իսքեր-  
 լէթ պէօճէյի.  
 Զուարակ. եզն, հորթ, մոզի, մնացուկ դանայ.  
 Ընկուզի. ճողոպրի ծառ, զողի ծառ.  
 Թախթ. խողխնձոր. տաճ. թալէթ, տոնգղ ալմասը.  
 Թզննի թզնի ծառ. տաճ. անջիլի.  
 Թթննի. թութի ծառ.

Թիթեռն. թիթեռնիկ, փալփալիկ, քէփէնէկ.  
 Թխսահաւ. թխսուկան  
 Թոբեկ. կատու. տաճ. փիշիկ.  
 Ինճ. տաճ. դաֆլան.  
 Լեխաթան. վիշադաճուկն, մեծ ձուկն, կէտ.  
 Լովիաս. լուբիա, մաշ.  
 Լոր. լորամարգի. տաճ. պիլիլիլին.  
 Խաղախորդ. կաշի շինող, դաբաղ.  
 Խինջիւն. խխունջ, խեցեմորթ, լպրնիկ.  
 Խլուրդ. գեանի մուկն.  
 Խնկածաղիկ կամ խնկողկուզիկ. անուշահոտ ծաղիկ. ողկուղի  
 հատերի պէս մէկ փունջ, մարեմսոտ. տաճ. գոյուն դաւշանի.  
 Ծօտա:  
 Խոլորճ. խոտ կանգնաչափ բարձրութեամբ. բաց գոյնով կար-  
 միր ծաղիկ ունի:  
 Խոյ. չկրտած ոչխար, զոչ.  
 Խորդ. կռունկ. տաճ. զուռնա.  
 Ծիծառն. ծիծեռնակ.  
 Ծիրան. զէյսի, արիկ  
 Կաքաւ. տաճ. քեակլիկ.  
 Կակաչ. հասնուկ ծաղիկ, լալէգար, տիւլբան, սուսան.  
 Կաղամբ. քեալամ.  
 Կաղնի. փալութի.  
 Կապիկ. մէյմուն.  
 Կառ. փակչող փուշ, որի կոթը կուտուի որի ծայրից զուրս է  
 զալիս բրդոտ հունտ և քամիով վազուճէ կառքի պէս. տաճ.  
 շէյթան արաբասի. թէքեուլէի.  
 Կասկենի. շաղանակենի. տաճ. շամբալուտի ծառ.  
 Կատար. խոտակեր թռչուն:

Կիտոս. կէտ. վիշապաձուկն.  
 Կուղբ. ջրչուն. տաճ. զունդուզ.  
 Կկու. կուկու թռչունը, յոպոպ, սանտրաղուշ.  
 Կնձ/թն. քիւնջութ.  
 Կորեակ. կորեկ. տաճ. դառի.  
 Կորնգան կամ զուիրակ. մի տեսակ խոտ. զուրիկ. կէօյէկի օթուս  
 Կուունկ. դուռնա, ժուրաււ.  
 Կտաւատ. կտաւհատ տաճ. քեթթան թոխումի.  
 Կրիայ. կուրա. տաճ. թօսպաղայ.  
 Կւիւ. կիվկիւ թռչունը.  
 Հաճար. հաճար բոյսը, ցորենի ազգից, փարինջ, կամ մի տե-  
 սակ ծառ, որ կոչվում է հաճարի, որի պտուղները խոզերն  
 են ուտում:  
 Համասպրան. համասպրամ, անուշահոտ ծաղիկ մի է:  
 Հանք. մաղան.  
 Հաւամրդի. բոյս, որի հունդը թռչունների կերակուր է:  
 Հաւբայ, կամ հօփայ, վայրի աղանի.  
 Հաւրուտ կամ հօրուտ, լեռնային ծաղիկ. տաճ. թութեայ  
 թութեայ չիչէյի.  
 Հողամաղ. բաղի (օրդակի) նման թռչուն, տաճ. զարբաթտաղ:  
 Հովիւ. չօբան.  
 Հօտ. ոչխարի կամ այծի սիւրու.  
 Հօրան. այծի խումբ.  
 Զիթենի. գէյթունի ծառ.  
 Զիւնաճաղիկ. ձնճաղիկ. տաճ. զար չիչէյի. կամ մախմուր  
 չիչէյի, սիւրէնձան:  
 Զինաբաղ. ձինկուլ թռչուն, չայկա.  
 Զմերուկ. մեղրապոպ. տաճ. զարփուզ.  
 Զագար. գեանսիոր նապաստակ, կրօլիկ

Զակնդեղ. կարմիր բանձար, բազուկ բանձար, տակ, զրլս. տաճ.  
 Զայեկ. մի տեսակ ագռաւ.  
 Զնձզուկ. ծիտ.  
 Զպուռն. երգող պղոճ, ձուկ. ձիճի. տաճ. ճրրձրր պէօճէյի  
 Մալ. մալում. կուտած ոչխար, կուտած.  
 Մաշ. մաշ հունդը. լրբեայի ազգից.  
 Մարախ. մորեխ.  
 Մարգարիտ. մարգարիտ ակն, ինձի.  
 Մաւրուտ. կամ մօրուտ. ծաղիկ հօրոտ մօրոտ.  
 Մեղու. մեղրաձանձ.  
 Մեղուաքաղ. ձանձկուլ թռչուն.  
 Մնև. ընդեղէն. մի տեսակ ունդ.  
 Մողէս. քարաթոշ. խլեզն, տաճ. քեթթանքեթայ.  
 Մորենի. մոշի թուփ (քոլ).  
 Մրջիւն կամ մրջիմն, մրմորինջ.  
 Միրտ. մուրտ ծառը. տաճ. միւրտ, մէրսին աղաճը.  
 Յոպոպ. յոպոպ թռչունը, սանտրաղուշ.  
 Յովազ. դաղան. տաճ. ֆէյէնի.  
 Յունապի. յունապի ծառ. տաճ. ինապ.  
 Նաւաստի. նաւ քշող, նաւի տէր, կեամբչի.  
 Նշենի. բաղամի ծառ.  
 Նոխազ. արու այծ, քօշ, տաճ. թէքէ.  
 Նոնենի. նուռնի ծառ.  
 Նահէն. բազէ. թագաւորական որսի թռչուն.  
 Նահասպրամ. տաճ. ուհան ծաղիկ.  
 Նահօքրամ. անուշահոտ ծաղիկ. տաճ. զանէֆիլ.  
 Նաղզամ. շաղզամ բանձարը.  
 Նուշան. ծաղիկ. տաճ. զամբաղ.  
 Ոգնի. կոզնի. տաճ. քիրփի.

Ուրեան կամ ուրուն. ընդեղէն, հիւլիւնը. լեարկեայ.

Որթ. խաղողի ծառ.

Չաման. կանաչեղէն, տաճ. չէնէն, քէմուն.

Չիտ. ճնճղուկ, ծիտ.

Պիծակ. կծող ճանճ. տաճ. էշշակ առըսը.

Պոյտ, աման.

Ջայլամն. ջայլամ, ստրա'ուս. տաճ. զեւվաղուշու.

Ջղջիկ կամ չղջիկ. մաշկաթե, թռչկան մուկն.

Ջորի. զաթիր.

Սագ. դազ թռչունը.

Սալոր. շլոր, կամ գեւվալու.

Սակո. կացնի պէս քթով թռչուն, ազուաի տեսակ.

Սամիթ. կանաչեղէն, շիվիթ.

Սարդի. սարդ ծառը, որ է դարնի. լա'վը. տաճ. թէֆնէ.

Սարեկ կամ սարեակ. ջառ թռչունը. տաճ. սրղըճըգ. կամ դա-  
րաթովուղը.

Սարսարակ. սասարկ թռչունը. որ ցերեկ ուտելով չազանում է  
և զիշերը հոգալով մաշվում, բէզկէկ:

Սաւսի կամ սօսի. բարդի ձերմակ կաղամախ. տաճ. աղճա-  
գալախ:

Սեխ. եմիշ, տաճ. գովուն.

Սեզ. կանաչ խոտ. տաճ. չայիր չիման, օթլուղ.

Սիսեռն. ընդեղէն, տաճ. նօխուտ.

Սիրամարգ. թովուզ թռչունը. պաւլին.

Սոխ. կծու, սողան.

Սոխակ. բիւլբիւլ.

Սուսեր. թուր, սուր.

Սպանախ. շովի բանջար.

Ստեպղին. դազար, քեօք.

Ստնտուն. դայեակ, ծիծ տուող.

Վագր. ինծու և յովազի նման դազան. տաճ. փէլէնկ.

Վառեակ. հաւի ձուտ, ձագ.

Վատոյթ. ուժից ընկած տկար.

Վարուժան. արու թռչուն, որճ.

Վարունկ. խիար.

Վիշապ. մեծ օձ, ուղաւ, աժգահա.

Տառեղն կամ արագիլ, լէյկէյկ թռչուն.

Տասրակ. աղանու պէս վայրի թռչուն.

Յարասի. մանր տերևով թուփ, որից աւել են շինում.

Յախ սարեկ. թփերի սարեկ այսինքն չալ բիւլբիւլ.

Յին կամ ուրուր. տաճ. չալաղան. մասկեր թռչուն.

Յինկ. զեղին ծաղիկ. որ բուսնում է դաշտում գետի մօտ.

Յուլ. կգն. բուղայ.

Փեգինայ. սէտէփ խոտը. անուշահոտ խոտ է, տաճ. սէտէփ օթու-  
մախմուր չիլէյի:

Փեննա. պէսպէս խոտերի ծաղիկ. որ քամին կըշէ կտանէ:

Փեղ. փիլ.

Փիճի. փիճի ծառ. տաճ. շամաղաճի.

Փոր. կարապ թռչուն. տաճ. դոյ.

Քարաթաւշ. քարաթոթոշ, մողեսի (խլէզնի) ազգից, ժայ-  
ռերում շատ են լինում:

Քուրմ. կուռքի քահանայ.


Հոգևայեցի- ների ամբաներ.	Հայերի ամբա- ներ.	Երբայեցիների.	Տաճիկների.
1 Թուրքացի.	Արաց.	Սերաթ.	Զիլլատհ.
2 Փետրվար.	Մեհեկի.	Արար.	ԶիլՏիճալ.
3 Մարտ.	Արեդ.	Նխան 1	Մուհարրեմ. 1
4 Ապրիլ.	Ահեկան.	Եսա կամ Զյու	ԱնՔեր.
5 Մայիս.	Մարերի.	Սի. ան.	Ռեպիլեկկէ.
6 Թունիս.	Մարիաց.	Փամուդ.	Ռեպիլատեր.
7 Թուրքիա.	Հրատից.	Աբ.	Ճեմաղիլեկկէ.
8 Օրաստու.	Մուստայր. 1	Իլուլ	Ճեմաղիլատեր.
9 Սեպտեմբեր	Հուրի	Փշրին կամ Անթանի.	Ռէճնար.
10 Հոկտեմբեր.	Սահմի.	Մարտիկան կամ Բուլ.	Շապան.
11 Նոյեմբեր.	Տրէ.	Բառղև.	Ռեմեզան.
12 Դեկտեմբեր.	Բաղդաց.	Փէրէթ.	Շեկիկալ

# ՀԱԻԵՆՈՒԱԾ

ԳՍՇ ՄԻՒԹԱՐԻ» ընտիր և բարոյական  
առակների թարգմանութեանս ընթերցողներին  
մեր Հայոց եկեղեցւոյ պատմութեան վերաբեր-  
մամբ մի ամենահամառօտ տեղեկութիւն տա-  
լու համար բարւոք համարեցինք հարստացնել  
գիրքը այդ յաւելուածով:

Խորեն + ահ. Սիւրբաբէճեանց:

Բաղու:



120

141

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փրկչական  
Թիւ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ, ԵՊԻՍԿՈՊՈՍ-  
ՆԵՐ, ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԳՆԵՐ.

## Հիմնադիրներ:

- 30 Յիսուս քրիստոս-Աստուծոյ Արդին.
- 30 Թովմաս Առաքեալ.
- 32 Թադէոս Առաքեալ.
- 33 Սիմոն Կանանացի Առաքեալ.
- 52 Եղիշէ աշակերտ.
- 60 Ստաթէոս աշակերտ.
- 65 Բարթուղիմէոս առաքեալ.
- 66 Յուդայ Թադէոս-Ղերէոս առաքեալ.

## Եպիսկոպոսներ:

- 33 Աղզէ Եղեփայում.
- 40 Զաքարիայ Արտազում.
- 41 Թէոփիլոս Կեսարիայում.
- 67 Կուճնի Սիւնիք.
- 90 Բարեկաս Սիւնիք.
- 110 Բարսումա Եղեփա.
- 160 Զոթիկոս Հայոց Կումանա.
- 210 Աղէքսանդր Կեսարեա.
- 251 Փիրմիլեանոս Կեսարեա.
- 253 Ակակիոս Տիգրանակերտ.

254	Մեհրուժան Մեծ Հայքում.	
260	Արքեդայոս Միջակիա.	
272	Կղենէոս Կեսարիա.	
285	Աթանազինէս Սերաստիա.	
292	Ղևոնդիոս Կեսարիա.	
<b>Կաթուղիկոսներ:</b>		
302	Գրիգոր առաջին, Լուսաւորիչ	30
332	Արիստակէս առաջին	7
335	Վրթանէս Գրիգորեան	15
356	Յուսիկ Վրթանէսեան.	6
362	Փառներսէհ Աշտիշատից	3
<b>Պատրիարքներ և Կաթուղիկոսներ:</b>		
364	Ներսէս առաջին, Մեծ Պարթև	20
384	Շահակ Մանազկիրտացի	3
386	Զաւէն Մանազկիրտացի	1
387	Ասպուրակէս Հարբացի	3
390	Սահակ Ա. Մեծ Պարթև	51
441	Յովսէփ Ս. Սիւնեցի	12
452	Միլիտէ Մանազկիրտացի	5
457	Մովսէս Առաջին Մանազկիրտացի	8
465	Գիւտ Արահեղացի	10
475	Քրիստափոր Ա. Արծրունի	5
480	Յովհան Ա. Մանգակունի	6
487	Բարկէն Ոթմացի	5
492	Սամուէլ Արծկէացի	10
502	Մուշէ Աբաբերացի	8

510	Սահակ երկրորդ Ուղիայեցի	5
515	Քրիստափոր երկրորդ Բաղրևանդացի	6
521	Ղևոնդ Եռասուեցի	3
524	Ներսէս երկրորդ Աշտարակեցի	9
533	Յովհաննէս երկրորդ Սիւնձեղնացի	17
551	Մովսէս երկրորդ Եղևվարդացի	44
594	Աբրահամ առաջին Աղբաթանեցի	23
600	Յովհաննէս երրորդ	16
617	Կովիտաս Աղբեցի	8
625	Քրիստափոր երրորդ Ապահունեան	3
628	Եզր կամ Եզրաս Նզեցի	11
640	Ներսէս չորրորդ Շինող	21
661	Անաստաս Արկուռեցի	6
667	Խարայէլ Վանանդեցի	10
677	Սահակ երրորդ Արքունաշինացի	26
703	Եղև Արծիշեցի	14
718	Յովհան չորրորդ Օձնեցի	11
729	Դաւիթ առաջին Արամնացի	12
741	Տրդատ առաջին Վանանդացի	23
764	Տրդատ եկրորդ Գասնաորեցի	3
767	Սիոն Բաւոնեցի	8
775	Եսայի Նզեցի	13
788	Ստեփաննոս առաջին Դունեցի	2
790	Յովաբ Դունեցի վեց ամիս	
791	Սաղովմոն Գառնեցի	1
792	Գէորգ առաջին Հոյլորբուկ	3
795	Յովսէփ եկրորդ Կարլձ.	11
806	Դաւիթ երկրորդ Կահալեցի	27
833	Յովհաննէս Հինգերորդ Ովայեցի	22

854	Զաքարեա առաջին Կոտայեցի	—	—	21
876	Գէորդ երկրորդ Գառնեցի	—	—	21
897	Մաշտոց Եղիվարդեցի Եօթն ամիս	—	—	
897	Յովհաննէս վեցերորդ Պատմաբան	—	—	27
925	Ստեփաննոս երկրորդ	—	—	1
926	Թէոդորոս առաջին	—	—	10
936	Եղիշէ առաջին	—	—	7
943	Անանեա Մոկացի	—	—	22
965	Վահան Սիւնեցի	—	—	5
970	Ստեփաննոս երրորդ Սեանեցի	—	—	2
972	Խաչիկ առաջին Մոկացի	—	—	19
992	Սարգիս առաջին Սեանեցի	—	—	27
1019	Պետրոս առաջին Գետադարձ	—	—	40
1058	Խաչիկ երկրորդ	—	—	6
1065	Գրիգոր երկրորդ Վկայասէր	—	—	40
1082	Բարսեղ առաջին Անեցի	—	—	24
1113	Գրեգոր երրորդ Պահլաւունի	—	—	53
1166	Ներսէս չորրորդ Շնորհալի	—	—	7
1173	Գրիգոր չորրորդ Տղայ	—	—	20
1193	Գրիգոր Հինգերորդ Գահավէժ	—	—	1
1195	Գրիգոր վեցերորդ Ապիրաս	—	—	7
1202	Յովհաննէս Եօթներորդ Մեծաբարոյ	—	—	18
1203	Դաւիթ երրորդ	—	—	3
1220	Կոստանդին առաջին Բարձրբերդացի	—	—	47
1268	Յակոբ առաջին Կլայեցի	—	—	19
1287	Կոստանդին երկրորդ Կատուկեցի	—	—	3
1290	Ստեփաննոս չորրորդ	—	—	4
1294	Գրիգոր Եօթներորդ Անաւարդեցի	—	—	13
1307	Կոստանդին երկրորդ, Կրկին	—	—	16

1323	Կոստանդին Գ. Լամբրոնացի	—	—	11 4
1327	Յակոբ Բ. Սսեցի	—	—	14
1341	Մխիթար Գռնեցի	—	—	13
1355	Յակոբ Բ. Կրկին	—	—	3
1359	Մեսրոպ Արապեցի	—	—	13
1372	Կոստանդին Չորրորդ	—	—	21
1374	Պողոս Առաջին	—	—	4
1378	Թէոդորոս երկրորդ	—	—	18
1396	Կարապետ Ա. Կեղեցի	—	—	21
1398	Դաւիթ Չորրորդ	—	—	4
1402	Կարապետ երկրորդ	—	—	7
1409	Յակոբ երկրորդ	—	—	2
1411	Գրիգոր Ը. Խանձոխտա	—	—	7
1418	Պողոս Բ. Արարատեցի	—	—	12
1430	Կոստանդին Ե. Վահկացի	—	—	9
1439	Յովսէփ Գ. Սսեցի	—	—	1
1440	Գրգոր Թ. Մուսաբէգեան	—	—	1
1441	Կիրակոս Վերապեցի	—	—	21
1443	Գրիգոր Ժ. Մակուեցի	—	—	18
1461	Զաքարեա Բ.	—	—	1
1462	Արիստակէս Բ.	—	—	4
1466	Սարգիս Բ.	—	—	24
1490	Արիստակէս Գ.	—	—	8
1498	Թադէոս Առաջին	—	—	5
1503	Եղիշէ Բ.	—	—	12
1515	Զաքարեա երրորդ	—	—	5
1520	Սարգիս երրորդ	—	—	16
1536	Գրիգոր ԺԱ.	—	—	5

1541	Ստեփան Ե. Սալմաստեցի - - - - -	6
1547	Միլբայել Սեբաստացի - - - - -	9
1556	Բարսեղ Երկրորդ - - - - -	10
1569	Գրիգոր ԺԲ - - - - -	4
1573	Ստեփաննոս վեցերորդ Առնջացի - - - - -	2
1575	Թադէոս Երկրորդ - - - - -	9
1584	Առաքել վաղարշապատեցի - - - - -	2
1586	Դաւիթ Հինգերորդ - - - - -	7
1593	Մեղքիսեթ Գառնեցի - - - - -	10
1603	Գրիգոր ԺԳ. Եղեճացի - - - - -	3
1624	Սահակ Զորրորդ Գառնեցի - - - - -	5
1629	Մովսէս Երրորդ Սինեցի - - - - -	3
1633	Փիլիպպոս Աղբակեցի - - - - -	22
1655	Յակոբ Զորրորդ Զուգայեցի - - - - -	25
1680	Եղիազար Անթապեցի - - - - -	9
1691	Նահապետ Եղեճացի - - - - -	14
1707	Աղեքսանդր Առաջին Զուգայեցի - - - - -	8
1715	Աստուածատուր Համատոնցի - - - - -	10
1726	Կարապետ Երրորդ Աւինեցի - - - - -	3
1730	Աբրահամ Երկրորդ Մշեցի - - - - -	4
1734	Աբրահամ Երրորդ Կրեճացի - - - - -	2
1737	Ղազարոս Զահեցի - - - - -	11
1748	Պետրոս Երկրորդ Անթապեցի 10 ամիս - - - - -	-
1751	Մինաս Ակնեցի - - - - -	2
1754	Աղեքսանդր Երկրորդ Կ. Պոլսեցի - - - - -	2
1755	Սահակ Երրորդ Կեղեցի - - - - -	4
1759	Յակոբ Ե. Շամախեցի - - - - -	4
1763	Սիմէօն Երեւանցի - - - - -	17

1780	Ղուկաս Կարնեցի - - - - -	20
1802	Գանիէլ Պայազիտեցի - - - - -	6
1810	Եփրեմ Երեւանցի - - - - -	21
1831	Յովհաննէս Աւթներրորդ Կարբեցի, առաջին Պատրիարք Եջմիածնայ ազատված աթոռում - - - - -	-
1846	Ներսէս Ե. Աշտարակեցի - - - - -	11
1859	Մասթէոս Առաջին - - - - -	6
1866	Գէորգ Զորրորդ, Բուրսացի, որ արդէն փարուճ է Կաթողիկոսական իշխանութիւն - - - - -	-
<p>ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԹԱԴԱՒՈՐՆԵՐ, ԻՇԽԱՆՆԵՐ, ՊԱՏՐԻԱԿՆԵՐ, ԿԻՒՐԱՊԱՂԱՏՆԵՐ, (ՏԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՍ ԻՇԽԱՆՆԵՐ ՓԱՇԱՆԵՐ):</p>		
<p><b>Արշակունի Թագաւորներ.</b></p>		
1	Աբգար Արշական - - - - -	83
34	Անանէ Աբգարեան - - - - -	4
38	Սանատրուկ - - - - -	30
68	Երուանդ Երկրորդ - - - - -	20
88	Արաշէս Երկրորդ - - - - -	41
129	Սրտաւազդ Երկրորդ - - - - -	2
131	Տիրան Առաջին - - - - -	21
152	Տիգրան Երրորդ - - - - -	42
194	Վաղարշ Տիգրանեան - - - - -	20
214	Խոսրով Առաջին - - - - -	45
259	Պարապ Սիջոյ - - - - -	27
286	Տրդատ մեծ - - - - -	56
344	Խոսրով Երկրորդ - - - - -	9

353	Տիրան երկրորդ	—	—	—	11
363	Սրշակ երկրորդ	—	—	—	18
381	Պապ Սրշակեան	—	—	—	3
384	Վարազդատ	—	—	—	3
486	{ Սրշակ երրորդ Վաղարշակ երկրորդ	—	—	—	2
		—	—	—	1
388	Խոսրով երրորդ	—	—	—	5
392	Վասմաշապուհ	—	—	—	21
415	Շապուհ Պարսիկ	—	—	—	5
422	Սրտաշիր	—	—	—	6
428	Հայոց Սրշակունի թագաւորութեան ջնջումն.				
<hr/>					
<b>Հայ իշխաններ, պատրիկներ և այլն:</b>					
428	Վահան առաջին, Ամատունի և Վարդան առաջին Մամիկոնեան	—	—	—	19
442	Վասակ Սիւնի	—	—	—	10
481	Սահակ առաջին Բագրատունի	—	—	—	1
485	Վահան երկրորդ Մամիկոնեան	—	—	—	26
511	Վարդ Մամիկոնեան	—	—	—	4
518	Մաժէժ Գնունի	—	—	—	30
571	Վարդան երկրորդ Վոքր	—	—	—	7
593	Սմբատ առաջին Բագրատունի	—	—	—	8
601	Դաւիթ Սահառունի	—	—	—	24
625	Վարադաօրոց Բագրատունի	—	—	—	7
632	Դաւիթ կրկին	—	—	—	4
636	Թէոդորոս Ռշտունի	—	—	—	18
644	Սմբատ երկրորդ Բագրատունի	—	—	—	10

654	Համազասպ Մամիկոնեան	—	—	—	5
659	Գրիգոր Մամիկոնեան	—	—	—	24
685	Աշոտ առաջին Բագրատունի	—	—	—	5
690	Ներսէճ Կամնարական	—	—	—	5
695	Սմբատ երրորդ Բագրատունի	—	—	—	9
743	Աշոտ երկրորդ Բագրատունի	—	—	—	15
760	Սահակ երկրորդ Բագրատունի	—	—	—	10
835	Բաղարատ Բագրատունի	—	—	—	14
 <b>Բագրատունի թագաւորներ:</b>  					
859	Աշոտ առաջին	—	—	—	31
890	Սմբատ Առաջին Նահատակ	—	—	—	23
914	Աշոտ երկրորդ Երկաթ	—	—	—	14
928	Սրտա Սմբատեան	—	—	—	24
952	Աշոտ երրորդ Ողորմած	—	—	—	26
977	Սմբատ երկրորդ Տիեզերակալ	—	—	—	13
989	Գագիկ առաջին	—	—	—	30
1020	Յովհաննէս կամ Սմբատ	—	—	—	20
1042	Գագիկ երկրորդ	—	—	—	38
1080	Մեր Բագրատունի թագաւորութեան վերջը:				
<hr/>					
<b>Ռուբինեան իշխաններ:</b>					
1080	Ռուբէն Առաջին	—	—	—	15
1095	Կոստանդին առաջին	—	—	—	5
1100	Թորոս առաջին	—	—	—	23
1123	Լևոն առաջին	—	—	—	15

1144	Թորոս Երկրորդ	—	—	24
1168	Թովմաս Պայլ	—	—	1
1169	Մլեհ Ստեփանեան	—	—	5
1174	Ռուբէն Երկրորդ	—	—	11
1185	Լեօն Երկրորդ Մեծ	—	—	15

**Ռուբինեան թագաւորներ:**

1198	Լեօն Երկրորդ Մեծ	—	—	21
1219	Զապէլ Դշնոյ	—	—	1
1220	Ֆիլիպ Լատին	—	—	2
1224	Հեթում Առաջին	—	—	45
1269	Լեօն Երրորդ	—	—	20
1289	Հեթում Երկրորդ	—	—	4
1293	Թորոս Լեօնեան:	—	—	2
1296	Մմբաս Լեօնեան	—	—	2
1298	Կոստանդին Երկրորդ	—	—	2
1300	Հեթում Երրորդ անգամ	—	—	5
1305	Լեօն Զորրորդ	—	—	3
1308	Օշին Լեօնեան	—	—	12
1320	Լեօն Հինգերորդ	—	—	22
1342	Կոստանդին Երրորդ Լատին	—	—	1
1343	Գուխան Լատին	—	—	2
1345	Կոստանդին Զորրորդ Լատին	—	—	18
1365	Լեօն Վեցերորդ Լատին	—	—	11
1375	Լեօնի գերութիւնը	—	—	—
	Լեօնի գերութիւնից յետոյ բոլորովին վերջացաւ Հայոց թագաւորութիւնը, (Հայերը յարակ-			

ցելով Լատիններին այդպէս վարձադրուեցան.) և եկեղեցին ընկաւ Մահմետականների մանաւանդ Պարսից Տէրութեան տակ, որովհետեւ 1441 թուականում Կաթուղիկոսական աթոռը փոխադրուեցաւ Էջմիածին, ուր արդէն տիրում էր Պարսից ձիհանս շահ թագաւորը. որին յաջորդեցին ուրիշ Շահեր կամ թագաւորներ մինչև Պարսից Ֆաթալիշահ թագաւորը. և արա ժամանակում 1827 թուին Ռուսաց Առաջին Նիկողայոս Կայսրն առաւ Պարսիկների ձեռից Էջմիածինը և Արարատեան բոլոր նահանգները:

Այսպէս ուրեմն Հայոց եկեղեցին իւր Աթուակալի և նոյն իսկ Աթոռ Էջմիածնի հետ՝ անհաւատների բռնաւորութեան տակ 452 տարի տառապանք կրելուց յետոյ (1375—1827 թ.) ընկաւ քրիստոնեայ թագաւորի քաղցր հովանաւորութեան տակ. այդ պատճառով այստեղ յիշվում են մեր եկեղեցւոյ թագաւորների շարքում և Ռուսաց Կայսերներ:

- 1827 Նիկողայոս Առաջին Պողոսեան Ռոմանով.
- 1855 ԱրեֆՍԱՆԴԻ Երկրորդ, որ այժմ թագաւորում է:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ, ԽՈՍՏՈՎԱՆՈՂՆԵՐ,  
ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՍՐԲՈՒՀԻՆԵՐ:

**Առաջին և երկրորդ դարում.**

- 34 Արգար, մեր թագաւոր.
- 37 Արդէ Եպիսկոպոս.

- 49 Թաղէոս Առաքեալ, Սանդուխտ կոչս և 3440 նահատակ զոցս հետ:
- 68 Բարթուղիմէոս առաքեալ, Սանաորկի քոյր Ոգոհի-Տերկնախոս հազարապետ զոցս հետ և ուրիշ շատեր:
- 69 Յուդա Թաղէոս, Եղ/շէ, Ստաթէոս, Կուճի զոցս հետ և ուրիշ շատեր:
- 107 Ոսկիանք հինգ մարտիրոսներ.
- 120 Բարսու մտ Եպիսկոպոս.
- 130 Սուքեանեանք, 18 սուրբեր.

**Երրորդ և չորրորդ դարում:**

- 215 Խորովից նահատակված մարտիրոսներ.
- 287 Աթենաթորոս պատանի.
- 298 Եւստրատիոսեաններ, հինգ մարտիրոս և Աթանազիոնէս Եպիսկոպոս.
- 301 Հռիփսիմեանք և Գայիանեանք, 37 նահատակ.
- 315 Վլասիոս Եպիսկոպոս.
- 317 Սերաստիոյ քառասուն մանկունք.
- 319 Քառասուն և հինգ վրայք Հայոց Նիկոպոլում.
- 333 Գրիգոր Լուսաորիչ.
- 338 Արիստակէս Կաթողիկոս.
- 341 Տրդատ թագաւոր, Աշխէն տիկին և Խորովեղուխա.
- 342 Գրիգորիս Աղուանից Կաթողիկոս.
- 354 Զուլթա քահանայ.
- 356 Վրթանէս Կաթողիկոս.
- 362 Յուսիկ Կաթողիկոս.
- 363 Սանփաննոս Ռ. Ընեցի, 33 ընկերներով.

- 380 Խաղ և Մելիտոս Եպիսկոպոսներ.
- 384 Ներսէս Կաթողիկոս.

**Հինգ և վեցերորդ դարում.**

- 440 Սահակ Կաթողիկոս.
- 441 Մեսրոպ վարդապետ.
- 449 Ատովմանց զօրավարներ, բազմաթիւ զօրքով.
- 450-470 Թաթուլ, Վարոս, Թովմաս, Արբահամ, Խորէն և այլն.
- 451 Վարդանեանք-1036 մարտիրոսներ.
- 454 Ղևոնդեանք-10 մարտիրոսներ.
- 458 Շուշան Վարդանեան.
- 465 Դիզափայտի 3870 մարտիրոսներ.
- 476 Գիւտ Կաթողիկոս.
- 477 Խաչիկ Վարդապետ, հոգեւոտ.
- 481 Եղիշէ Եպիսկոպոս, պատմագիր.
- 482 Սահակ Մարզպան, Վասակ Մամիկոնեան, Սիւնեաց ազգից և այլն:
- 487 Յովհան Մանդակունի.
- 490 Դաւիթ անյաղթ. Երիցակ, Տիառնթաղ, Վահան և այլն.
- 498 Մովսէս Խորենացի.
- 550 Գրիգոր Ռաժիկ.
- 553 Յիզաբբուղա.

**Եօթն, ութ, ինն և ասաներորդ դարերում:**

- 601 Սերատ Մարզպան Բագրատունի.

- 604 Եօթն խոտաճարակներ.  
 693 Դաւիթ Գունեցի:  
 706 Շուշան Կամարական.  
 728 Յովհաննէս Կաթողիկոս Օձնեցի.  
 737 Վահան Գողթնացի  
 786 Սահակ և Համազասպ.  
 808 Սահակ և Յովսէփ Կարնեցիք  
 853 Ատովմանք Եօթն զօրականներ. Գէորգ Ակէացի, Խոս-  
 րով և այլն.  
 855 Ստեփաննոս Կոն և Սմբատ սպարապետ.  
 889 Աշոտ Թագաւոր առաջին.  
 897 Մաշտոց Կաթողիկոս.  
 914 Սմբատ Թագաւոր Առաջին.  
 917 Դաւիթ և Գուրգէն  
 977 Աշոտ Թագաւոր Երրորդ:

**Տասն և մի, տասն և երկու, տասն և  
 երեք, տասն և չորսերորդ դարերում:**

- 1003 Գրիգոր Նարեկացի.  
 1012 Մակար Եպիսկոպոս.  
 1016 Սիմէօն Միայնակեաց.  
 1030 Պետրոս Կաթողիկոս Գետադարձ.  
 1050 Դաւիթ սքանչելագործ.  
 1105 Գրիգոր Կաթողիկոս վկայատէր.  
 1112 Գէորգ վարդապետ Մեղրիկ.  
 1136 Գոհարինեանք-չորս Եղբայրներ.  
 1150 Թէոդորոս Սեբաստացի.

- 1165 Գրիգոր Կաթողիկոս Երրորդ.  
 1170 Գէորգ Աշիկայ.  
 1171 Գրիգոր և Յովսէփ Գունեցիք.  
 1173 Ներսէս Շնորհալի  
 1185 Սարգիս Խաչենեցի.  
 1198 Ներսէս Լամբրոնացի.  
 1200 Վարդենի Կոյս.  
 1204 Թէոդորոս Կեսարացի.  
 1223 Գրիգոր Հաղբակեան  
 1251 Ստեփաննոս Արտամետցի.  
 1252 Յովհաննէս Տաւուշեցի  
 1256 Ստեփաննոս Վանահայր.  
 1262 Զալալ Իշխան.  
 1386 Միքայել Վարդապետ 36 արեղանների հետ.  
 1387 Ստեփան Եպիսկոպոս 2 արեղանների հետ.  
 1390 Աւագ Բաղիշեցի.  
 1391 Եղիսարէթ Արձիշեցի.  
 1396 Զաքարեա Կաթողիկոս Աղթամարայ.  
 1398 Թամար վկայուհի.  
 1399 Խոսրով Գանձակեցի.

**Տասն և հինգ, տասն ու վեցերորդ  
 դարերում.**

- 1403 Մելիքսէթ և Կարապետ.  
 1417 Սահակ Գաւրիժեցի.  
 1418 Յիմար վկայուհի.  
 1420 Վաղին և Զաքարեա.

- 1421 վարդան Դատվանեցի.
- 1424 Թովմաս Պուտրիկեցի.
- 1425 Գրիգոր Խլաթեցի
- 1428 Յակովբ վարդ. Յովնանեանց և Ղազար Բաղիշեցի.
- 1463 Յովհաննէս Տարոնեցի.
- 1471 Ստեփաննոս Բիւզանդացի.
- 1474 Դաւիթ Խարբերդացի.
- 1494 Թորոս Հռոմկլայեցի և Շնորհոր Բաբերդացի.
- 1517 Խաչատուր Կողբացի.
- 1524 Կարապետ Մալատեացի և Պուտախ Ամրեցի.
- 1528 Թորոս Եղեսացի.
- 1533 Հայրապետ.
- 1534 Թադէոս } Սեբաստացիք.
- 1536 Ողջայ. }
- 1567 Պարոն Լոյս Կափացի.
- 1580 Մարգար և Շահրիման Ամրեցիք.
- 1592 Յովհաննէս Կալիսիոպոս Կարնեցի.

**Տասնեօթն տասնութ և տասնիններ-  
րորդ դարերում.**

- 1617 Անդրէաս քահանայ Ազուլեցի.
- 1621 Գրիգոր Արփայեցի
- 1640 Գալուստ քահանայ Երևանցի.
- 1642 Նիկողայոս Ամրեցի.
- 1652 Խաչատուր Ամրեցի.
- 1655-1656 Սիրուն Աւետիք և Մխիթար վանեցիք.
- 1664 Բաղդասար Եւզոկացի.
- 1676 Գրիգոր Տաթևա.

- 1682 Գրիգոր Կարնեցի
- 1691 Թամար Կոյս Գողթնացի,
- 1695 Նիկողայոս Պրուսայեցի:
- 1707 Կովիտաս քահանայ Բիւզանդացի:
- 1772 Յակոբ վարդապետ Բատականց.
- 1788 Յովսէփ Բիւզանդացի:
- 1814 Թաղաւոր Կարնեցի Չմիւռնեայում:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ, ԹԱՐԳՄԱՆԻՉ-  
ՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ:

**Առաջին դարում:**

Թադէոս առաքեալ կանոնադիր:  
Լերուպնայ Եղեսացի պատմագիր:

**Երկրորդ և երրորդ դարերում:**

Արևատոն Փիլլացի, պատմաբան.  
Ուլիպ Անիի քուրմ, պատմագիր.  
Յուլիոս Ափրիկանոս, պատմագիր.  
Փիրմիլիանոս Կալիսիոպոս, պատմագիր.  
Բարդեղան Եղեսացի, պատմագիր.

**Չորրորդ դարում:**

Գրիգոր Լուսուորիչ ճատագիր.  
Ագաթանգեղոս պատմաբան,  
Ջենոր Գլակ պատմաբան:

Յակոբ Մծբնացի, Ճառագիր  
 Բիւզանդ փաստոս, պատմաբան.  
